



# ՋՄԻԱԾԻՆ



196



ԼԲ  
ՏԱՐԻ



# ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ԱՄՍԱԳԻՐ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԱԹՈՌՈՒՅ  
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Կոմիտաս

1975



ՀՐԱՄԱՆԱԻ

**Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ**

ՎԵՂԱՓԱՌ ԵՒ ՍՐՔԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ  
ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ  
ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ԸՆՈՐՀԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ԱՍՈՂԻԿ ՂԱԶԱՐԵԱՆԻՆ, ԲԱՐԵՋԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ  
ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ԻՐԱՔԻ, ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ  
ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ, ՈՂԶՈՐՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Փառք կու տանք Աստուծոյ ամենակալին, որ Իր սուրբ հովանիին տակ  
սպասնով ու պայծառ կը պահպանէ մեր սուրբ եկեղեցին՝ իր նուիրապե-  
տական Աթոռներով, իր եկեղեցիներով ու հաւատացեալ ժողովուրդով, ի  
Հայաստան և ի սփիւռս աշխարհի:

Այս մխիթարական իրականութիւնը կը պարտինք նաև մեր եկեղեցոյ  
սպասատրներուն, որոնք կանգնած կը մնան իրենց նուիրական կոչումին  
բարձրութեան վրայ՝ իբրև հոգևոր մշակներ և ժողովուրդի առաջնորդներ:

Մեր օրերու այդ նուիրեալներու շարքին՝ մեր աագ հոգևորականներէն  
մին է Ձերդ Սրբազնութիւնը իբրև անձնագոհ ու հաւատարիմ սպասատր  
եկեղեցոյ, իբրև արի և հեզահամբոյր հովիւ ժողովրդեան, իբրև անձանձ-  
րոյթ սղօթող ու գործող ի շինութիւն Մեր գաւակներու հոգևոր կեանքին:

Յիշատակութեան արժանի կը գտնենք յատկապէս աւելի քան տասը  
տարիներու Ձեր խաղաղ ու շինարար գործունէութիւնը ի գլուխ թեմին հայոց  
Իրաքի, սիրուած ու գնահատուած թէ՛ եկեղեցական իշխանութեանց, թէ՛  
համայն հաւատացեալներու կողմէ:

Իբրև Հայրապետը և հոգևոր եղբայրը Ձեր, սրտանց կ'ողջունենք ու կը  
գնահատենք աւելի քան քառասուն տարիներու Ձեր անբասիր ծառայութեան  
վաստակը և ընդատաչելով Իրաքի պատուարժան թեմական խորհուրդի  
վերջին երկու տարիներու կրկնակի խնդրանքներուն, Ձեզ կը շնորհենք


ԱՐՔՈՒԹԵԱՆ պատիւ, աղօթքով ջերմագին որ Տէրը Ձեզի պարգևէ կեանքի ու աշխատանքի երկա՛ր, երկա՛ր տարիներ ևս, որպէսզի Դուք նոր ներշնչումներով ու վերանորոգումած եռանդով շարունակէք Ձեր առաքելութիւնը, յառաէլ շէնութիւն ու պայծառութիւն մեր սուրբ եկեղեցոյ և ի միութարութիւն Իրաքի մեր հաւատաւոր ժողովուրդին:


«Եւ դուք իբրև զվէճս կենդանիս շինիք տաճար հոգևոր, յանարատ քահանայութիւն, մատուցանել զհոգևոր պատարագս հաճոյս Աստուծոյ, ի ձեռն Յիսուսի Քրիստոսի» (Ա Պետրոս Բ 5). ամէն:

*Արք. Գ. Գ. Գ. Գ.*

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տոսա կոնդակս ի 12-ն հոկտեմբերի  
1975 փրկչական ամի,  
և ի տումարիս հալոց ՌՆԻԴ,  
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի  
ՀՄՐ. 815





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ  
ԿԱՐԱՊԵՏ ՍՅՈՒԼԱՀՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԶԻ  
ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԿԱՐԱՊԵՏ ՍԻԼՎԱՀԵԱՆԻՆ,  
ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ,  
ՈՂՋՈՐՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Աստուծոյ ողորմութեամբ սփիւքի տարածքի վրայ ապրող մեր եկեղեցոյ զաւակները ամօր կանգնած կը մնան իրենց նախնեաց լոյս հաւատքին և աւանդութեանց վեմին վրայ, վառ պահելով ոգին հայկականութեան:

Մենք խորապէս մխիթարուած ենք այս իրողութեամբ և ջերմապէս կը գնահատենք բոլոր Մեր հաւատացեալ զաւակները, որոնք դրոշակակիրը և առաջնորդները կը հանդիսանան այդ ոգիին:

Մեզի քաջ յայտնի է որ Դուք ևս կը պատկանիք այդ ընտրեալներու հոյլին: Ձեր ամբողջ կեանքը լուսատր վկայութիւն մըն է տքնաջան աշխատանքի և անսակարկ ծառայութեանց՝ նուիրուած մեր սուրբ եկեղեցոյ պայծառութեան, հայ դպրութեան տարածման և ազգային-հայրենասիրական ծրագիրներու կենսագործման:

Երբեք մոռացութեան պիտի չտրուի Ձեր եռանդուն գործունէութիւնը իբրև Այնթապցիներու միութեան նախագահի, որով հնարատր դարձաւ մայր երկիրը օժտել արդիական մեծարժէք գործարանով մը՝ Նոր Այնթապի մէջ:

Արդ, ուրախ ենք ընդառաջելու տիրախնամ թեմիդ առաջնորդ տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանի 20 սեպտեմբեր 1975 թուակիր միջնորդագրին և ի գնահատումն եկեղեցաշէն ու հայրենանուէր Ձեր վաստակին,

Ձեզ պարգևատրելու և Գրիգոր Լուսատրչի շքանշանով, աղօթքով արտաբույս որ բարին Աստուած Ձեզի շնորհէ ևս երկար տարիներ, շարունակելու համար Ձեր օգտաշատ գործունէութիւնը, որ պատիւ կը բերէ Ձեր անձին և բոլոր այնքապցի Ձեր հայրենակիցներուն:

Բիր օրհնութի՛ւն Ձեզի և Ձեր պատուական ընտանիքին:

Ողջ լեռուք զօրացեալ սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տառնէ և ի Մէնջ. ամէն:

*Գրիգոր Լուսատրչի*

**ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տառ կոնդակս ի 6-ն հոկտեմբերի  
1975 փրկչական ամի,  
և ի տումարիս հայոց ՌԵՆԻԻ,  
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի  
ՀՄՐ. 812





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ  
ԱՆԴՐԱՆԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԶԻ  
ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՆԴՐԷԱՍԵԱՆԻՆ,  
ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ,  
ՈՂՋՈ՛ՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Մեզի խոր մխիթարություն կը պատճառէ իրողութիւնը որ հայ սփիւքի տարածքի վրայ ունինք հոյ՛ մը արժանատր Մեր գաակներու, որոնք առաջնորդող ոգի կը հանդիսանան Մեր պանդոխտ ժողովուրդին:

Այդ հոյ՛ին առաջին շարքերուն վրայ կը գտնուիք նաև Դուք՝ Ձեր քառասուն և հինգ տարիներու վաստակով, իբրև տաղանդատր գրող, քաջակորով հրապարակագիր և ամբասիր հասարակական գործիչ:

Մեզի քաջ ծանօթ է երկար տարիներու Ձեր տքնաջան աշխատանքը, նուիրուած՝ մեր ժողովուրդի հոգևոր ու մշակութային ժառանգութեանց արժեւորման ու տարածման, և ազգային-հայրենասիրական ազնի գաղափարներու պաշտպանութեան:

Սփիւքի հայ կեանքի հորիզոնի վրայ Դուք այսօր պայծառ անձնատրութիւն մը կը և բարոյական հեղինակութիւն մը, գնահատուած ու սիրուած բոլորէն:

Ձեր ծննդեան վաթսունամեակի և գրական-հասարակական գործունէութեան 45-ամեակի տօնակատարութեանց երջանիկ ստօի սիրով է որ կ'ընդառաջենք թեմիդ բարեխնամ առաջնորդ տ. Վաչէ եպիսկոպոս Յովսէփեանի միջնորդութեան և ի գնահատումն Ձեր ազգանուէր վաստակին Ձեզի կը շնորհենք Ա կարգի շքանշանը սուրբ Գրիգոր Լուսաւորչի, մաղթելով որ երկար տարիներ զայն կրէք Ձեր բարի ու արի սրտին վրայ և միշտ

ներշնչուած, միշտ աւիւնով ու կորովով լի՝ շարունակէք Ձեր լուսաւոր սուս-  
քելութիւնը հայ ժողովուրդի կեանքին մէջ:

Սուրբ Էջմիածնէն, որուն ամենահարազատ ու սիրեցեալ զաւակն էք,  
բիր օրհնութիւնն Ձեր վաստակին ու Ձեր պատուական ընտանիքին:


Ողջ լերուք զօրացեալ սուրբ Հոգով և յաւեւ օրհնեալ ի Տաւոնէ և ի  
Մէնջ. ամէն:

*Գալուստի*

**ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուա կողակա յ-Յ-ն հոկտեմբերի  
1975 փրկչական ամի,  
և ի տումարիս հայոց ՌՆՆԻ,  
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի  
ՀՄՐ. 813





ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՇՈՋԱՊԱՏԱՎԱԾ ԱՐԵՎԱՐՏԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅ ԵՎԻՈՒՆՑԻՆԵՐԻ ՀՈՐԵՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՆ  
ԿԵՐԱԿԱՑԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՎ. ՓԱՐԻԶ, 1975 թ. ՀՈՒՆԻՍԻ 18



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՎԵՀԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ  
ԵՐՎԱՆԻ ՏԵՄԻՐՃՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ  
ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԵՐՈՒԱՆԻ ՏԵՄԻՐՃՅԱՆԻՆ,  
ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՇՆԻ,  
ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Յոյժ մխիթարական է Մեզ հաստատել թէ հայ ափիոքի տարածքի վրայ մեր ժողովուրդը վառ կը պահէ իր նախնեաց հաւատքը և հայ դպրութեան ջանք, նոր սերունդներու հոգիներուն բաշխելով լոյսը սուրբ Աւետարանին և հայ մշակոյթին:

Այդ փրկարար առաքելութեան կենսագործումը մե՛ծ չափով կը պարտինք նաև այն գիտակից ու ազնի հայորդիներուն, որոնք անսակարկ կերպով իրենց բարոյական ու նիւթական միջոցներով շէն կը պահեն մեր աղօթքի տունները և կրթական հաստատութիւնները:

Այդ ընտրեալներու հոյլին կը պատկանիք նաև Դուք, յարգելի Տիար, Ձեր երկար տարիներու շինարար ու հոգատար գործունէութեամբ:

Ձեր անուան բարձրացող հայ վարժարանը ի Պէյրութ և Ձեր բազում նուիրաբերումները և հանրօգուտ գործունէութիւնը պատիւ կը բերեն Ձեզի և Ձեր գերդաստանին:

Յիշատակութեան արժանի է նաև Ձեր հոգատարութիւնը ի պայծառութիւն Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի:

Իբրև բոլորի կողմէ ճանչցուած ու գնահատուած ազգային բարերարի, Մենք սոյն կոնդակով Ձեզի կը բերենք Մեր հայրապետական օրհնութիւնը և կը պարգևատրենք Ձեզ ս. Գրիգոր Լուսաւորչի շքանշանով, աղօթքով սրտաբոխ ու Տէրը Ձեզի պարզէ կենաց երկա՛ր տարիներ ևս, ի կատարումն Ձեր բոլոր ազգանուէր իղձերու:

Թող Աստուած մնայ Ձեզի միշտ օգնական և պահէ-պահպանէ Ձեր կեանքը ընտանեկան երջանիկ Ձեր յարկին տակ, շրջապատուած գուրգուրանքովը Ձեր հարազատներուն և սիրելիներուն և երախտագիտական զգացումներովը մեր ժողովուրդի:


Շնորհք և խաղաղութիւն Տեսուն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ, այժմ և յաիտեան. ամէն:

*Վաչագան*

**ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ**

Տուա կոնդակս ի 10-ն հոկտեմբերի  
1975 փրկչական ամի,  
և ի տունարիս հայոց ՌՆԻԻ,  
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի  
ՀՄՐ. 814





## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Հոկտեմբերի 2-ին, հինգշաբթի.**—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեցին Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ և Արգենտինայի հայոց առաջնորդ տ. Բարգեն արքեպ. Ապատյանը և Ալեքսանդրիայի ս. Պողոս-Պետրոս եկեղեցու քարոզիչ տ. Զավեն եպս. Զինչիկյանը:

\* \* \*

**Հոկտեմբերի 4-ին, շաբաթ.**—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեցին Իրաքի հայոց առաջնորդ տ. Ասողիկ եպս. Ղազարյանը և Իրաքի հայ կաթողիկե համայնքի առաջնորդ գերապայծառ տ. Հովհաննես արքեպ. Գասպարյանը:

\* \* \*

**Հոկտեմբերի 5-ին, կիրակի.**—Գ. կիրակի զվեցի ս. Խաչի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մուսիկ արդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եւ ծաւնիցեն, զի դու ես Աստուած միայն, որ փառաւորեալ ես ի վերայ ամենայն Տիեզերաց» բնարանով:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

\* \* \*

**Հոկտեմբերի 6-ին, երկուշաբթի.**—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է այցելում Նյու-Յորքի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու տիկնանց միության անդամուհիներից բաղկացած մի խումբ:

Հարգելի տիկնանց բարեհաճում է ընդունել Վեհափառ Հայրապետը և տալ նրանց Իր հայրական օրհնությունը:

Նյու-Յորքի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու տիկնանց միության ատենապետուհի տկն. Մարեկի Գալպայանն այս ուրախ առիթով բոլորի անունից արտի ջերմ խոսք է ասում՝ ուղղված Վեհափառ Հայրապետին.

«Վեհափառ Տեր,

Մեր խումբը Նյու-Յորքի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվո տիկնանց միության անդամուհիներն են: Մենե ոմանց համար սսիկա մեր առաջին այցելությունն է: Բոլորս ալ տպավորված և հուզված ենք այս պահուն: Տարիներու մեր փափաքը և երազը իրականություն է դարձած այսօր:

Մեր կենդանի աչքերով կոտեսներք և

կապիճը այն բոլորը, որոնց մասին լսած էինք ուրիշներու կողմէ: Չորեք փորձառություն մըն է ապիկա մեզի համար, որուն բարերար արդյունքները պիտի մնան մեզի հետ, մինչև մեր կյանքի վերջը:

Ներկա Հայաստանը խարխիւն է մեր ազգային գոյատևման, իսկ ս. Էջմիածինն ալ անվիճելի հոգևոր կեդրոնը Հայաստանայաց եկեղեցւո: Մեր այցելությունը ավելի կգորացնէ մեր հոգիներուն և մտքերուն մեջ այս երկու ճշմարտությունները:

Մեր վերադարձին ոչ միայն պիտի պատմենք մեր բարեկամներուն և զավակներուն մեր տեսածներուն մասին, այլ բաժնեկից պիտի ընենք զանոնք մեր համոզումներուն և հավատքին:

Վեհափառ Տեր, օրհնեցեք մեզի որպէսզի մենք գորացած, կարենանք շարունակել մնալ մեր հավատքին ու համոզումներուն մեջ և մանավանդ կատարել մեր առաքելությունը ուր ուր կարիքը տեսնվի աւոր»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը Իր ջերմ գնահատանքն է հայտնում ներկաների եկեղեցասիրության և հարեմասիրության և մանավանդ տիկին Մ. Գալպէջյանի արտագին արտահայտությունների համար ու օրհնում նրանց եկեղեցանկեր աշխատանքները:

Վերջում բոլոր ներկաները աջահամբույրով ստանում են Վեհափառ Հայրապետի օրհնությունը և հրաժեշտ տալիս Նորին Սրբությանը:

**Նույն օրը** Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել նաև Սովետա-արգենտինյան բարեկամության ընկերության քարտուղար Գեռշման Խորխեիին:

**Հոկտեմբերի 7-ին, երեքշաբթի.**—Այսօր Վեհաբանում տեղի է ունենում Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը՝ նախագահությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

Նիստին հրավիրվում են նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ և Արգենտինայի հայոց առաջնորդ տ. Բաբգեն արքեպ. Ապատյանը, Իրաքի հայոց թեմի առաջնորդ տ. Ասողիկ եպս. Վազարյանը և Ալեքսանդրիայի ս. Պողոս-Պետրոս եկեղեցու քարոզիչ տ. Զալվեն եպս. Չինչիկյանը:

Վեհափառ Հայրապետը, հանուն Գերա-

գույն հոգևոր խորհրդի, ջերմորեն ողջունում է արբազանների ներկայությունը և բարի գալուստ մաղթում:

Այնուհետև խոսք ստեղծվում տ. Բաբգեն, տ. Ասողիկ, տ. Զալվեն արբազանները համառոտակի խոսում են իրենց թեմերի եկեղեցական, մշակութային գործունեության և ապագա հոգևոր-կրթական կյանքի հենանկարների մասին:

**Հոկտեմբերի 8-ին, չորեքշաբթի.**—Այսօր Վեհաբանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթը, որին ներկա է լինում նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Հավաքույթի ընթացքում «Թուրքիայի արևելյան շրջանների ներկա կացության մասին» զեկուցումով հանդես է գալիս ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Դիարբեքիի և ողջ Անատոլիայի հայոց հոգևոր հովիվ տ. Կիրակոս քին. Թորատրյանը:

**Հոկտեմբերի 11-ին, շաբաթ.**—Սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոց՝ Մեսրոպայ, Եղիշէի, Մովսիսի Բերթողին, Դաթի Անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացուն և Ներսիսի Կլայեցուն:

Այսօր Օշակյանի ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում մատուցվում է ս. պատարագ՝ ի հիշատակ Թարգմանչաց վարդապետների: Պատարագում է Աշտարակի ս. Կարմրավոր եկեղեցու հոգևոր հովիվ տ. Կարապետ քին. Հովհաննյանը:

**Հոկտեմբերի 12-ին, կիրակի.**—Ե կիրակի զկնի ս. Խաչի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Զալվեն եպս. Չինչիկյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Որ զգիտությիւն Բո զերկնային եւ զհոգևոր իմաստութիւն արմատապէս ծառայեցեր զեկեղեցիս Հայաստանեայց ի ձեռս սրբոց Թարգմանչաց» (շարական) բնաբանով:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

**Նույն օրը, ժամը 14-ին,** Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել շուրջ 50 հոգուց բաղկացած ստանբուլահայ ուխտավորների:

Հանուն ուխտավորների Վեհափառ Հայրապետին ուղղված արտի ջերմ խոսք է ասում տիար Կարպիս Ուղուրյանը.

«Վեհափառ Տեր,

Ամեն ազգ, ամեն հավաքականություն ունի իր սրբությունները, իր նվիրական արժեքները որոնք իր հավատքը, իր տեսականը և հույսը կիրքիրդանշեն, կյանքը կիմաստավորեն, թե ու սլացք կուտան իր հոգիին:

Աշխարհացրիվ հայուն համար ալ հավատքի անառիկ բերդ մը, աստվածային տեսիլքի մը հավերժացումը և իր հույսերուն մշտահոս աղբյուրն է ս. Էջմիածինը:

Ինչ որ ալ ըլլան իր ցավերը կամ նեղությունները, հույսի ճամբան մը միշտ պիտի լուսավորեն իր ներաշխարհը, որքան առեն որ իր հոգեկան հորիզոնին վրա կանգուն մնա իր այս լուսաբերը և գերագույն ապաստանը:

Ու մենք այսօր իբր երկյուղած ու ջերմեռանդ ուխտավորներ եկած ենք հաղորդվելու այս սուրբ կեդրոնին ուր կորոպիե ցեղին սիրտը: Պայծառացած են մեր հոգիները, վերանորոգված են մեր հույսերը, խանդն ու եռանդը. նոր կենսունակությամբ և թանկագին հիշատակներով պիտի վերադառնանք մեր երկիրը:

Ու այս լուսածիր հիշատակներուն ամենն շողշողունը պիտի ըլլա այս անմոռանալի պահը ուր Ձեր վեհ Անձին պատկերը քանդակված պիտի մնա մեր արտերուն մեջ:

Հայ ազգն ու եկեղեցին բարեբախտ են Ձեր Վեհափառության նման իմաստուն և գերազնիվ հովվապետ մը ունենալուն համար, ու մեր արտաբուխ և ամենաջերմ մտղթանքն է որ երկար և արփալետ տարիներու ընթացքին հայ ազնիվ հոտը Վեհի շնորհատու մականին ներքև իր պատմական բարեշքումի գծով առաջնորդվի դեպի հոգեկան մշակույթի բարձունքները:

Որդիական խոր ակնածանք մատչիմքի համբույր ս. Աջոյդ»:

Հանուն ստամբուլահայության այնուհետև հետևյալ խոսքով իր արտի հույզերն է արտահայտում նաև Արթուր Մյուսայյուշյանը.

«Վեհափառ Տեր,

Այսօր, սա պահուս, Ձեր դիմաց ունիք արտեր, որոնք մեկ ուրիշ հուզումով, մեկ ուրիշ երկյուղածությամբ կբարբախին՝ համակարգ ու ներդաշնակ նվագի մը, սրբասացության մը պես:

Անոնք իսթանպուլահայերու, Թուրքիա բնակող Ձեր որդիներուն արտերն են, աշխարհի չորս ծագերեն հոս հասնող ուխտավորներեն բոլորովին տարբեր, բոլորովին ուրիշ կերպ, նույնիսկ անբացատրելի՝ կարոտով, սիրով և պաշտամունքով լեցուն են՝ հանդեպ ս. Էջմիածնի Մայր տաճարին, հանդեպ Հայրապետական Աթոռին և անոր շնորհագարդ Գահակալին:

Մանավանդ որ, մտավոր անցյալին մեջ,—թեպետ տխուր պարագայի մը բերմամբ,—Ձերդ Վեհափառության Իսթանպուլ այցելության հիշատակը՝ անմոռանալի փարոսի մը նման միշտ վառ կմնա, ու քանի կհետանա ժամանակի մեջ՝ անոր սիրած լույսը այնքան ավելի քաղցր, այնքան ավելի կարոտակեզ ու ցանկալի կդառնա մեր հոգիներուն:

Իսթանպուլահայ համայնքը, թեպետ գրկված Ձերդ Վեհափառության պարբերական օրհնաբեր այցելություններեն, սակայն միազանգված ու միաբան բոլորված՝ իր հայրախնամ սրբազան պատրիարքին շուրջ, կշարունակե իր խաղաղ ու քարոք կյանքը. մեկ կողմէ՝ իբր օրհնապահ քաղաքացի՝ շինարար ոգիով և աշխատանքով կծառայե իր ծննդավայր երկրին, և մյուս կողմէ՝ ոգի ի բոնին կմաքսոյի և լիստատ նվիրաբերումներով կջանա՝ իր ազգային հաստատությունները, եկեղեցիները, դպրոցները, որքանոցները, մանկանց բույները, աղքատախնամները և մշակութային հիմնարկները կանգուն պահել, շեն պահել ու տնականացնել:

Այս ճիգին մեջ, իր աննկուն կամքին և համառ աշխատասիրության քով, իր մեծագույն ապավենն է՝ նախ՝ քրիստոնեական իր սուրբ հավատքը, ու հետո՝ անսահման փարոսը իր ազգային ավանդներուն, որոնց գերագույն խորհրդանիշն է Ամենայն Հայոց Հայրապետության Միածնաճշ ս. խորանը, ուրկէ Ձերդ Վեհափառության տված պատգամները, ամեն առթիվ կուզան գոտեպնդել, խրախուսել ու ոգևորել բոլոր անխտիր:

Վեհափառ Տեր, այսօր ալ եք մենք եկած ենք հոս՝ մեր հոգևոր կեդրոնը, ս. Էջմիածնի Մայր տաճարը քիչ մը ևս լուսազարդելու և յուրաքանչյուրիս հոգիեն բխող ուխտի մոմերով, կխնդրենք որ հաճիք ընդունել մեր բոլորին որդիական հավատարմության և սիրո վառ զգացումները, և Ձեր հայրապետական օրհնությունը շնորհեք մեզի ու մեր միջոցալ Ձեր թուրքիաբնակ բոլոր հարազատներուն:

Վեհափառ Տեր, վստահ ենք թե մենք՝ իսթանպուլահայերս, իբրև հարազատ որդիներ Հայաստանյայց ս. եկեղեցվո, մեր հատուկ տեղը ունինք Ձեր հայրագորով աղոթքներուն մեջ. կխնդրենք միայն որ աղոթեք նաև՝ որպեսզի անոնք ամենքն ալ արժանի ըլլան օր մը գալու, համբուրելու

Էջմիածնի և խորանը և Ջեր սուրբ Աջը՝ մեզի պես»:

Խորապես հուզված և հոգեպես միախոր- ված վերջում Վեհափառ Հայրապետն Իր հայրական գևահատությանն է արժանաց- նում այս հուզումնալի և գեղեցիկ արուս- հայտությունները և Իր օրհնությունն է տա- լիս բոլոր ուխտավորներին:

Հայոց Հայրապետն Իր օրհնություններն ու ողջույններն է ողարկում և՛ ա. Էջմիած- նից, և՛ հայրապետական Իր սրտից նաև Կ. Պոլսի հայոց պատրիարք տ. Ծնորհք արքեպ. Գալատյանին և ողջ Թուրքիայի հայությանը:

\* \*

**Հոկտեմբերի 13-ին, երկուշաբթի.**—Այ- սօր հյուրաբար Մայր Աթոռ է ժամանում Մոսկվայում նիդեռլանդների թագավորա- կան դեսպան Յա. Լ. Ռ. Հյոդեկուպեր Վան Նիհտելվեխտը՝ իր տիկնոջ հետ:

Հարգելի հյուրին բարեհաճում է ընդու- նել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապե- տը:

Հայոց Հայրապետի և արև. դեսպանի միջև տեղի է ունենում գրույց՝ ջերմ մթնո- յորում:

\* \*

**Հոկտեմբերի 15-ին, չորեքշաբթի.**—Այ- սօր Վեհաբանում տեղի է ունենում միա- բանական հերթական հավաքույթը, որին ներկա է լինում նաև Վեհափառ Հայրա- պետը:

Հավաքույթի ընթացքում գեկուցում է տ. Տիրան արդ. Կյուրեղյանը՝ ներկայացնելով Երեմեկի «Թուրքերի ծագումը» գիրքը:

\* \*

**Նույն օրը,** հրաժեշտ առնելով Մայր Աթոռից և Վեհափառ Հայրապետից, ի- բնեց պաշտոնատեղիին են մեկնում Իրաքի հայոց առաջնորդ տ. Ասողիկ արքեպ. Ղա- զարյանը և Իրաքի հայ կաթողիկե հա- մայնքի առաջնորդ գերապալծստ տ. Հով- հաննես արքեպ. Գասպարյանը:

\* \*

**Հոկտեմբերի 16-ին, Հինգշաբթի.**— Այսօր, հրաժեշտ առնելով Մայր Աթոռից և Վեհափառ Հայրապետից, իր պաշտոնա- տեղին՝ Արգենտինա է մեկնում Հարավա-

լին Ամերիկայի հայրապետական պատվի- րակ տ. Բարգեն արքեպ. Ապատյանը:

\* \*

**Հոկտեմբերի 19-ին, կիրակի.**—Ջ կիրա- կի գկնի ա. Խաչի.

Այսօր Մայր տաճարում ա. պատարագ է մատուցում փոխ-լուսարարապետ տ. Վազ- գեն վրդ. Թադրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ե՛ր գգեցեալ գգրահն արդարութեան, ագոցեալ գոտս պատրաս- տութեամբ աւետարանին խաղաղութեան» (Եփես. Զ. 15) բնաբանով:

\* \*

**Հոկտեմբերի 24-ին, ուրբաթ.**—Այսօր Երևանի հայրապետական վիլլայում գո- մարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը՝ նախագահությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

Սույն նիստում որոշվում է նոյեմբերի 9-ին, կիրակի օրը, հանդիսավորապես նշել հայ մեծ բանաստեղծ և Գերագույն հոգևոր խորհրդի նախկին անդամ, Մայր Աթոռ ա. Էջմիածնի հարազատ զավակ ու հանգուցյալ Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի և ներկա Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա-ի անձնական բարեկամ Ավետիք Իսահակ- յանի ծննդյան 100-ամյակը:

Որոշվեց նաև դեկտեմբերի երկրորդ կե- սին նշել, ըստ Վեհափառ Հայրապետի 1974 թ. մարտ 18 թվակիր սրբատառ կոն- դակի, Ամենայն Հայոց Հայրապետության կիլիկյան շրջանի պատմության փառքի հի- շատակը:

Այս առթիվ կազմվեց հոբելյանական հանձնաժողով, որի կազմում ընդգրկվեցին՝ Արարատյան թեմի առաջնորդական փո- խանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստե- փանյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Հովհաննես Թոփուզյանը և հոգե- վոր ճեմարանի դասախոս Սամվել Անթու- յանը:

\* \*

**Հոկտեմբերի 26-ին, կիրակի.**—Է կիրակի գկնի ա. Խաչի. Գիտ Խաչի.

Այսօր Մայր տաճարում ա. պատարագ է մատուցում տ. Տիրան արդ. Կյուրեղյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ա. Խաչ օգնական հաւատացելոց» (շարական) բնաբանով:

Ա. պատարագին ներկա է լինում Վեհա- փառ Հայրապետը:

\* \* \*  
 Նույն օրը, օրվա մեծ տոնի առիթով, Երեվանի և Հովհաննես Մկրտիչ եկեղեցում և պատարագ է մատուցում Մայր տաճարի փոխ-լուսարարապետ տ. Վազգեն վրդ. Թաղոյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ձի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է» (Ա. Կորնթ. Ա. 18) բնաբանով:

\* \* \*  
**Հոկտեմբերի 27-ին, երկուշաբթի.**—Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Մայր Աթոռ այցելեց շախմատի գծով աշխարհի չեմպիոն Անատոլի Կարպովը:

Հարգելի հյուրին, հանուն Վեհափառ Հայրապետի, Վեհարանում ընդունեց Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը և գրույց ունեցավ նրա հետ:


Սովետական տաղանդավոր գրոսմայտերն այցելեց Վեհարանի պատկերասրահ և հրաժեշտ առավ Մայր Աթոռից լավագույն տպավորություններով:

\* \* \*  
**Հոկտեմբերի 28-ին, երեքշաբթի.**—Այսօր Մայր Աթոռից և Վեհափառ Հայրապետից

հրաժեշտ առնելով Բուխարեան մեկնեց Ալեքսանդրիայի և Պողոս-Պետրոս եկեղեցու քարոզիչ տ. Զավեն եպս. Չինչինյանը՝ Ռումինիայի և Բուլղարիայի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանի հետ, հանուն Վեհափառ Հայրապետի, ներկա լինելու ռումին օրթոդոքս եկեղեցու ավտոկեֆալության 90 և ռումին պատրիարքության հաստատման 50-ամյակներին նվիրված հանդիսություններին:

\* \* \*  
**Հոկտեմբերի 30-ին, հինգշաբթի.**—Այսօր, ժամը 18-ին, Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում Վեհափառ Հայրապետը ներկա եղավ մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանի ծընընդյան 100-ամյակին նվիրված հանդիսավոր նիստին:

Հայոց Հայրապետին ընկերակցում էին Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը և փոխ-լուսարարապետ տ. Վազգեն վրդ. Թաղոյանը:





## ՏԻՐԱՄԱՅՐ ՍԻՐԱՆՈՒՅՇ ՊԱԼՃՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՏԱՐԵԼԻՅՆ

Հոկտեմբերի 4-ին, շաբաթ օրը, լրացավ Տիրամայր Սիրանուշ Պալճյանի մահվան տարելիցը:

Ժամը 16-ին ս. Գալանե վանքի միաբանական գերեզմանատանը, ուր ամփոփված է հանգուցյալ Տիրամոր աճյունը, նրա գերեզմանի վրա կատարվեց հանգստյան կարգ:

Հանգուցյալ Տիրամոր գերեզմանի վրա դրված է օնիքս մարմարից պատրաստված գեղեցիկ տապանաքար՝ հետևյալ արձանագրությամբ.

Աստ. հանգչի  
Սիրանուշ  
Պալճեան  
1884—1974

Մայր  
Տ. Տ. Վազգէն Ա.  
կաթողիկոսի

Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ հանգուցյալ Տիրամոր գերեզմանը շրջապատել են Մայր Աթոռի միաբանության անդամները:

Հոգեհանգստյան արարողությանը ներկա են հասն ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ և Արգենտինայի հայոց սուաջնորդ տ. Բարգեն արքեպ. Ապատյանը, Իրաքի հայոց սուաջնորդ տ. Ասողիկ եպս. Ղազարյանը, Իրաքի կաթողիկե հայոց սուաջնորդ գերապայծառ տ. Հովհաննես արքեպ. Գասպարյանը և ուրիշներ:

Արարողությանը նախագահում է տ. Բարգեն արքեպ. Ապատյանը:

Խորին լուռության մեջ կատարվում է հոգեհանգստյան կարգը, որի ավարտին

«Էջմիածին» ամսագրի խմբագիր և հոգեվոր ճեմարանի ավագ դասախոս Արթուր Հատիտյանը հետևյալ արտառույ խոսքով ոգեկոչում է պայծառ ու անմոռաց հիշատակը հանգուցյալ Տիրամոր.

«Ի՛նչ շուտ անցավ տարին:

Կարծես երեկ լինեք, երբ Վեհաբանը, ողջ մայրավանքը և մեր բոլորի սրտերն ու հոգիները լցված, ողողված էին սիրելի և անմոռաց Տիրամոր ներշնչող ու կենդանի ներկայությամբ, նրա բարության և ազնվության պայծառ լույսով, նրա մայրական հոգատարությամբ ու ջերմությամբ:

Մի տարի է, որ նա չկա. «Հանգեալ ի Տէր», դարձավ սրբություն, հուշ ու հավերժություն:

Եթե մարդկային ամեն ծնունդ պատահականություն է, ապա, ուրեմն, մահը բնության օրինաչափությունն է: Այդ օրինաչափությունը մարդկային կյանքի որ հասակում էլ պատահի, մեծ վիշտ է պատճառում ու հանդիսանում է ծանր կորուստ՝ հարազատների ու բարեկամների համար:

Մի տարի սուաջ ծանր կորուստ կրեց Հայոց Հայրապետը:

Նա կորցրեց աշխարհում ամենաթանկագին էակին՝ Իր անուշ ու անգին մորը:

Մահվան օրինաչափության սուաջ մարդը տարվում է մտածել, որ Աստված միայն մեծ է և հավիտենական: Աստված ամեն տեղ չի լինում և դրա համար Նա երկրի վրա ստեղծել է մայրերին, որոնք Աստծու ներկայությունն են ապրեցնում ընտանեկան հարկերի տակ:

Մարդը կյանքում ինչ պաշտոնի և ընկերային ինչ դիրքի վրա էլ գտնվի և քանի տարեկան էլ լինի, միշտ կարիքն ունի մայրական գորգորանքի, սիրո ու պաշտպանության:

Աստվածորդին՝ Հիսուսը, ևս Իր երկրավոր ողջ կյանքի ընթացքում միշտ զգաց Իր Մոր՝ ս. Աստվածածնի ներկայությունն ու պաշտպանությունը Իր կողքին:

Գողգոթայի բարձունքին, խաչի վրա, երբ Նա Իր արյունն էր թափում մարդկության փրկության և նոր ու արդար մի աշխարհի ստեղծման համար, այդ ծանր ու տագնապալի պահին էլ Նա մտածում էր և հոգում դարձյալ խաչի ստորոտում կանգնած ու իր վշտի մեջ իր սրտից յոթն անգամ խոցված Իր Մոր մասին. և Նրան հանձնում էր Իր սիրելի աշակերտի խնամքին. «Կին դու, ահա որդի քո», իսկ առաջալին պատվիրում էր. «Ահա մայր քո»:

Մարդկության պատմության մեջ, այսպես կոչված, «աստղային ժամեր» ստեղծող բոլոր մեծ հոգիներն ու իմացականությունները կրել են միշտ իրենց մայրերի հոգևոր, բարոյական ազդեցությունն ու ներգործությունը:

Այդ բացառիկ, ինքնատիպ մայրերից մեկն է եղել նաև մեր հանգուցյալ Տիրամայրը, մեկը՝ մեր օրերում Հայոց աշխարհի փափկասուն տիկիներեցից, որն իր միամոր զավակի օրորոցի վրա հակված, մայրական իր անխարդախ կաթի հետ Նրան ջանքեց հավատքի, ազնվության, հայրենասիրության ոգին ու շունչը և մի օր էլ Նրա ձեռքից բռնած իր ամուսնու՝ Աբրահամ Պալճյանի հետ, հայր Աբրահամի հավատքով ու օրինակով, Նրան առաջնորդեց Հայոց Աստծու ս. խորան՝ պատարագվելու եկեղեցու, ժողովրդի ու հայրենիքի համար:

Տիրամայրը եղավ նաև քախտավոր ու երջանիկ մայր՝ «Մայր որդուվ բերկրեալ»:

Նա շուրջ 20 տարի, ս. Էջմիածնում մանավանդ, տեսավ իր Վեհափառ Որդու փառքը, ուրախացավ Նրա հայրապետական հաջողություններով և կիսեց նաև, որպես մայր, Նրա դժվարությունները:

Հանգուցյալը հաճախ, ակնարկելով սիրտքի մեր ազգային-եկեղեցական կյանքում պատահած որոշ դժվարությունները, ասում էր. «Այս բոլորը Վեհափառի օրո՞վ պիտի պատահեր»:

Ոչ ևս է ամենայն հայոց Տիրամայրը, տիպար դաստիարակչուհին, ջերմ ու համարձակ հայրենասերը, գիտակից և կյանքի հարուստ փորձ ունեցող մեծ Տիկինը հայոց, որը ամեն տեղ էր հաչ կնոջ իր բարի սրտով, պայծառ խորհուրդներով ու լավատեսությամբ:

Ամենքը սիրում և հարգում էին նրան և՛ կյանքում, և՛ այժմ էլ՝ մահից հետո:

Այո՛, ոչ ևս է մեր սիրելի Տիրամայրը, բայց նրա քաղցր անունն ու բարի հիշատակը միշտ վառ են այստեղ, ս. Էջմիածնում, իր Վեհափառ Որդու սրտում և բոլոր նրանց մեջ, որոնք ճանաչեցին նրան ու սիրեցին:

Ու ամեն անգամ, երբ մտնում ենք Վեհափառի գլխավոր դարբասից ներս, Վեհափառի այգում Տիրամոր ծաղիկները հիշեցնում են նրան, սիրելի Տիրամորը, ու նրա քաղցր ներկայությունը ապրեցնում մեր երախտագետ սրտում: Թող Տերը լուսավորի նրա բարի ու արդար հոգին և արժանացնի անթառամ Իր փառքին, երկրքի արքայության մեջ:

Թող Տերը երկնային մխիթարությանը պիտի Հայոց Հայրապետի սիրտը, որի մեջ հանգուցյալ Տիրամոր սրտի հետ բաբախում է նաև ողջ հայության երախտագետ սիրտը:

Ժամը 17-ին Տիրամոր մահվան տարելիցի առթիվ Ղազարապատի վանական սեղանատանը հոգեճաշ է տրվում շուրջ 100 հոգու:

Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը մի անգամ ևս ջերմ խոսքերով ոգեկոչում է անմոռաց հիշատակը Տիրամոր:

Բոլոր ներկաները հոտնկալսյա մի բույե լույթամբ հարգում են հիշատակը հանգուցյալ Տիրամոր:

Վեհափառ Հայրապետը «Հոգոց» է արտասանում:


Հոգեճաշի ավարտին Հայոց Հայրապետը շնորհակալության և օրհնության ջերմ խոսք է ասում Տիրամոր մահվան տարելիցի առթիվ բոլորի ներկայության և արտահայտված անկեղծ ու խորը վշտակցության համար, վշտակցություններ, որոնք մի անգամ ևս սփոփեցին Իր վշտակիր սիրտը և թեթևացրին Իր կրած կորստի ծանրությունը:

Հոկտեմբերի 5-ին, կիրակի օրը, հավարտ ս. պատարագի, Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ Տիրամոր մահվան տարելիցի առթիվ:

Խո՛ւնկ և աղո՛թք մեր սիրելի և անմոռանալի Տիրամոր հիշատակին:

Ա. Հ.





Գ Ր Ա Խ Ո Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ  
«ԱՒԱԳ ՇԱԲԱԹ», 208 էջ, ԲԵՅՐՈՒԹ, 1974,  
ՏՊԱՐԱՆ ՏՈՆԻԿՅԱՆ ԵՎ ՈՐԴԻՔ

Ընթերցողի սեղանին է դրված Թուրքիայի հայոց տ. Շնորհք պատրիարքի «Ալազ շաբաթ» հոգեշունչ խորհրդածությունների և ուսումնասիրությունների գիրքը, որն ամբողջացնում է սրբազան հեղինակի «Մեծ պահքի կիրակիներու ոսկի շղթան» և «Գունագեղ կիրակիներ և Հոգեգալուստ» կրոնական մատենաշարը:

Սույն մատենաշարից հրատարակելի են նաև հեղինակի «Տաղաար օրեր» և «Սուրբեր» ուսումնասիրությունները:

Ալազ շաբաթի յոթնակը իր հոգևոր նշանակությամբ և խորհրդով, տերունական տնօրինություններով, աստվածաշնչական ընթերցումներով և սրտագրավ շարականների մեղեդիներով (Ալազ շաբաթվա շարականների կանոնը ամբողջությամբ վերագրվում է ս. Սահակ Պարթևին, «Զայնքաղ շարական», Վաղարշապատ, 1888, էջ 3) Քրիստոսի երկրավոր կյանքի նշանակալից իրադարձությունների ժամանակաշրջանն է հանդիսանում, լրումն ու պսակումը Մարդեղության և Փրկագործության մեծ խորհրդի:

Քրիստոսի «Երկնասար պաշտաման ընթացքը լրացած է, քարոզությանց և հրաշագործությանց շրջանը ավարտած է, յոր կյանքին զոհաբերության պարտքն ալ կատարած է, ամենեն դառնակակիծ ցավոց բաժակը քամած է, յոր մարմնույն ամբողջ արյունն ալ թափած է... ինչ որ աստվածային կարգադրությամբ որոշված էր, ինչ որ մարգարեական գուշակությամբ նախատեսված էր, ինչ որ մարդկության փրկու-

թյան խորհուրդը պահանջած էր» (Մաղաքիա արքեպ. Օրմանյան, «Համապատում», Անթիլիաս, 1953, էջ 916—917):

Չորս Ավետարանները սրտահույզ, անմուսաց էջեր են նվիրել Ալազ շաբաթվա իրադարձություններին, որովհետև, նշում է նաև սրբազան հեղինակը, Ալազ շաբաթը «իր մեջ կհամադրե Հիսուսի կյանքի վերջին ութ օրերու կարևորագույն խոսքերը, գործերը և տնօրենությունները ...

Չարչարանքի և Չարության շաբաթ: Հաղթանակի և Հարության շաբաթ» (էջ 3):

Մարդկության փրկության և մի նոր ու արդար աշխարհի՝ «երկնքի արքայության» ստեղծման տեսակետից «համամարդկային տարողությամբ ծանրաբեռն շաբաթ մըն է Ալազ յոթնակը... սրբազան Տրամայի մը սրտատույ ձևին տակ, հաճախ հեկհեկ ընթացող շարժանկարի մը վերիվայրումներով, կտրվի պատեհությունը հավատացյալին սերտորեն հետևելու իր Փրկչի կյանքի վերջին խորհուրդներուն, ապրելու համար Անոր հետ հուզումի, վիշտի և ուրախության պահեր» (էջ 4):

Արդարև, «այս շաբաթը կամ յոթնակը Ալազ է, Մեծ է, որովհետև մեր Տեր Հիսուս Քրիստոսի փրկարար և քավիչ գործերուն, տնօրինությանց լրումն է, և այս յոթը օրերուն պիտի հաջորդե սուրբ Հարության տոնն հրաշափառ, գարնանագեղ Չատիկն Հայաստանյայց» (Բարգեև կաթողիկոս, «Դասեր Անտարանէն», Անթիլիաս, 1936, էջ 58):

Գրախոսվող սույն հատորը իր մեջ ընդգրկում է հետևյալ տասը գլուխները.

**Գլուխ Ա. Ծաղկազարդ (էջ 5—20).**

Առաջին գլխի պատմություններն ու այս առթիվ կատարված կրոնաբույր խորհրդածությունները նվիրվել են, ըստ Ավետարանների, Քրիստոսի հաղթական մուտքի հիշատակությանը Երուսաղեմ, «Գալուստ Քրիստոսի Աստուծոյ մերոյ յաւանակալ յերուսաղեմ», երբ «դղրդեցաւ քաղաքն անեւայն»:

Ծաղկազարդը կամ, ժողովրդական բացատրությամբ՝ «Ջարգարդար»-ը, հայ եկեղեցու հատուկ անվանում է միայն: Քույր եկեղեցիները սույն տոնի համար գործածում են «Արմաւենեաց կիրակի» բացատրությունը:

Հայ ժողովրդի բարեպաշտիկ զգացմունքների համար Ծաղկազարդը «նոր-նոր ուժով ու կորովով հոգևորապես և կրոնապես կազդուրվելու օր է» (հարգեն կաթողիկոս, անդ, էջ 56), նաև զարնան տոն, «Ջի ահա ձմեռն էանց... ծաղիկք երևեցան յերկրի մերում... ձայն տատրակի լսելի եղև յերկրի մերում, թզենի արձակեաց զբողբոջ իր, որթք մեր ծաղկեալք ետուն զհորս իրեանց» («Երգ երգոց», Գ 11):


Ծաղկազարդը, Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ, նշում է հեղինակը, միաժամանակ «Անոր մեծության ծաղկումն է: Անոր աստվածային հեղինակության պարուրված կոկոնին բացվիլն է, Անոր ցարդ անտեսանելի մնացած փառքի նազազայթումն է» (էջ 5):

Ա. գլխի մեջ, Ծաղկազարդի տոնի կապակցությամբ, սրբազան հեղինակը այս խորհրդածությունների լույսի տակ քննության է առնում նաև Հիսուսի մեսիականության հարցը... «Հիսուս Մեսիան էր», հոգեվոր իմաստով, Փրկիչ ու Ազատարար «համայն մարդկության համար, առանց խրտության ցեղի և դասակարգի, որովհետև, ըստ Հիսուսի, բոլոր մարդերը անխտիր պետք ունենին նման ազատագրումի մը... բարոյական փրկության մը, մեղքի գերութենեն» և «ընկերային նոր կարգի մը» հաստատմանը, որ էր երկնքի կամ Աստծո թագավորությունը» (էջ 9):

Ա. գլխում, սույն խորհրդածություններից հետո, ըստ Ավետարանի պատմության, նկարագրվում է «Հիսուսի արքայավայել հաղթական մուտքը Երուսաղեմ» (էջ 11—15), ժողովրդական խանդավառ արտահայտությունների և «ովանների» մեջ:

**Գլուխ Բ. Դռնբացք (էջ 21—25).**

Ծաղկազարդի տոնի երեկոյան մեր եկեղեցին շքեղ հանդիսությամբ կատարում է **Դռնբացք**-ի արարողությունը, որը, ըստ իր



հոգևոր իմաստի, սերտորեն կապվում է առավոտյան հանդիսության խորհրդի հետ: Ծաղկազարդը «կհիշատակե Հիսուսի հաղթական մուտքը ի քաղաք Երուսաղեմ», իսկ **Դռնբացք**-ը «կպատկերացնե մեր խորհրդանշական մուտքը ի վերինն Երուսաղեմ» (էջ 21):

Մեր նախածնողների՝ Ադամի և Եվայի անհնազանդության մեղքով, ըստ Աստվածաշնչի, դրախտը փակվեց մարդկության առաջ: Դրախտի՝ «Հավիտենական հարկերու դռներուն» փակումը խորհրդանշում են **Դռնբացք**-ի ժամանակ եկեղեցում փակված խորանների վարագույրները:

Քրիստոսի փրկագործության միջոցով բացվեց փակված դրախտը, և մեղավոր մարդկությունը հույսով և վստահությամբ, զղջումով և ապաշխարությամբ, «սղաշական ողբերգությամբ»՝ «բա՛ց մեզ, Տէր, զրոտն ողորմութեան», «իրավունք ստացավ արդարացած հոգևով մունել հավիտենականության երանական հարկերեն ներս» (էջ 23):

#### Գլուխ Գ. Երուսաղեմի տաճարը (էջ 26—81).

Ավագ շաբաթվա առաջին երեք օրերի դեպքերը տեղի են ունենում Երուսաղեմի տաճարի շրջանակում: Ահա թե ինչու գրքի երրորդ գլուխը ամբողջությամբ նվիրված է տաճարի պատմությանը, Դավիթ թագավորի օրերից մինչև Քրիստոսի ժամանակները: Սրբազանը լայն տեղ է հատկացրել իր ուսումնասիրության մեջ Երուսաղեմի տաճարի շինության պատմությանն ու նշանակությանը, ինչպես նաև Հիսուսի ժամանակակից տաճարի բաժանմունքներին, որպեսզի ընթերցողը հստակ գաղափար կազմի տաճարի շրջափակում Քրիստոսի կյանքի և քարոզությունների հետ կապված կարևոր իրադարձություններին, Ավագ շաբաթվա ընթացքում:

#### Գլուխ Դ. Ավագ երկուշաբթի (էջ 82—48).

Սրբազան շաբաթվա առաջին իր շաբաթականների մեջ Ավագ երկուշաբթիից մինչև Ավագ շաբաթ օրերի մեջ խոսեցրել է Աստվածաշնչի ամբողջ պատմությունն ու կարևոր դեպքերը, մարդկության անցյալը, ներկան ու ապագան, աշխարհի ստեղծագործությունից մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը, պատմականորեն ու հոգեպես նախապատրաստելով Քրիստոսի Փրկագործության տևորենության արդարացումը: Այս իմաստով Ավագ երկուշաբթին ս. գրական ընթերցումներով և շաբաթականներով նվիրվել է Արարչագործության խորհրդին՝ «Անեղն ի Հօրե ծնեալ Որդին յանէից գոյացոյց զեղեակքս, զերկնային և զերկրատր էութիւն», մարդու մեղանշմանն ու անկմանը և նրա փրկությանը: Քրիստոսը եկավ «ի խնդիր եղծեալ պատկերին և գտեալ նորոգեաց ի փառս առաջին պատմուճանին» («Չայնքաղ շաբաթական», էջ 175):

Ավագ երկուշաբթի օրը, ժամերգության ժամանակ, ընթերցվում է նաև Հակոբոս և Հովհաննես Զեբեդյան եղբայրների՝ Հիսուսի արքայության մեջ Նրա աջ ու ձախ կողմերում նստելու խնդրանքի ավետարանական հիշատակությունը:

Օրվա խորհուրդն այն է, որ եկեղեցին «կուզէ հիշեցնել թե հավիտենականության մեջ Քրիստոսի հետ ըլլալու համար, պատրաստ պետք է ըլլալ «քմայելու այն բաժակը» գոր Քրիստոս պիտի ըմպեր Ավագ շաբաթվա ընթացքին» (էջ 32):

Ավագ երկուշաբթի օրը տաճարում կատարված կարևոր իրադարձություններից մեկը Քրիստոսի կողմից «տաճարի մաքրագործումն» էր լուսափոխներից և ա-

նելտրականներից, որոնք սրբազանը՝ Աստուծոն տունը, վերածել էին «ալազակների որջերի»:

«Այս մաքրագործումով Հիսուս նախատ առ նախատ եկավ իր ժամանակի մեծագույն շահարար ուժին, այսպես ըսենք՝ դրամատիկության հետ: Ժամանակի մեծագույն դրամատերներ էին տաճարի իշխանները, սաղուկեցիները, որոնց մեծագույն մասը քահանաներ էին» (էջ 41):

Այս ստյոխվ սրբազան հեղինակը խորհրդածում է, որ շահի մոլուցքը, նյութականի սերը, փողի պաշտամունքը պղծել է մարդու մեջ ինչ որ գեղեցիկ է, բարի ու աստվածային, և դրամատիկությունը «արմատն է ընկերային գրեթե բոլոր չարիքներուն: Անիծից այս արմատը կուտարմովի ընկերության մեջ կանների մասն: Ու այդ ընկերային քաղցկեղին ախտանշաններն են բոլոր չարաշահությունները, աղքատությունները, անարդարությունները, ուժիրներն ու պատերազմները» (էջ 42):

Սրբազան հեղինակն այս ստյոխվ հարց է տալիս. ի՞նչ է ուրեմն եկեղեցու դիրքը, այսօր դրամատիկական այս տխուր երկվյուցների դեմ. «Քրիստոնեական եկեղեցին որ ինքզինքը կնկատե Քրիստոսի գործին շարունակողը, եթե չնետալի ընկերության «Տաճարները» մաքրագործելու պայքարին մեջ, Հիսուսի խիզախությամբ և Անոր կորույթով, երբեք պիտի չնկատվի արժանավոր շարունակողը Հիսուսի սուսքելության» (էջ 42):

#### Գլուխ Ե. Ավագ երեքշաբթի (էջ 44—60).

Ավագ երեքշաբթին նվիրված է մարդկային ցեղի շարության, ջրհեղեղով նրա բնաջնջմանն ու մարդկային մի նոր սերնդի սկզբնավորության և Քրիստոսով ազատագրության դրվագների հիշատակությանը:

Հայ եկեղեցին այս օրը կատարում է նաև, ըստ ավետարանական ստակի, իմաստուն և հիմար կույսերի հիշատակը: Օրվա շաբաթականներն էլ ամբողջությամբ նվիրված են հիմար և իմաստուն կույսերի պատմությանը:

Ավագ երեքշաբթի օրը Հիսուսն իր ամբողջ օրը անցկացնում է տաճարում և արտասանում երկու որդիների (Մատթ. ԻԱ 28—32), չար մշակների (Մարկ. ԺԲ 1—12), հարսանիքի սեղանի (Մատթ. ԻԲ 1—14), աքի կնոջ երկու լումայի (Մարկ. ԺԲ 41—44), տալ կայսրին կայսրին, Աստուծուն՝ Աստուծուն (Մարկ. ԺԲ 13—17) ստակները, ինչպես նաև բացատրում է Իր իշխանության աստվածային նկարագիրը (Մարկ. ԺԱ 27—33), խոսում է մեռելոց հարության (Մարկ. ԺԲ 18—27) և, մանա-

վանը, ամբողջ հոգով և սրտով Աստծուն սիրելու մեծ պատվիրանի մասին (Մարկ. ԺԲ 28—34):

**Գլուխ 2. Ձիթենյաց լեռան քարոզը (Մարկ. ԺԳ գլուխ).**

Ավագ չորեքշաբթի օրվա տերունական գործերի մեջ բացառիկ տեղ է գրավում Ձիթենյաց լեռան վրա Քրիստոսի արտասանած քարոզը, որն ամբողջությամբ իր Ավետարանի մեջ բերել է Մարկոս Ավետարանիչը:

Հիսուսը և աշակերտները նստել են Ձիթենյաց լեռան լանջին, և նրանց նախաձեռքի առաջ երուսաղեմն է ու գրավիչ գեղեցկությունը տաճարի:

Աշակերտներն ընկնված և հուզված են: Մի օր առաջ Հիսուսը երբ հեռանում էր տաճարից, ասաց. «Տեսնում եք այդ շինությունները, ճշմարիտ են ասում ձեզ, որ դրանց քարը քարի վրա չպիտի թողնվի, որ չքանդվի» (Մարկ. ԺԳ 2):

Լեռան լանջին, շրջապատած Հիսուսին, ստաքյալներից մի քանիսը հարցնում են նրան. «Վարդապետ, ասա մեզ, ե՞րբ պիտի լինի այդ և ի՞նչ կլինի նշանը, երբ կտարվելու լինի այդ բոլորը» (անդ, 4):

Եվ ահա հուզված, տրտմած ստաքյալների հարցումին պատասխանն է լինում Ձիթենյաց լեռան այս քարոզը:

Պետք է ուշադրությամբ կարդալ Մարկոսի Ավետարանում Ձիթենյաց լեռան քարոզը՝ հասկանալու համար Հիսուսի խոսքերի քարոչական գեղեցկությունն ու ներգործությունը, քարոզ, որը «ասպագայի վրա բացված պատուհան մըն է, որուն առաջին և անմիջական տեսարանին վրա կերևին այն հալածանքները որոնց պիտի ենթարկվեին քրիստոնյաները: Միջին մակարդակի վրա կերևին Երուսաղեմի և տաճարի կործանումը, իսկ հեռավոր հորիզոնին վրա՝ ... նոր դարաշրջանի մը բացումը, որ կիրականանա Քրիստոսի երկրորդ գալուստովը «զօրութեամբ և փառօք բազմօք»» (էջ 64):

Ձիթենյաց լեռան քարոզից հետո Մատթեոս Ավետարանիչը հիշում է Հիսուսի խոսած մի շարք թելադրական-ուսուցողական առակները, ինչպիսիք են հավատարիմ և անհավատարիմ վերակացուների, քանաքանակների, տարբեր կույսերի, վերջին դատաստանի առակները (Մատթ. ԻԴ, ԻԵ):

**Գլուխ Է. Ավագ չորեքշաբթի (էջ 86—95).**

Ավետարանները Ավագ չորեքշաբթի օրվա հատուկ իրադարձություններից հիշում են երկուսը.

Օծում Բեթանիայում (Հովհ. ԺԲ 1—19) և Հուդայի դավադրության ծրագիրը Հիսուսին մատնելու (Հովհ. ԺԸ 1—11):

Չորեքշաբթի օրը, երեկոյան, Հիսուսն էր աշակերտներով Բեթանիայում էր, «քորոտ» Միմոնի տանը, ուր, ի պատիվ Նրան, կազմակերպվել էր ընդունելություն, որին ներկա էին նաև էր քարեկամ Ղազարոսը և նրա երկու քույրերը՝ Մարթան և Մարիամը:

Ընթրիքի ժամանակ Մարիամը, «զգայուն ու հավատարիմ մի հոգի», անասման երախտագիտությամբ լցված Հիսուսի հանդեպ, որը հարություն էր տվել իր եղբորը՝ Ղազարոսին, մի լիտր ազնիվ նարդոսի թանկարժեք յուղ վերցնելով մոտեցավ Հիսուսին և օժեց նրա ոտքերը և իր մազերով սքրում էր Նրա ոտքերը. տունը լցվեց անուշահոտ յուղի բուրմունքով:

Մարիամի այս երախտագիտական արարքը «յուղ սիրագեղ արտահայտություն մըն էր: Բայց արարքին տարողությունը անհասանալորեն ավելի բարձր էր» (էջ 92):

Հին Կտակարանում օծվում էին թագավորներն ու քահանայապետները. «Հիսուս ուզած էր հրապարակել ու հաշտարարել որ Ինք ակնկալված Օծյալն էր, Մեսիան էր: Աստվածային այս ճշմարտության վրա դրված դրոշմն էր Մարիամի կատարած օծումը» (էջ 92):

Ավագ չորեքշաբթի օրվա Հիսուսի դեմ ծրագրված մատնության դավադրության տխուր և «արտասուելի» դերակատարն է Հուդա Իսկարիովուսացին, որը, ըստ շարականագրի, «երկնատր վարդապետին սպանության խորհի խորհուրդ մատնելով անօրինաց զի խաչեացի ի մէջ երկրի» (Շարական, էջ 185):

«Մեզի հետ կապրի Հուդան հավերժորեն,—խորհրդածում է սրբազանը,—իջնելով պատմության էջերեն ու կերթա դեպի անհատնում ապագան... Ու մեզմե ամեն մեկս, ստանց բացառության, առավել կամ նվազ աստիճաններով, շարունակությունը կկազմենք Մարիամի կամ Հուդայի: Ճակատագրական հարցումը այն է. ո՞ր մեկին...» (էջ 95):

**Գլուխ Ը. Ավագ հինգշաբթի (էջ 96—128).**

Ավագ հինգշաբթին իրադարձություններով և դրվագներով հարուստ օր է հանդիսանում Ավագ շաբաթվա յոթնակի մեջ:

Մեր եկեղեցական օրացույցի մեջ Ավագ հինգշաբթիի դիմաց նշանակվել է «Յիշատակ ընթրեաց Տառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Ապա երեկոյան՝ «Չկարգ ոտնալուսին» և ի գիշերին «Հսկումն է»:

Ավետարանները խոսում են հինգշաբթի երեկո «Քաղաքակերաց առաջին օրվա» առիթով, հրեական պատերի կամ գատկական ընթրիքի պատրաստության մասին (Մարկ. ԺԴ 12—16): Օրվա շարականներն ամբողջությամբ նվիրված են Ոսնալվայի և Վերջին ընթրիքի խորհրդին:

Սույն գլխում սրբազան հեղինակը մեզ է ներկայացնում Ավագ հինգշաբթիի հատուկ Ոսնալվայի, Վերջին ընթրիքի և Քրիստոսի վերջին կտակի պատմությունն ու այս առիթներով իր խորհրդածությունները:

Ոսնալվայի (Հովհ. ԺԳ 1—15) հայ եկեղեցում կատարվում է բացառիկ ու շքեղ հանդիսությամբ, որին ուղեկցում են այդ արարողությանը նվիրված սքանչելի, հուզիչ ու սրտագրավ սաղմուններ, շարականներ, «գանձեր»: Ոսնալվայի կարգը մեր ժամակարգության մեջ մտնել է Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը (1065—1105):

«Ոսնալվայի արարողությունը, երրորդ սրբազան Տրամն է, որ եկեղեցին մեր դիմաց կղնե Ավագ շաբաթվան ընթացքին: ... Ամբողջ արարողության կեդրոնական գաղափարները երկուքն են՝ խոնարհություն և սեր» (էջ 102):

Ավագ հինգշաբթի օրը, զատկական ընթրիքի ժամանակ, Հիսուսը հաստատեց նաև **ս. Հաղորդության խորհուրդը** (Մարկ. ԺԴ 12—25):

Ամեն անգամ, երբ եկեղեցում ս. պատարագ է մատուցվում, կատարվում է «Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

Սրբազան հեղինակն այս ենթաթեմայի ներքո հանգամանորեն և ձեռնհասությամբ բացատրում է ս. Հաղորդության խորհրդի իմաստը՝ նաև որպես «հոգևոր ճաշ մը, որուն կհրավիրվինք Քրիստոսի հետևորդներս հավաքաբար» (էջ 107): Ապա հեղինակը ծանրանում է ս. Հաղորդության խորհրդին սերտորեն կապված **պատարագ, գոհություն, շնորհք, Նոր Ուխտ, հիշատակ** հասկացողությունների վրա և եզրակացնում. «Խորհրդական Վերջին ընթրիքի ընթացքին հաստատված տնօրինությունը մշտական հուշարար մը պիտի ըլլար, թե Աստուծո Որդին մեզմե մեկը եղավ, և մեռնելով գմեզ ազատեց մեղքի և մահվան հիրաններեն և մենք այդ ազատագրումին մասնակից կդառնանք հաղորդվելով Քրիստոսի կյանքին, որ մեզի կմատուցվի հացի և գինիի կերպարանքին ներքև» (էջ 119):

Հովհաննես Ավետարանիչը ս. Հաղորդության խորհրդի հաստատման կապակցությամբ իր Ավետարանում մեզ հաղորդում է նաև Հիսուսի վերջին կտակը կամ **նոր պատվիրանը՝ սիրո և խաղաղության,**

«ճշմարտության Հոգիի ստաբումով», (Հովհ. ԺԳ 33—35, ԺԴ 16, ԺԶ 13—14), կտակ, որը հիմքն է կազմում Նոր Ուխտի վարդապետության:

Քրիստոսի **վերջին կտակը** ավարտվում է Հայր Աստուծո նաղած **քահանայապետական աղոթքով** (Հովհ. ԺԷ 20—21):

«Սիրով սկսած էր Հիսուս իր հրաժեշտի խոսքը և սիրով կավարտե իր քահանայապետական աղոթքը» (էջ 128):

**Գլուխ Թ. Ավագ ուրբաթ (էջ 129—204).**

Գրքի ընդարձակագույն մասը, շուրջ 75 էջ, նվիրված է Ավագ ուրբաթ օրվա իրադարձություններին, որովհետև, նշում է սրբազան հեղինակը, «Ավագ ուրբաթը արդարև եկեղեցական տարիին ծանրագույն և սրբազնագույն օրն է, որ կկատարվի Աստուծո Որդիին արյունոտ ողջակեզը» (էջ 129):

Ավագ ուրբաթ օրը, ըստ Ավետարանների վկայության, կատարվել են Քրիստոսի մատնության, դատապարտության, փրկկազորձ չարչարանքների, խաչելության, մահվան և թաղման՝ «մարդկային պատմության մեծագույն այս Տրամին» իրադարձությունները, որոնք «երևան կբերեն մարդկային նկարագրի վատթարագույն գիծերը և Աստուծո բնության վեհ հոգվույն նստազայեղները» (էջ 129):

Ավագ ուրբաթ օրվա իրադարձությունների մեջ, հինգշաբթի երեկույից սկսած, կարևոր տեղ են գրավում Հիսուսի երկրավոր կյանքի վերջին օրվա հետևյալ դրվագները.

**Հիսուս Գեթսեմանիի պարտեզում.**

Հինգշաբթի օրը, Վերջին ընթրիքից հետո, Հիսուսն իր աշակերտներով առանձնացավ Ձիթենյաց լեռան ստորոտում գտնվող Գեթսեմանիի պարտեզը՝ աղոթքով զորանալու, գալիք անեղ փորձություններին դիմանալու համար. «Հոգիս յօժար է, բայց մարմինս տկար» (Մարկ. ԺԴ 38):

**Հիսուսի ձերբակալությունը Գեթսեմանիում.**

Աղոթքով զորանալուց հետո, նույն պարտեզում նույն գիշերը տեղի ունեցավ Հիսուսի ձերբակալությունը Հուդա Իսկարիովտացու մատնությամբ:

**Հիսուս քահանայապետական ատյանների առաջ.**

Մատնությունից և ձերբակալությունից հետո, Հիսուսը գիշերանց տարվեց Կալիափա և ապա Աննա քահանայապետների մոտ դատվելու, որ և շտապ կարգով, նախանձի, ատելության կրքով տարված մարդկանց կողմից մահվան դատապարտվեց սուտ վկայությունների և պոռոտ ամբաս-

տանությունների հիման վրա՝ որպես աստվածամերժ և հայհույիջ մովսիսական կրոնի դեմ:

**Պետրոս առաքյալի երիցս ուրացումները.**  
Նույն գիշերը քահանայապետի ապարանքի գավթում, երբ Հիսուսը վերը՝ դահլիճում մահվան էր դատապարտվում:

**Հիսուսը Պիղատոսի և Հերովդեսի ատյանների առաջ.**

**Հիսուսի ձաղկունը, խաչի ճանապարհը.**  
**Հիսուսի խաչելությունը.**

և, վերջապես՝

**Հիսուսի թաղումը:**

Սրբազան հեղինակը Ավագ ուրբաթ օրվա տնօրինական յուրաքանչյուր դրվագը համեմել է ընդարձակ, բովանդակալից ու հոգեշահ խորհրդածություններով՝ շեշտելով Քրիստոսի չարչարանքների, խաչելության տիեզերական, փրկագործ խորհուրդն ու նշանակությունը մարդկության փրկության համար:

**Գլուխ Ժ. Ավագ շաբաթ (էջ 205—207).**

Ավագ շաբաթ օրվա առավոտյան միակ իրադարձությունը Հիսուսին մահվան դատապարտող մութ ուժերի՝ հրեա քահանայապետների և փարիսեցիների ծանր ստահոգությունն էր՝ կնքել տալ Քրիստոսի գերեզմանը, որպեսզի առաքյալներն ու աշակերտները «չգողանան Քրիստոսի մարմինը»:

Բոլոր նախազգուշական միջոցները ձեռք առնվեցին այդ ուղղությամբ: Զինվոր-պահապաններ դրվեցին Քրիստոսի գերեզմանի վրա. կնքեցին այն ապահովության համար:

Ավագ շաբաթ օրը, առավոտյան, «հրական հանգստի օր մը եղավ նախ Հիսուսի հոգնատանջ մարմինին համար և այսպե՛ս իր հետևորդներուն՝ որոնք պարտված երկյուղեն կամ երեկի հոգնութենեն պահված կամ բաշված մնացին իրենց տուններուն մեջ» (էջ 205):

«Ավագ շաբաթ» կրոնաշունչ խորհրդածություններին նվիրված սույն շահեկան ուսումնասիրությունը ավարտվում է Հիսուսի հարության մի շարք պատմական վկայություններով և ավետարանական դրվագներով:

Սրբազան հեղինակը նշում է, որ Քրիստոսի հարության պատմական իրողությունը կամ «Զատիկը, որ Ավագ շաբաթվան կատարը և եզրակացությունը կկազմե, չէ առնրված այս հատորին մեջ: Անկիսա մաս պիտի կազմե» հեղինակի «Տաղաար օրեր» հաջորդ հատորի (էջ 4):

Սրբազան հեղինակը ճիշտ և գեղեցիկ մտածումն է ունեցել իր ուսումնասիրությունն ավարտել Քրիստոսի հարության լույսով, նրա տիեզերական, համամարդկային հոգեվոր, քարոյական նշանակության պատգամով.

«Հիսուսի գերեզմանեն իր սկիզբը առած այդ լույսը կշարունակե ցայսօր տարածվիլ ու թափանցել մեր այս երկրագունդի մինչև հետին խավարամած անկյունները» (էջ 204):

Տ. Ծնորհք սրբազանի «Ավագ շաբաթ» աշխատությունը նրա ավելի քան 40 տարիների հոգևոր ծառայության, տքնաշան աշխատանքների, պրպտումների, ընթերցումների, ներքին ապրումների և կրոնական փորձառության, հավատավոր ու ազնիվ հոգեվորականի խորհրդածությունների կենդանի և պայծառ արտահայտությունն է:

Ուսումնասիրությունը գրված է ջերմ սիրով ու հավատքի կրակով: Լեզուն գեղեցիկ, պատկերավոր ու արտահայտիչ է, տեղ-տեղ՝ բանաստեղծական, քնարական, ոճը՝ կենդանի ու կուռ, դատողություններն ու վերլուծությունները՝ խոր ու բովանդակալից:

Ուսումնասիրությունը կարդացվում է հոգեկան մեծ բավականությամբ և հարաճուն հետաքրքրությամբ:

Տ. Ծնորհք սրբազանի «Ավագ շաբաթ» հոգեշեն, հոգելից ուսումնասիրությունը մեր այսօրվա եկեղեցական աղքատիկ մատենագրության ընտիր գանձերից մեկն է և սեղանի գիրքը կարող է լինել ամեն մի բարի ու բժախնդիր հավատացյալի և, մանավանդ, Քրիստոսի Ավետարանի քարոզության ու Նրա ս. եկեղեցու հոգևոր ծառայության կանչված յուրաքանչյուր տիպար ու նախաձախնդիր հոգևորականի համար:

Ա. Հ.





### ՅԱՂԱԳՍ ՏԱԻՆԻ ՍՐԲՈՅՆ ԹԷՈՒՌՈՐՈՍԻ

Սրբոյն Ներսատես Կոստանդինուպոլսի եպիսկոպոսին, յաղագս տանի սրբոյ եւ ճգնագգեաց վկային Թէոդորոսի, զոր յառաջնումն շաբաթոքառասնորդացն տանեն ամենայն հաւատացեալք<sup>1</sup> Բի. ի վառս ամենատրք Երրորդութեանն<sup>2</sup>:

Յառաջնում ամի Յուլիանոսի, մինչդեռ նորքն ծայ էր ի թագաւորութեանն, խորհորդ չարութեան սրկ ի միտս իր ի աղբիւղ բանարկոյն, առ ինքն ժողովրդ<sup>3</sup> զամենայն խորհրդակիցս անօրէնութեան իրոյ, հարցանելով զնոսա զի թերեսս հնար կարացէ գտանել ի դիմշող ժամանակի, զի զամպարշտութիւնն, զոր ի կիր արկեալ<sup>4</sup> էր, ի գլուխ հանցէ, ոչ տանջանաք վատնել կամ ցնդել կամ մահացուցանել զոմանս, այլ զամենայն բնակիչս քաղաքին<sup>5</sup> ի ձեռն զաղտնի հնարից ի կուսպաշտութեան հրապոյրս մերձեցուցանել: Թէպէտ եւ աստուածային գթութեանց խնամարկութիւնքն զնորս զամպարիշտ խորհորդն ցնդեաց եւ կորոյս, քանզի ամենատրք քառասնորդաց<sup>6</sup> պահոց աղոթացիցն հասանելով, զոր ամենայն հաւատացեալք մարրապէս պահեն անլուծանելի յամենայն պարարտ կերակրոց, եւ ի թմբեցոցիչ<sup>7</sup> ըմպելեաց, զիմոյ ասեմ եւ ճոցին տեսակաց, զոր զնախկին մտուցեալսն եւ զառաջակալ լայնացեալսն, ի ձեռն դասն ճաշակմանն, յիշելով եւ զգլորումն յաւերժական<sup>8</sup> կենացն, եւ նովին կանոնադրեալ կիտի ի գլուխ տանին մինչև ցատրք պասեքն՝ փրկաւետ յարութեանն Բի. Այ. մերոյ:

Արդ յառաջնում ատրքն, ի սկզբան պահոցն մտանելոյ՝ զեպարթոս քաղաքին առ ինքն հրամայեաց<sup>9</sup> գոչել. զհամախոն իրոյ չար մտացն եւ անհաւատութեանն եւ ասէ ցնս. Քանզի բազում եւ զանազան հնարն ի կիր արկի, ով հիպարթ, եւ զկարգս կրամից քրիստոնէից ոչ կարացար շիջուցանել, եւ ինձ վասն այս ի ձեռն ցնորից ոչ փոքր ինչ փոյթ է, զի եղև ինձ վաղվաղակի բաւտուածոցն խորհորդ գեղեցիկ իսկ եւ անդիմադրելի<sup>10</sup>, քանզի զեւթնկրեալ<sup>11</sup> շաբաթս զայս քրիստովնայքն յառաջմէ ատրքն մինչև ցկատարսն յոյժ մաքրապէս եւ ստանց լուծանելոյ պահեն ամենիւն: Արդ հրամայեմ քեզ զի որչափ ի վաճառարանս քաղաքիս կերակոր կամ ըմպելի ի կարևորացն եղև լինի՝ ամիոպիսցեն յըշտեմարանս, եւ մի՛ այլ ինչ դիցի ի վաճառափողոցսդ, բայց յալլանցանեաց, զոր եւ շնորհեցից կերակոր եւ ըմպելի՝ արեամբ զոհիցն խտնակեալ<sup>12</sup>, զի ի հարկէ այսմ այսպէս լինել<sup>13</sup> ամենեքեան գնելով եւ ուտելով հպատակ լիցին մերոց հրամանացս, որպէս ճաշակեալք ի զոհից աստուածոցն, կամ ափով աստակի ի կենաց, զիտելով զխորհորդս եւ ոչ ունելով այլ ուտեք լնոյ զկարասութիւն իւրեանց:

Չայս իբրև յուս եպարթոսն յանաստուած քրտնոյն պնորիկ, պատասխանի եւ եւ ասէ. Այժմ գիտեմ<sup>14</sup> թէ ճշմարտապէս սիրտ թագաւորի ի ձեռին աստուածոցն է. եւ համանկամայն ընդ բանին եւ գործն հետեւեալ լինէր, եւ զոր ինչ ի վաճառարանսն էին նախադրեալք՝ ի տուես [ի] շտեմարանեալ լինէին, եւ զսո ի թագաւորն խորդա-

<sup>1</sup> Բնագիր Ձեռ. Ս. Յ. թիւ 282, էջ 483—491 (=Ա): Համեմատուած օրինակներ, թ. 154 թ, էջ ՈՄԳ. 1 — ՈՄԶ. 1 (=Բ). թ. 918, էջ 315—332 (=Գ):

<sup>2</sup> Կոչէր ԲԳ:

<sup>3</sup> Արկանեալ Բ:

<sup>4</sup> Քառասնորդացն Գ:

<sup>5</sup> Թմբեցոցիչ ԲԳ:

<sup>6</sup> Աւելանս Բ, Յաւելանս Գ:

<sup>7</sup> Հրամայէր ԲԳ:

<sup>8</sup> Անընդդիմադրելի Գ:

<sup>9</sup> Չեօթներեալ Գ:

<sup>10</sup> Խտնեալ ԲԳ:

<sup>11</sup> Լինելով ԲԳ:

<sup>12</sup> Գիտեմք ԲԳ:

ինչպէս պիտի կերակուրան յամենայն վաճառարանս խանութիցն եղեալը:

Եւ արդ զիս'որդ արդեւ, որ ստեղծն գնեց Աստուած, միթէ անտես ստեղծ էր անփոյթ, եւ ոչ երբեք: Այլ համանկամայն շար եւ դժնատեսակ<sup>13</sup> հնարիցս եւ խորհրդոցս զփրկութիւն ընձեռեաց<sup>14</sup> քահանայապետի քաղաքիս, որ յայնմ ժամանակի էր, զանաստուած խորամանկեալ խորհուրդն յայտնեաց ի ձեռն անպարտելի մեծի<sup>15</sup> վկային իրոյ Թէոդորոսի՝ զփրկութիւն մերոյ հատիս եւ հատատոյ՝ պարզեալ իբրև ի տեղեան ակնբերակի երևմամբ եկեալ հասեալ լինէր սուրբ վկայն Քի. առ քահանայապետ մերոյ քաղաքիս, յարթութեան եւ ոչ յանորջս երևեալ<sup>16</sup> եւ ասէր այսպէս. Յարուցեալ, ասէ, ժողովեա զհասող Քի. եւ զամենեսան զգուշացոյ, զի մի ինչ լեղամակաւ, որ նախադրեալն են ի վաճառարանն, զնեսցեն ինչ: Քանզի ամենամարիշտն Յուլիանոս զամենայն արեամբ զոհից<sup>17</sup> կողմն ապականեալ է: Իսկ քահանայապետն ասէ ցտորբ վկայն. Եւ ո՞րպէս արդեւ, ով Տէր իմ, հնար է լինել իրիդ աղբմիկ, քանզի փարթամացն թերեւս հնար է<sup>18</sup> զպառաշագ[ւ]ոյն շունտարանեալսն ի պէտս իրեանց մատակարարել ըստ պատշաճի, իսկ տնանկացն, որք եւ ոչ միոյ ատր կերակուր ունիցին ըստ բաւականի ստ ձեռն, զի՞նչ մխիթարութիւն կարատութեան<sup>19</sup> հարգելորացն լինիցի նոցա:

Եւ սուրբ վկայն Քի. Թէոդորոս ասէ ցնա. կոյի-րեանատ շնորհեա նոցա, զի զկարատութիւն իրեանց լցցին: Ասէ ցնա քահանայապետն. Ով տէր իմ, ոչ զիտեմ եթէ զինչ իցէ անուն իրիդ աղբիկ: Եւ սուրբ նահատակն Քի. վասն ջերմագոյն սիրոյն եւ սուսել պաշտպանութեան պատասխանի ետ եւ ասէ<sup>20</sup> ցորեան է եկեալ, զոր եւ դու բաշխեսցես նոցա ի կերակուր, զի սովորութիւն է հայրենի օտաւորին իմոյ Երիւանդացոցն<sup>21</sup> կոյիբայ կոչել: Չոր այսպէս արարեալ թո՛ւ ստանց վնասուց հոգեւոր վտանգից պահեսցես զհասող Քի. զոր գնեաց սուրբ արեամբ իւրով, զոր եւ հաւատացա թեզ հովուել զդոսս իմաստութեամբ:

Դարձեալ՝ հարցանէր զնա քահանայապետն. Եւ ո՞վ եւ դու, տէր իմ, կամ զի՞նչ անուն է թո, որ արդպիսի գթածարէն հոգեբարձութեամբ մարդափրակէս մերոյս փոյթ առնես փրկութեան: Սուրբն ասէ. Եւ եմ Քրիստոսի վկայն Թէոդորոս, եւ առարեցայ վասն ձերոյ փրկութեան: Զի՞նչ հրաշափառագ[ւ]ոյն գործ նշանաց եղև ստ Նիկուէացիս

ի մարգարէն Յովնանո քան զայս. զի նա կործանումն կորստեան խոստանայր քաղաքին, եւ այնպէս ածէր զնոսս ի զղջումն ապաշխարութեան, իսկ սուրբ վկայս եւ զպատճառն զոչ կործանելոյն այնչափ անձանց, եւ զազատմանն ի լծոյ անարին ուր[ու]սապաշտ մոլորութեանց, հաւատապէս յայտնեաց մեզ:

Արդ ո՞րչափ զանազանի հոգի ի մարմնոյ, նոյնչափ մեծ եւ բարձրագ[ւ]ոյն է այս՝ քան զայն: Եւ մի՛ ինչ անձան եւ տարժանիս<sup>22</sup> համարեցուր զպատսիկ զասացեալս ստ ի մէնչ, ընդ մարգարէին հոմապատարարս հաւատարելով զվկայս, քանզի միոյ եւ նոյն Տեսուն երկաքանչիւրքս, եւ ստ ի նմանէն երկաքանչիւրոցս գործք եւ սքանչելիք. զի եւ ի նորին հրամանէ կամաց գործեցան: Այլ մեք յառաջակալ նախկի ասացելոց մերոց զնետ երբալով՝ ասացուք եւ զպաշտոյ պատմութեանց բացիցն որ զնետ են<sup>23</sup>:

Արդ իբրև այսպէս զպատսիկ լուս հայրապետն, սխրացմամբ եւ ինճոյթեամբ լի եղև, յարուցեալ՝ գտորբ հաւան հովուապետի<sup>24</sup> Քի. առ ինքն ժողովէր, եւ զգթութեանցն Աստուծոյ խնամակալութիւնն եւ զվերակացութիւն պաշտպանութեան վկային իւրոյ ստուգութեամբ պատմէր ամենեցուն. եւ զխրատ հրամանին, զոր ընկալեալ էր, արարեալ ստանց յապաղանաց, անվնաս պատմէր զեկեմակեան ժողովուրդսն Քի.<sup>25</sup> Այ.:

Եւ արդ եօթներեկի<sup>26</sup> ատորցն կատարելով իբրև<sup>27</sup> ետես սոսկարիշտն Յուլիանոս ամենեկին պարտեալ զինքն՝ ո՛չ ինչ յառաջելով խորամանկ ապիւրատ խորհրդոցն իրոց, հրամայէ դարձեալ եպարքոսին ի բաց բառեալ զխարդախեալ եւ զտապաւանեալ կերակուրսն, եւ զսովորականսն յառաջ ածել[ս] ի հրամայեաց:

Եւ արդ ի հաւանել շարթուն, իբրև զննապս մոլելոյն<sup>28</sup> իմացան քրիստոնեալքն եթէ լուծեալ եղև, գեղեցկալադոս վկային Թէոդորոսի գոհութեամբ արմնութիւնս յառաջադրելով՝ տան պայծառ եւ գերափայլ մնա կատարեցին, եւ ցորեան եփելով եւ տնանկաց<sup>29</sup> բաշխելով զպատճառս փըրկութեան իրեանց ամենեցուն յայտնի արարին: Աստուստ յիւրաքանչիւր ամի յայնմ հետէ մինչև ցայսար սքանչելեացն երջանիկ վկային Թէոդորոսի յիշատակ ստ հաւատացեալս ամենայն արիւնադրեցա<sup>30</sup> կրտարել ստանց լերկուանալոյ<sup>31</sup> բարեպաշտապէս:

<sup>13</sup> Դժմատեսակ Ա, դժնատեսակ Գ:  
<sup>14</sup> Ընդ ձեռաց Բ, ընդ ձեռնեաց Գ:  
<sup>15</sup> Եւ մեծ Բ:  
<sup>16</sup> Երթեալ Ա:  
<sup>17</sup> Զոհիցն Գ:  
<sup>18</sup> Զունիք՝ հնար է ԲԳ:  
<sup>19</sup> Զունիք՝ կարատութեան ԲԳ:  
<sup>20</sup> Զունի՝ եւ ասէ Ա:  
<sup>21</sup> Երիւանդացոցն Բ:

<sup>22</sup> Տաճանիս ԲԳ:  
<sup>23</sup> Զկնի են ԲԳ:  
<sup>24</sup> Հուսպետիս Բ:  
<sup>25</sup> Զունիք՝ Քի. ԲԳ:  
<sup>26</sup> Եթէ երբեք Ա:  
<sup>27</sup> Զունիք՝ իբրև ԲԳ:  
<sup>28</sup> Մոլորելոյն ԲԳ:  
<sup>29</sup> Աղքատաց ԲԳ:  
<sup>30</sup> Հաստատեցա ԲԳ:  
<sup>31</sup> Յերկուանոյ Բ:

Այս ինչ է առ ի մէջ պատուաւ և տանաւս յիշատակ վասն այսբան և այսպիսի ջերմագ[ւ]ոյն պաշտպանութեան առ ի մեզ եղելոյ ի սրբոյ վկայէն, և անտեղի և չարիմաց խորհրդ[ւ]ոյն<sup>32</sup> ամպարշտին Յովիանու, ցրուելոյ և ցնդելոյ, այլ ոչ որ կարասցէ զԱստուծոյ մերոյ ճշմարտէ զանբաւ բարերարութիւնս պատմել, և զանճասանկի գարտրիւնս բովանդակել բանի, որ յայնմ ժամանակի, ի մ[ի]նում վայրկենի ժամու, ճողոպրեալ ի բաց կորզեաց<sup>33</sup> զհատուացեալս ի ձեռաց չարանախանն քանգարկոյին, պայծառ վեր[ա]հատութեամբ պանծալի վկային իւրոյ թէշողորտի: Դարձեալ այժմ եւս յիւրաքանչիւրում աւուր ևս ի ժամանակի, իրական զգոշութեամբ ի մեքեմաւոր հաղթից աստանայի զմեզ փրկէ և սպրկեցուցանէ, և ի նորին արբանեկաց շարշարողաց զմեզ ևս ի հաղածչաց ի բաց յափշտակեացէ<sup>34</sup>:

Արդ զայս ամենայն գիտելով ընդ պնդութեան պանոցս՝ զաղաթս և զողորմութիւն լծակցեցուք, զի իրբն թուաք ոմամք բարձրացեալ յերկրէ յերկինս լինիցին անձիւք մեր, զի պանքն յամենայն ախտից ազատս զնոցիս մեր առնեն, իսկ ողորմութիւնն՝ յախտենական և անվախճան<sup>35</sup> կենացն առիլ լինին մեզ, զի ոչ եւ միով իւր ի բարեգործութեանցն պակասեալ լինիցինք, այլ համարձակութեամբ ընդ փևսպին Քի. յատագատն մտցուք:

Առ այտրիւք ողորմածն եւս առաւել լինի ասացեալ, իսկ կարծրագունցին և ոշտիցն, որք ապառուս<sup>36</sup> ունին զբնութիւնս, և ոչ դուզնաբեա ինչ բանից ունին դնեն, այլ մեր հանդերձ այտրիւք զվերապաղելչականն արբնեղգութիւն միշտ գոհացողական փառասրտութեամբ<sup>37</sup> երգեցուք Փրկչին մերոյ և հասարակաց արարչին<sup>38</sup>, և զիրաշափառագ[ւ]ոյն զքանչեկիսն միշտ նորոգապէս անմոռաց յիշատակաբ բերցուք յանձինս մեր, և առ

զեղեցկայտոյ և մեծ վկայն Քրիստոսի հաւատարմապէս զոչեացուք:

Ով մարտիրոսաց պատկ պարծանաց պայծառութեան, ով ընծաց Աստուծոյ և կենդանի պատուաբազ, ով պանապան և նախամարտիկ զարապից հաւատացելոց, աղաչեմ հացցելով ի քեզ, հանդերձ հաւատացեալ ժողովրդովքս, զի մի՛ անտես արարցես զաղքատութիւն և զխոնարհութիւնս մեր, այլ միշտ վասն մեր մաղթել մի՛ երբեք ձանձրացիս, ով ամենաքանչղ ի վկայս, և մի՛ յիւրաքանչիւր զնոցիս մեր ի քոյին խնամակալութիւն: Զի յայնմ ժամանակի երեւելի<sup>39</sup> անպարիշտն էր և հակառակորդն ճշմարտութեանն Յովիանոս ընդդիմամարտ մերոյս ժողովրդոց<sup>40</sup>: Իսկ այժմ սխաբնաչար և աներևոյք բանասրկուն միշտ դրժիլ ջանալով զսխալաբար զոցիս մեր:

Արդ քո[ւ]ն[ւ]ն արիական և հանդիսական զարութեամբ վանեալ զգունդս Բէլիարայ, ով ամենապատիւ և յոքնապայծառ ճգնաւորոյ Քի., բանկի կենդանի քեզ<sup>42</sup> լինել և յետ [մանու]<sup>43</sup> հաւատացեալ եմք, որպէս և Տէրն սաւ. Թէ որ հաւատս յիս՝ թշաւտ և մտանի կեցցէ<sup>44</sup>: Այլ դու ոչ միայն պարզաբար հաւատացեր, այլ և վասն նորս մտնեալ՝ կցորդակից եղեր մահու խաչին և շարշարանացն, և միշտ կենդանի ևս առ Տաուն, յանձրանալի և յանճնց կենդանութեանն:

Արդ իրբոս յԱստուած կենդանի մերձ գոյով քո՛ հաշտութիւն հացցես մեզ քոյով մաղթանաբոյ, զի յատուացս թախանճանաց ազատեալք՝ հանդերձեւոց բարեացն և երկնից արքայութեանն արժանի լիցուք: Ընդդիմաբ և մարդասիրութեամբ Տաուն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի, որում վայել են<sup>45</sup> փառք, իշխանութիւն և պատիւ այժմ ևս միշտ ևս յախտեւ:

Երուսաղէմ  
Հրատ. Ա. Յ. Սրճունի

<sup>32</sup> Խորհրդոցն Բ:  
<sup>33</sup> Կոչեաց Ա:  
<sup>34</sup> Յափշտակեացէ Ա:  
<sup>35</sup> Առվախճան Ա:  
<sup>36</sup> Ապառուս ԲԳ:  
<sup>37</sup> Զվայելչական արբնութիւնս... փառաբանութեամբ ԲԳ:  
<sup>38</sup> Զունի՛ մերոյ և հասարակաց արարչին Բ:

<sup>39</sup> Զունի՛ Զի յայնմ ժամանակի երեւելի Բ:  
<sup>40</sup> Մերոյ ժողովոյս ԲԳ:  
<sup>41</sup> Դրժելով ջանայ ԲԳ:  
<sup>42</sup> Զքեզ ԲԳ:  
<sup>43</sup> Զունի՛ մահու Ա:  
<sup>44</sup> Կենդանի է ԲԳ:  
<sup>45</sup> Վայել է Ա:





Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ

ՀԱՅՈՅ ՄՈՒՈՐԱԿԱՆ ՀԱՄԱՐՎԱԾ ԳՐԲԵՐՆ ԸՍՏ  
ԼԱՏԻՆԱԿԱՆ ՄԻ ՀԻՆ ՑՈՒՑԱԿԻ

1341 թվականին Ֆրանսիայի Ավինիոն քաղաքում, ուր այդ ժամանակ հաստատված էր պապական արքունիքը, հայ եկեղեցու թշնամիների կողմից Բենեդիկտոս ԺԲ-ին ներկայացվում էր 117 մոլորությունների մի ցուցակ, որի 110-րդ կետը վերաբերում էր հայոց «մոլորական» գրքերին: Հետաքրքրական է իմանալ, թե որո՞նք էին մոլորությունների աղբյուր համարվող այդ գրքերը:

Նախ ասենք, որ 117 մոլորությունների պատմությունը հանդիսանում է մի օղակը այն պայքարի որ քաղկեդոնականները, հանձնինս բյուզանդացիների, Ե/Չ դարերից սկսած տանում էին հայ եկեղեցու դեմ:

ԺԲ դարի վերջերին Կիլիկյան Հայաստանում լատինական Արևմուտքն եկել էր քաղկեդոնական գաղափարախոսության ներթափանցման պայքարի դրոշմ խլելու բյուզանդացիներից: Դա արդյունք էր Կիլիկյան Հայաստանում տեղի ունեցած քաղաքական մի խոշոր իրադարձության: Լևոն Բ իշխանապետը 1198 թվականին վերականգնում էր հայոց անկախությունը՝ արքայական թագաժառանգությունը հռոմի պապի և հոմմեական (գերմանական) կայսրի պատվիրակից: Այնուհետև՝ ԺԳ և ԺԴ դարերում քաղկեդոնական գաղափարախոսությունը հոմմեական եկեղեցու գլխավորությամբ և լատինականության

տինականության յուրահատուկ կերպարանքով զգալիորեն ծաղկավում էր Կիլիկիայում և համապատասխանաբար էլ կազմակերպվում ու ամրապնդվում էր հակալատինական պայքարը, որին լծված էին միաբնյա հայ եկեղեցու ողղափառության պաշտպանները:

Հիշյալ 117 մոլորությունների պատմությունը հիմնականում կապված է ԺԴ դարի հայագգի հայտնի ունիտոր Ներսես Պալիեցիի (Պաղոն) անվան հետ:

Ներսես Պալիեցը, որ ծննդով Սսեցի էր<sup>1</sup>,

<sup>1</sup> Նա իր մասին գրում է մի հիշատակարանում. «Ես տրուպս Ներսես Պալիանեց կոչեցեալ, գաւտաւ Կիլիկիցի, Սքսեցի գոյով և կարգաւոր», տե՛ս M. A. van den Oudenrijn, „Linguae haicanae scriptores Ordinis Praedicatorum“ etc., Bernae, apud A. Francke, 1960, § 499.

Օրմանյանը կապածի տակ է ասում Ներսեսի Սսեցի լինելը՝ նրան հույն համարելով ոմն Ներսես Տարոնացու հետ. տես՝ Մաղ. արք. Օրմանյան, «Ազգապատում», հտ. Բ, Կ. Պոլիս, 1914, § 1279: Օրմանյանի նկատի ունեցած անձնավորությունը, որը հռոմ էր գնացել և, ըստ երևույթին, հարև ունիտորներին, 1332 թվականին իր մասին գրում էր մի հիշատակարանում. «Ներսես, անուամբ վարդապետ, բայց գործով վերջացեալ հող և մո-

1330-ական թվականներին Կիլիկիայում հանդես է գալիս ի շարք այն լատինամոլ հոգևորականների, որոնք, ինչպես ասում է Չամչյանը, «մտանէին ի կարգ ունիթօսաց, զգեցեալք զգետս դոմինիկեան պատրոց, և կամ որք միախոհ էին ընդ նոսա. և տքա ամենայնի լատին ծիսիք վարէին. ելին ոմանք ի սոցսնէ՝ որք առ ի հաճոյ գտանիլ առաջի Լատինացոց՝ մերժէին և արհամարհէին զամենայն՝ որ ինչ Հայոց էր. և համարէին զնոսա իբրև զհերետիկոս, մանաւանդ թէ իբրև զանհրատա. ուստի և ... այսպիսիք եթէ կարէին լանկոցանել զոմանս ի Հայոց յիրեանս, անդէն և անդ կրկին մկրտէին և դրոշմէին և ձեռնադրէին»<sup>2</sup>:

Ներսես Պալիեցը 1336 թվականին նիշատակվում է որպես Ուրմիայի եպիսկոպոս: Այդ ժամանակ նա Կարինի եպիսկոպոս Սիմեոն Պեկի հետ միասին անցել էր Կիլիկիա և նվիրվել ունիթոսական գործունեության: Նրանց մասին Չամչյանը գրում է.

«Որք միաբանեալ ընդ իրեանս զարս քանի մի՝ շրջէին հանդերձ նոքօք այսր և անդր, և քարոզէին, թէ հարկ է կրկին մկրտել և դրոշմել զամենայն Հայս լատինական ծիսիք, և վերստին ձեռնադրել զբանապա նոցա, և տալ պատարագել լատին բարբառով և արարողութամբք. նոյնպէս փոխել և զամենայն կարգ պահոց և այլոց սովորութեանց, զի այսու կարասցեն միաբանիլ ընդ եկեղեցոյն Հռովմայ, և ասէին՝ ըստ գրելոյ Մխիթարայ կաթողիկոսի, թէ՛ Մկրտութիւնն Հայոց է՝ երկբայելի, և պատարագն Հայոց ոչ է՝ ճշմարիտ պատարագ»<sup>3</sup>:

Ներսես Պալիեցն իր այս գրգռիչ գործունեության համար հալածանքների ենթարկվելով ժամանակի հայ հոգևոր ու պետական իշխանությունների կողմից «իբրև զարհամարհող և ոտնհարու ամենայն օրինաց»<sup>4</sup>, ի վերջո սպասատանում է Ավինիոնի

պապական արքունիքը, որանում է իր հայկական կարգը, ընդունում է լատինական կանոնիկոս քանականի աստիճան («աստիճանա լատինացի զանօնիկոս քանական»)՝ և շարունակում նոր դավադրանքներ նյութել հայ եկեղեցու հասցեին:

Չամչյանի մոտ դարձյալ կարդում ենք 1341 տարեթվի տակ Ներսես Պալիեցի մասին.

«Իստուացեալ նորս ընդ այս՝ յոյի անկա փորձանակի և եղեալ զնաց յԱրիմոն սո ոսո Բենեդիկտոսի պապին, և ամբաստան եղև զազգէն Հայոց բնակեղոց ի Կիլիկիա և յարևելս՝ ծանր ծանր չարախօսութեամբք. և ջանացա ցուցանել թէ լի են Հայք ամենայն մոլորութեամբ. զայն գրեալ էր յառաջնէ՛ սո պապն և՛ գործակիցն Ներսեսի Սիմեոն Պեկ եպիսկոպոսն Կարնոյ, որ և փախուցեալ էր ի Կիպրոս յերեսաց Հայոց: Կային յարևմտս և այլ ոմանք յազգէ Հայոց ի կարգէ ունիթօսաց, և նորս ևս հաստատեցին զբանս չարախօսաց, ընդ որս և ոմանք ի Լատինացոց, որք ասին զհիքեանս գիտակ լինել և փորձ արևելեան իրաց, որպէս գրէ Հռենադոս: Սորս ամենեքին ի մի հաւաքեալ առաջնորդութեամբ Ներսեսի Պալիեցի՝ յօրինեցին զհերձանհար և ստայօղ բանս, և ամփոփեցին զամենայն ի գրքոյլ մի, առաջի եղեալ ի նմին զհարիւր եօթնևտասն մոլորութիւնս ի վերայ եկեղեցոյն Հայոց, և մատուցեալ ցուցին զայն պապին»<sup>5</sup>:

Այս ձևով էր ծնունդ առել 117 մոլորությունների պատմությունը:

Ի դեպ՝ ասենք, որ, որպես այդպիսին, Ներսես Պալիեցը Պատմության մեջ ունեցել էր իր նախորդները, որոնք այս կամ այն ստիժով հայ եկեղեցու դեմ տրամադրություններ հրահրողի դերեր էին կատարել հունական աշխարհում: Այդպիսիներից էր «Narratio de rebus Armeniae», այսինքն «Պատմութիւն յաղագս իրաց Հայոց աշխարհին» անունով հայաճի գրքի անձանոթ հայքադիտոնական հեղինակը՝ Ը դարի սկզբների<sup>6</sup>: Այդպիսիներից էր ԺԱ դարում

<sup>5</sup> Oudendijk, § 499.

<sup>6</sup> Չամչյան, հտ. Գ, էջ 340:

<sup>7</sup> Այդ գիրքն ունեցել է մի քանի հրատարակություններ, հիմն. Հ. Ս. Անասյան, «Հայկական մատենագիտություն Ե—ԺԸ դդ.», հտ. Ա, Երևան, 1959, էջ 808—811:

Նրա վերջին և գիտա-քննական հրատարակությունը և ուսումնասիրությունը տվել է G. Garritte-ը, «La Narratio de rebus Armeniae», (Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 132.—Subsidia, t. 4), Louvain 1967.

Բնագրի հայերեն թարգմանությունը տես՝ Հրաչ

իսիր վարդապետաց, որդի Վահրամայ յաշխարհն Տարօնո, ի զարտէն Սասնո, ի վանացն Դազարո, ի գեղջէն որ կոչի Կոռ», տես՝ Հ. Ղ. Ալիշան, «Միասկան», Վենետիկ, 1893, էջ 375:

Ներսես Պալիեցի մասին ընդարձակորեն տես՝ Հ. Ղ. Ալիշան, «Հայապատմութեան», Վենետիկ, 1901, մասն Ա, էջ 122—123:

<sup>2</sup> Հ. Մ. Չամչյան, «Պատմութիւն Հայոց», հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 330:

Ունիթոսների այս շրջանի պատմության համար Չամչյանի (հտ. Գ, էջ 326—332 և 339—347) աղբյուրները եղել են Մխիթար Ապարանեցի, Ռայնզոլդ և լատինական այլ բիշտակարանների:

<sup>3</sup> Անդ, էջ 330—331:

<sup>4</sup> Անդ, էջ 331—332 և 339—340:

Ռայիթոնի վանականներից հայազգի Նիկոնը, որը հետագա դարերի լատինական մի անանուն հիշատակարանի գնահատմամբ, «գհայրենին որացեալ գհաստութնկալա գրասնութիւնն Յունաց և գրեաց գմորութեանցն, գորս դասնէին Հայր յայնմ ժամանակի»<sup>8</sup>. Նրա անունով հայտնի է «Յադագս ամպարիշտ կրօնից վատթարագոյն Հայոց» (Περὶ τῆς ἁριστέως ἡγορευσίας τῶν ἁχριστῶν 'Αρμενίων) խորագրով մի գրություն<sup>9</sup>: Այդպիսիներից էր կեղծ անունով Խահակ Հայոց կաթողիկոս կոչված հեղինակը, որը թողել է թշնամական ոգով երկու գրություններ՝ «Սրբոյ հօրն մերոյ Խահակայ կաթողիկոսի Հայոց Մեծաց Բան նախատական ընդդէմ Հայոց» (Τῶν ἁγιῶν πατρῶν ἡµῶν 'Ισαάκ τῶν καθεδρῶν τῆς Μεγαλῆς 'Αρμενίας Λόγος στήλησευτικός κατὰ 'Αρμενίων) և «Բան նախատական Խահակայ յադագս Հայոց չարափառաց և հերետիկոսաց» (Λόγος στήλησευτικός τῶν 'Ισαάκ περὶ τῶν ἁχριστῶν 'Αρμενίων καὶ αἰρετικῶν)<sup>10</sup>: Այդպիսիներից էր նաև Հովհաննես Դամասկացու անունով մեզ հասած հայերեն մի անվավեր գրության («Յովհաննո Դամասկացոյ Պատասխանիք առ Հայս») անձանք հեղինակը, որին հայ բանասիրության մեջ տրվում է կեղծ Դամասկացի անունը<sup>12</sup>:

Բարթիկյան, «Narratio de rebus Armeniae, հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-բաղթկոնական սկզբնաղբյուր», **Բաներ Մատենադարանի**, № 6, Երևան, 1962, էջ 457—470:

<sup>8</sup> «Compendiosa relatio unionis nationis Armeno-Poloniae cum S. Ecclesia Romana ad annum Christi 1676» (անտիպ), հմտ. «Բռնի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ» (թարգմանիչ՝ Ստ. Մալխապանց, հրատարակիչ՝ Կ. Եզյանց), Ս. Պետերբուրգ, 1884, էջ ԻԲ և 142:

<sup>9</sup> J.-P. Migne, «Patrologia graeca», t. I, Turnholt (Belgium), 1969, p. 655—658.

<sup>10</sup> Ibidem, t. CXXXII, Turnholt (Belgium), p. 1155—1227 et 1227—1237.

<sup>11</sup> «Նորին Յովհաննո Դամասկացոյ Պատասխանիք առ Հայս, բանք համառոտեալ» (հրատ. Բարգեւ Վ. Կյուլեսրյանի), **Լոյս**, Կ. Պոլիս, 1905, էջ 1065—1068, 1112—1115. 1906, էջ 45—48, 116—119, 218—216, 355—359, 474—479, 589—592, 810—815, 957—960, 981—984, 1075—1079, 1124—1126 և 1196—1199:

<sup>12</sup> Հրատարակիչ Կյուլեսրյանը թեև շատ չի կատարում այս գրության վավերականության մասին, բայց և նկատելով, որ նրանում հիշատակվում են անուններ, որոնք Դամասկացոց շատ հետո են հանդես եկել, հաշվի է առնում նաև այն հավանականությունը, թե «այս գրուածը ամբողջովին կամ իր ինչ ինչ մասերով կրնայ Սուտ-Դամասկացի

Ի տարբերություն վերոհիշյալների՝ Ներսես Պալիենցը գործում էր մի բոլորովին նոր միջավայրում, քանի որ արդեն անցել էին բյուզանդական ազդեցության ժամանակները: Նա հանդես էր գալիս լատին եկեղեցու զահակալների արքունիքում, որն այդ շրջանում հաստատված էր Ֆրանսիայի Ավինիոն քաղաքում:

Մոլորությունների այն ցուցակը, որ Պալիենցն էր կազմել, մեզ հայտնի է միայն լատիներեն բնագրով՝ համապատասխան հերքումների հետ միասին:

Պալիենցի ամբաստանությունները հենց նույն ժամանակներում կես առ կես հերքվեցին հայերի կողմից: Նախ Լևոն Ե թագավորի հրամանով նույն 1341 թվականին հայազգի Դանիել Դավրիժեցին, որը լատին Փրանկիսկյանների ուխտից էր և անվանվում էր Մնոր (Մինոր, Minor)<sup>13</sup>, գրեց ամբաստանությունների արժանի պատասխան<sup>14</sup>. հետո՝ Սսի 1342 թվականի ժողովը նույնպես զբաղվեց դրանցով և տվեց իր հերքում-պատասխանը<sup>15</sup>: Պետք է նաև ասել, որ նույնիսկ հետագա ժամանակների լատին հեղինակներ (Գալանոս, Վիլյոտ, Լըքիեն, Մանսի և այլն) բննադատական

գործ մը ըլլալ», տես՝ Բարգեւ Վ. Կյուլեսրյան, «Յովհան Դամասկացի և հայ եկեղեցի», **Լոյս**, 1905, էջ 1010:

Ալիկյանը նախ ուղղակի մի հայ-հոռոմի կեղծիք է համարել այս գրությունը (տես՝ Հ. Ն. Ալիկյան, «Կիրիոն կաթողիկոս Վրաց», Վիեննա, 1910, էջ 69—70). բայց հետագայում դրա հեղինակությունը վերագրել է Եվստրատիոս Նիկիացուն (տես՝ Հ. Ն. Ալիկյան, «Սիմեոն Պնձահանեցի և իր թարգմանությունները վրացերեն», Վիեննա, 1951, էջ 98—98), նկատի ունենալով, որ վերջինս ունի մամուլի մի գրվածք (հմտ. K. Krumbacher, «Geschichte der byzantinischen Litteratur», München, 1897, S. 85).

<sup>13</sup> Ալիշան, «Հայապատում», մասն Ա, էջ 122—123:

<sup>14</sup> Հրատարակված է ամբողջությամբ. «Responsio fratris Daniells [De Thaurisio] ad errores impositos Hermetis», տես՝ «Recueil des historiens des Croisades, publié par les soins de l'Académie des Inscriptions et Belles-Lettres. Documents arméniens», t. II, Paris, Impr. Nationale, 1906, p. 559—650.

<sup>15</sup> Նույնպես հրատարակված է. «Concilium Armenorum, in quo objecti Armenis in libello errores condemnatur, eorumque fides amplius declaratur, anno 1342 celebratum; ex ms. codice Bibl. thecae Regiae», տես՝ J. D Mansi, «Sacrorum Conciliorum nova et amplissima collectio», t. XXV, Graz, 1961, p. 1185—1270.

վերաբերումնք են ցույց տվել այդ ամբաստանություններին<sup>16</sup>։

Ինչպես ասացինք՝ մոլորությունների ցուցակի 110-րդ կետը վերաբերում էր հայոց «մոլորական» գրքերին։ Որո՞նք էին այդ գրքերը։

Հասկանալի է, որ գաղափարական պայքարը և տվյալ դեպքում ու ժամանակաշրջանում լատինականության սանձաքանակ արշավի դեմ հարուցված պայքարը կպահանջեր գաղափարական զենքեր, ուստի և այդ պայքարի գործիչները հետամուտ էին առաջ քաշելու և տարածելու հայ և օտար եկեղեցական ու պատմական մատենագրությունից այնպիսի երկեր, որոնք նյութեր էին տալիս տեսականորեն ու պատմականորեն հիմնավորելու և հաստատելու պաշտպանելի տեսակետները. ընդ որում այդ գրքերը և ամբողջությամբ կամ մասամբ, ողղակի կամ անողղակիորեն, ծխում էին հայ և լատինական եկեղեցիների միության գաղափարը, Քաղկեդոնի ժողովն ու երկաթնյա վարդապետությունը, բաժակի ջրախառնումը, ծննդյան տոնի ստանձնացումը և այլն։ Հայոց մեջ այդպիսի գրքեր, ի հարկե, շատ ու շատ կային, բայց հիշյալ 110-րդ ամբաստանությունը հանդիսանե մեզ տալիս է միայն ստանձին գրքերի կամ հեղինակների 18 անուններ։ Սակայն այդ անունների մեծ մասը լատիններեն գրված բնագրում այնքան է աղավաղվել, որ անճանաչելի է դարձել և վերձանական աշխատանքի է կարոտում։

Ժամանակին Մաղ. արք. Օրմանյանը փորձ է կատարել ճշտելու այդ անունները<sup>17</sup>։

<sup>16</sup> Օրմանյան, § 1308։

<sup>17</sup> Անդ, § 1306։ Օրմանյանի ճշտումները հետևյալներն են. **ա.** **Տօնապարագ** կամ **Տօնօփակէն** կամ **Տօնապարար**, հոռմեական և յունական եկեղեցիներու դեմ գրուած մը, որ պետք է ըլլայ **Տօնապատճառ**։— **բ.** **Անատօարմատ**, որ է **Հաստարմատ**, արմատ հաատոյ ըստած։— **գ.** **Յովհաննէս Մանդակունեցի**, որ է **Մանդակունին**։— **դ.** **Յովհաննէս Օսինեցի**, որ է **Օձնեցի**։— **ե.** **Միաստտորուի** կամ **Միասկօտորու**, իր **Միարանութեան** կամ **Միաձայնութեան** գիրք բացատրուած, գոյգէ Շնորհայի և Տղայի միաբանութեան թողթերը։— **զ.** **Միխայէլ պատրիարք Անտիոքոյ**, որ է **Միխայէլ Ասորի**։— **է.** **Պօղոս Տարունեցի**։— **ը.** **Ոկկենեցի** կամ **Ոկտաեցի** կամ **Տոկտանեցի**, անճանաչանութեամբ ճշդելն ալ դժուար։— **թ.** **Մատթէոս**, որ պետք է Ումայեցին ըլլայ։— **ժ.** **Կանոնք առաքելոց**, որոնք մէջ, կ'ըսեն, Հայոց մոլորութիւնները կը պարունակուին։— **ժա.** **Սարգիս**, որ պետք է ըլլայ **Սարգիս Շնորհային**։— **ժբ.** **Մարոզէ վարդապետի** անտարաններու մեկնութիւնը, մեզի անճանօք։— **ժգ.** **Վանամի** մեկնութիւն Յովհաննէս, որ Վանական կամ

բայց նա ձեռքի տակ ունեցել էր միայն մեկ հրատարակություն՝ Սսի ժողովի որոշումները։ Մենք ևս փորձում ենք ճշտել այդ անունները՝ ձեռքի տակ ունենալով, բացի նույն հրատարակությունից, նաև Դանիել Դավրիժեցու պատասխանների հրատարակությունը՝ օգտագործելով նաև երկու հրատարակությունների մեջ նշանակված բոլոր տարբերակները<sup>18</sup>։ Ի միջի այլոց՝ դժվար չէ նկատել, որ անունների բազմազան տարբերակները հետևանք են ձեռագրերում լատինական տառերի փոխադարձ շփոթումների և լատիններենի համար հայերեն անունների ներկայացրած հնչյունային դժվարությունների։

1. **Tonapachar, Tonapachaz, Tonopachen, Tenopacher**<sup>19</sup>. **Տօնապատճառ**.—Ցուցակի գնահատմամբ՝ սա մի գիրք է, որը «հակառակ է հոռմեական և հունական եկեղեցիների ընդունած տոներին»։

Այս գիրքը կազմել էր, ժ դարում, Սամուել Կամբջաձորեցին, որի մասին խոսելիս Չամչյանն ասում է. «Որ և գրեսց գիրք մի Տօնապատճառ ասացեալ՝ ի վերայ խորհրդոյ տօնից և պաշտամանց եկեղեցոյ»<sup>20</sup>. Իսկ Այիշյանն ավելացնում է, որ «չետոյ ուրիշ վարդապետք ալ ժԲ դարու մէջ՝ շատ քան անեղցուցին ի Տօնապատճառս, կամ նոր ի նորոյ գրեցին և հասարեցին, անոր համար շատ հեղ իրարմէ կը տարբերին այս անուամբ գրեանք»<sup>21</sup>։ Տօնապատճառ գրքի զանազան ձեռագրեր շատ կան Երևանի Մաշտոցյան Մատենադարանում և այլուր։

Այս գրքերն ընդհանրապես սուր բնագրատրոսյան ստարկա են եղել քաղկեդոնականների համար։

Վարդան վարդապետ պիտի ըլլայ, թէպէտ Յովհաննէս մեկնութիւն գրած ըլլալնին յայտնի չէ։—**ժդ.** **Իգնատիոս**, որ է Իգնատիոս Շնորհայիի Ղուկասի մեկնութիւնը։—**ժե.** **Գանազան**, որ է Գառազանագիրք։—**ժզ.** **Նեկինոս Պատարագին** կամ **Պատարագին Մեհգինգ**, իմա՝ Մեկնութիւն պատարագի՝ Լամբրոնացիի գրածը։—**ժէ.** **Տէչտորգուն** կամ **Տէքստորկեր**, Գիրք խնջոյից թարգմանուած, ճշդելը դժուար։—**ժր.** **Այսմատրոք**, որ է Յայսմատրք։

<sup>18</sup> Մեր այս աշխատանքների նախնական արդյունքներն ուրիշ առիթով ներկայացրել էինք ուրվագծային ձևով. տես՝ Հ. Ս. Անանյան, «Վարդան Այգեկցին իր նորապալտ երկերի լույսի տակ», Վեներտիկ, 1969, էջ 36—37 (նույնը՝ **Բազմավալ**-ում, 1968, էջ 265—266)։

<sup>19</sup> Այստեղ իրար հետ շփոթված տառերն են o-e, a-o, a-e, r-z, r-n. նաև՝ p-ph.

<sup>20</sup> Չամչյան, հտ. Բ, Վեներտիկ, 1785, էջ 823։

<sup>21</sup> Այիշյան, «Շնորհայի և պարագայ իր», Վեներտիկ, 1873, էջ 31։

2. Hanadoarmat. Anadoarmat<sup>22</sup>. Հաւատոյ արմատ կամ Արմատ հաւատոյ (լրիվ խորագրով՝ «Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ»):

Այս գիրքը ԺԳ դարի սկզբին (1205 թ.) Վարդան Այգեկցին էր կազմել՝ հայ եկեղեցու միաբնյա դավանանքը և ծիսական կարգերը պաշտպանելու համար «ընդդէմ երկաբնակաց և ամենայն հերձուածողաց» մնում է անտիպ<sup>23</sup>:

Ինչպես նշեցինք<sup>24</sup> Օրմանյանը ևս Hanadoarmat-ը հասկանում է որպէս Հաւատարմատ՝ Արմատ Հաւատոյ, բայց նա նկատի ունի ոչ թե Վարդան Այգեկցու կազմած ժողովածուն, որը տակաւին չէր հայտնաբերված Օրմանյանի օրերին, այլ, առանց տարակույսի, Անանիա Նարեկացու կորած «Հաւատարմատ»-ը, որի մասին եղած եզակի հիշատակությունը գտնվում է Ժ դարի պատմիչ Ուխտանեսի մոտ<sup>25</sup>: Պետք է, սակայն, նկատի ունենալ, որ ԺԳ/ԺԴ դարերում Կիլիկյան Հայաստանի դավանաբանական պայքարի բեմի վրա դեր կատարողը Վարդան Այգեկցու հիշյալ ժողովածուն էր, որի դէմ դիրքավորված էին լատիններն ու լատինամոլ հայերը:

3. Johannes Mandagonensis. Յովհաննես Մանդակունի.—Բացատրություն չի տրվում:

Յուցակն անշուշտ նկատի ունի առաջին հերթին «Երանելոյն Յովհաննու Հայոց եպիսկոպոսապետի՝ Ապացոյց յերկուց բնութեանց ասել զՓրկիչն և կամ մի բնութիւն» գրվածքը<sup>26</sup>, որը միաբնյա տեսությունն է պաշտպանում և պատկանում է Հովհաննես Մանդակունի կաթողիկոսի (478—490 թթ.) գրչին: Այս գրությունն ակներևորեն մի հատված է Մանդակունու կողմից Քաղկեդոնի ժողովի դէմ ուղղված մի ավելի ընդարձակ գրության<sup>27</sup>, ինչպես ցույց է տալիս

«Կնիք հաւատոյ»-ում նրանից բերված մասի խորագիրը՝ «Երանելոյն Յովհաննու Մանդակունոյ Հայոց կաթողիկոսի ի հակաձառութենէն Քաղկեդոնի ժողովոյն, որ ասի Ապացոյց»<sup>28</sup>: Այս փաստն անվիճելի է դարձնում Հովհաննես Մանդակունու հեղինակությունը՝ հակառակ որոշ բանասերների այն կարծիքին, թե Մանդակունին չէր կարող հեղինակը եղած լինել հակաքաղկեդոնական «Ապացոյց»-ի<sup>29</sup>: Սակայն փաստ է, որ քաղկեդոնականները Մանդակունուն արդեն քննադատում էին այն բանի համար, որ նա նոր ի նորո կարգավորել էր հայոց ժամագիրքը և համարում էին, որ դա իբր թե նախկինում եղած հարազատ կարգավորման խախտումն ու եղծումն էր:

4. Johannes Ossinensis. Յովհաննես Օձնեցի.—Բացատրություն չի տրվում:

Որպես Մանազկերտի հակաքաղկեդոնական ժողովի (726 թ.) գումարող՝ Հովհաննես Օձնեցի կաթողիկոսը (717—728 թթ.) համարվել է քաղկեդոնականության մեծագույն թշնամիներից: Որպես այդպիսին՝ նա այնքան հայտնի դեմք էր, որ նույնիսկ մինչև վերջին դարերը լատինները հայադաս-

Մանդակունի և Յովհան Մալբագունեցի», *Շողակաթ* (ժողովածու), Էջմիածին, 1913, էջ 92—93:

<sup>25</sup> «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցոյ, յուղապիստ և սուրբ հոգեկիր հարցն մերոց դասնութեանց յառուս Կոմիտաս կաթողիկոսի համահաւաքելալ», Էջմիածին, 1914, էջ 130—133:

<sup>26</sup> Հ. Ն. Ակիկյան, «Կիրիոն կաթողիկոս Վրաց», Վիեննա, 1910, էջ 44: Հ. Վ. Հացունի, «Կարևոր խնդիրներ հայ եկեղեցոյ պատմութենէն», Վենետիկ, 1927, էջ 382:

Հ. Մանանդյանը, հաշվի առնելով «Ապացոյց»-ի հունարան լեզվի առանձնահատկություններն ու նաև հունարելով, որ նրա հեղինակը կարող է ծանոթ եղած լինել Արիստոտելի երկերի հայերեն թարգմանություններին, գտնում էր, որ հիմքեր չկան այն վերագրելու Ե դարում ապրած Հովհաննես Մանդակունուն: Նա գրել է. «Եթէ «Ապացոյց»-ը հասարի հայ հեղինակի աշխատութիւն, թում է Էձձ, անհաւանական չի լինի ենթադրել, որ նրա ժամանակը դրելը է արիստոտելեան հնագոյն թարգմանութիւններից յետոյ և... յօրինուած պիտի լինի Արիստոտելի Ստորագութեանց թարգմանութիւնից յետոյ», հետևաբար՝ ոչ վաղ, քան 2 դարի վերջերը (տես Հ. Մանանդյան, «Յունարան դարոցը և նրա զարգացման շրջանները», Վիեննա, 1928, էջ 254, ընդգծումները մերն են): Սակայն Գալ. Տեր-Մկրտչյանն արդեն նշել էր, որ հունարան հայերենի գոյության փաստը մեզ հայտնի է դեռ Ե դարի 80-ական թվականների սկզբներից՝ Տիմոթեոս Կուզի «Հակաձառութեան» թարգմանութեամբ (տես Գ. Տեր-Մկրտչյան, «Հայ մատենագրութեան հնագոյն թականները», *Շողակաթ*, էջ 158—159):

<sup>22</sup> Ծիփոթում՝ v-n.

<sup>23</sup> Հ. Ս. Անասյան, «Վարդան Այգեկցին իր նորայտ երկերի լույս տակ», էջ 7—10 և 19—35: Արտատպված է *Բազմավեպ* ամսագրի 1968 թ. 7—12 միացյալ համարներից:—Նույն, «Հայ պատմա-դավանաբանական գրականության թանկարժեք հուշարձանը. Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ», Էջմիածին ամս., 1972, № 8, էջ 27—36. № 9, էջ 45—56: Նույն, «Ներսես Ընդհարյի և 'Արմատ հաւատոյ' ժողովածուն», անդ, 1973, № 12, էջ 83—92:

<sup>24</sup> Տես վերևում՝ ծան. 17:

<sup>25</sup> Ուխտանես եպիսկոպոս, «Պատմութիւն Հայոց», Վաղարշապատ, 1871, էջ 11:

<sup>26</sup> Տես՝ «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 29—40:

<sup>27</sup> Տես՝ Կար. եպս. Տեր-Մկրտչյան, «Յովհան

վաններին տալիս էին **օձնեցականներ** կամ **օձնեցական հերձուածողներ** անունը: ԺԷ դարի վերջերին Հերոնիմոս Լեհացին հայերի դեմ գրած «Թուղ» վիճարանական-ի առաջաբանում նրանց անվանում էր «օձաձնունք և օձնեցածնունք, որոիք հերձուածողապետ Յոհան օձնեցուն», և վերջինիս մասին ասում էր, թե «պղծեաց թունաւոր օձն գազգն Հայոց ի շարածողովն Մանագկերտի»<sup>30</sup>: Մեր ցուցակն ամենայն հավանականությամբ նկատի ունի հատկապես նրա «Սակս ժողովոց որ եղեն ի Հայս»<sup>31</sup> և «Ընդդէմ պնոցիկ որ ապականեն գտրք խորհուրդն ի ձեռն խնորոյ և ջրոյ»<sup>32</sup> երկերը: Հարվածի տակ առնված պիտի լինեին նաև նրա մյուս գործերը՝ «Կանոնք», «Ընդդէմ Պաղիկեանց», «Ընդդէմ երևութականաց», «Յաղագս կարգաց եկեղեցոյ» և այլն<sup>33</sup>:

**5. Liber Miascosurus, Myascosorum, Myascosutum, Myastosuruy.** Տրված է անվան թարգմանությունը՝ «[Liber] unius locutionis». Հստ երևույթին պետք է հասկանալ լատ. unus (սեռ. unius) «մի» և locutio (սեռ. locutionis) «քան», ուստի **Գիրք միաբանութեան**:

Անուարակույս Ներսես Լամբրոնացու կազմած «Պատճառ խնդրոյ միաբանութեան» թագաւորին Հոռոմոց Էմմանուէլի և սրբոց կաթողիկոսացն Հայոց Ներսիսի և Գրիգորիսի» ժողովածուն է<sup>34</sup>, ուր ի մի են ամփոփ-

ված ԺԲ դարում՝ Ներսես Ընորհալու և Գրիգոր Տղայի օրով հայ և բյուզանդական եկեղեցիների միավորման համար կատարված բանակցությունների վավերագրերը: Այս ժողովածուն աչքի փուշ էր քաղկեդոնականների համար, որովհետև նույն բանակցությունների վերաբերյալ Թեորիանոսի կազմած հաղորդագրությունների<sup>35</sup> ոգուն չէր համապատասխանում<sup>36</sup>:

**6. Liber Michael, Liber Michaelis patriarchae Antiocheni. Միքայել-գիրք, Գիրք Միքայելի պատրիարքի Անտիոքայ.**—Բացատրություն չի տրվում:

Հայ մատենագրության մեջ հայտնի Միքայել Ասորու ժամանակագրական երկն է: Միքայել Ասորին Անտիոքի հակոբիկյան պատրիարք էր (ԺԲ դ.): Նրա «Ժամանակագրութիւն»-ը, որը 1248 թվականին թարգմանվել էր հայերենի, հակաքաղկեդոնական ոգով գրված պատմական գործ էր և դրանով էլ հեղինակություն էր վայելում հայերի մոտ՝ որպես «հիմն հաստատ և աշտարակ անշարժ հայադասան հաստոյ և ողղափառ խոստովանութեան», ինչպես գրում էր թարգմանիչ Վարդան Արևելցին գրքի վերջում<sup>37</sup>:

**7. Paulus Taronensis. Պողոս Տարոնեցի.**—Բացատրություն չի տրվում:

ԺԱ դարի հակաքաղկեդոնական հեղինակ: Ցուցակն անշուշտ նկատի ունի նրա ոչ միայն «Ընդդէմ Թեոփիստեայ» խիստ հականառական գրվածքը<sup>38</sup>, այլև մյուս գոր-

<sup>30</sup> «Թուղ» վիճարանական յաղագս սուրբ ողորհախոս հաւատոյ վասն պատասխանատրութեան առ նորատուեալ գիրսն օձնեցական հերձուածողաց, գորս կոչեցին ներածութիւն անուղից և համառօտ հաւարումն, ի թողն փրկչին 1688, որ է Հայոց ԹՄԷ, Օրսփորդի Bodleian Library Armentian Manuscript F. 12.

<sup>31</sup> Տես՝ «Գիրք թղթոց», էջ 220—233:

<sup>32</sup> Անդ, էջ 234—238:

<sup>33</sup> Տես՝ «Յովհաննոս իմաստասիրի Աձնեցոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1833:

Հովն. Օձնեցո անուով հրատարակված կա հակաքաղկեդոնական մի ուրիշ գրվածք ևս՝ «Խոստովանութիւն անշարժ յոսոյ մարմնացելոյ Բանին՝ Քրիստոսի, և ընդդէմ դաւանողաց զմի Քրիստոս յերկուս ընթիւն», Արարատ, 1896, էջ 192—199: Լույս է տեսել նաև առանձին (տպ. Վաղարշապատ, 1896): Բայց Նորայր Ն. Բյուզանդացին այս ճանր վերագրում է Յովհաննոս Դրասխանակերտցուն, տես նրա հոդվածը՝ «Յովհաննոս Դրասխանակերտցոյ (պատմագրին) նորագիտ մի ճանրն», Հանդէս Ամսօրեայ, 1897, էջ 157:

<sup>34</sup> Տես նետկալ հրատարակության մեջ. «Թուղթ ընդհանրական արարեալ կրիցս երանեալ սուրբ հայրապետին մերոյ տեառն Ներսիսի Ընորհալոյ», Էջմիածին, 1865, էջ 113—280:

Առ այժմ հնարավոր չէ ասել, թե մեր ցուցակում ի՞նչ ուղիով է առաջացել **միաբանութիւն** բառի արտակարգ աղավաղումը. ճիշտ են մնացել նրա միայն առաջին երեք տառերը (Mia-).

<sup>35</sup> Հայերեն թարգմանությունը՝ «Առարմնն ի մեծէն կայսրէ Մանուէլ առ Հայս, յորում դին տրամարանութիւնն, գոր արար հրեշտակն Յունաց Տրիանէ ընդ կաթողիկոսին Հայոց՝ տեառն Ներսէսի», տես հետևյալ հրատարակության մեջ. «Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցոյն ընդ մեծի սուրբ եկեղեցոյն Հռովմայ... ի կարգէ Թեոփիստաց Կղեմէս վարդապետէ», հատ. Ա, Հոռոմ, 1890, էջ 242—322:

<sup>36</sup> Այս բանակցություններին վերաբերող հայկական և հունական վավերագրերի միջև եղած հակասությունների մասին տես՝ Լ. Ա. Անապան, «Ներսես Ընորհալուն և 'Արման Հաւատոյ' ժողովածուն» հոդվածը, էջ 84:

<sup>37</sup> «Տեառն Միխայելի պատրիարքի Ասորոց ժամանակագրութիւն», Երուսաղէմ, 1870: Գոյություն ունի նաև նրա մի համառոտ խմբագրությունը՝ «Ժամանակագրութիւն տեառն Միխայելի Ասորոց պատրիարքի, հանեալ ի հնագոյն գրչագրէ», Երուսաղէմ, 1871:

<sup>38</sup> «Թուղթ կրանելոյն Պողոսի Տարոնացոյ յաղթող

ծերը՝ «Ընդդէմ ժողովուն Քաղկեդոնի»<sup>39</sup> և «Վերամտօրոյնը կարգաց եկեղեցոյ»<sup>40</sup>:

8. Octavensis, Toctanensis, Occenensis<sup>41</sup>. **Ուխտանէս.**—Բացատրություն չի տրվում:

Նկատի ունի ժ դարի պատմագիր Ուխտանէսին և նրա «Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց» երկը, որը գրված էր Անանիա Նարեկացու առաջարկով: Այս երկը նրա եռամսանյա պատմագրութեան երկրորդ մասն է կազմում<sup>42</sup> և հակաքաղկեդոնական խիստ ոգի է ցույց տալիս վրացական եկեղեցու բաժանման կապակցությամբ:

9. Liber Matthaeus. **Մատթէոս-գիրք.**—Բացատրություն չի տրվում:

Նկատի ունի ժԲ դարի պատմագիր Մատթէոս Ուոհայեցու «Ժամանակագրութիւն»-ը<sup>43</sup>, որն ամեն առիթով խարանում է քաղկեդոնականության գաղափարը՝ հայբյուզանդական հարաբերությունները նկարագրելիս:

10. Canones apostolorum, Liber Canonum apostolorum. **Կանոնք առաքելականք.**—Ասվում է, որ «պարունակում է հայոց բոլոր սուրբությունները»:

Հայկական Կանոնագրքի սկզբում գտնվում են երկու կանոնախմբեր, որոնք անվանվում են **Առաջին առաքելական կանոններ** և **Երկրորդ առաքելական կանոններ**: Առաջինը խորագրված է՝ «Սահմանք և կանոնք զոր եղին աշակերտքն Քրիստոսի եկեղեցոյ սրբոյ՝ լետ վերանալոյ Տեառն»<sup>44</sup>, իսկ երկրորդը՝ «Սահմանք և կանոնք սուրբ առաքելոցն՝ ի ձեռն Կղեմայ, առաքել Բեթանուսաց»<sup>45</sup>: Ցուցակը նկատի ունի միայն առաջին կանոնախումբը, որի ծագումն անորակն է<sup>46</sup> և որը, որպէս անվավեր, ան-

ընդունելի էր հունական և լատինական եկեղեցիների համար:

11. Liber Sergniz, Sergium<sup>47</sup>. **Սարգիս-գիրք.**—Բացատրություն չի տրվում:

ԺԲ դարի հեղինակ Սարգիս Ենորհալու «Մեկնութիւն եօթանց թոթոց կաթողիկեայց» երկն է<sup>48</sup>, որի մասին Չամչյանն ասում է, թէ ձեռագիր օրինակներում «բարձեպ են ոմանք զայլ և այլ բանս ուղղափառ վարդապետութեան նորա, որպէս յայտնի տեսանի հետաքնին ընթերցողաց: Չայս վկայէ և Մխիթար Ապարանեցի, որ էր ի կարգէ ունիթոսաց. որ և ըստ վկայելոյ իրոյ՝ ասն յիսուն դեգերեպ էր լընթերցմունս հին մատենից գրութեան նախնեաց մերոց, և հաստատէ բանիք թէ ինչ ինչ փոփոխեպ է ի գիրս Սարգիս ի տգիտաց»<sup>49</sup>: Սարգիս Ենորհալին, որը հեղինակ է նաև ուրիշ երկերի, Քարաշիթալի վանականներին էր<sup>50</sup>:

12. Liber Marucha, Marocha. Ասվում է, թէ Ավետարանների մեկնությունն է, որն այդպէս է կոչվում հեղինակի անունով:

Մայրագումեցին է. այդ մասին՝ ստորև:

13. Liber Nanam, Ranam, Vanam<sup>51</sup>. **Նանան-գիրք.**—Ասվում է, որ Հովհաննու Ավետարանի մեկնությունն է:

Հայտնի Նանա կամ Նանան<sup>52</sup> ասորի հեղինակի գիրքն է: Թ դարի միաբնակ՝ հակոբիկյան այս հեղինակը մտտիկ հարաբերությունների մեջ էր եղել հայերի հետ<sup>53</sup>:

<sup>47</sup> Այս անուն, ասանց տարակույսի, գրված է եղել Sarquis կամ Serquis ձևով: Միջին հայերենի գի վանկը qui ձևով տալը սովորական է այս ցուցակի համար (տես նաև ստորև՝ ծան. Ռ Ռ 67 և 78): Այստեղ՝ qui վանկը տառերի շփոթմամբ նախ դարձել է gui և ապա՝ gni և giu. իսկ բառավերջի s-ը դարձել է z և m.

<sup>48</sup> «Մեկնութիւն եօթանց թոթոց կաթողիկեայց, արարեպ երանելոյն Սարգիս շնորհալից վարդապետի՝ Հայոց իմաստասիրի և քաջ հետորի», Կ. Պոլիս, 1826:

<sup>49</sup> Չամչյան, հտ. Գ, էջ 398:

<sup>50</sup> Չամչյան, հտ. Գ, էջ 56—57, 397—400: Հ. Գ. Զարբհանալյան, «Պատմութիւն հայ հին դպրութեան», Վնենտիկ, 1932 էջ 643—647:

<sup>51</sup> Ծփոթումներ՝ n-r, n-v, n-m.

<sup>52</sup> Հայ պատմական արդյուրներում հիշատակվում է երկու ձևով էլ. տես՝ «Հասարմն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեպ», Վնենտիկ, 1862, էջ 78 և 82 (Նանա): «Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն Հայոց», Երևան, 1961, էջ 79 (Նանան):

<sup>53</sup> Ալիմյան, «Թեոդորոս Ապիկուոս և Նանա Ասորի Հայաստանի մէջ և Նանայի Յովհաննու մեկնութեան հայերէն թարգմանութիւնը», Հանդէս Ամսօրեպ, 1922, էջ 193—205, 357—368, 417—428:

ախոյեան վարդապետի ընդդէմ Թեոփիստեպ», Կ. Պոլիս, 1752:

<sup>39</sup> Տես՝ «Գիրք ժողովածոյ ընդդէմ երկաբնակաց», Նոր-Ջողա, 1688, էջ 376—450: Տարունցու այս երկը նախորդի համատու խմբագրությունն է:

<sup>40</sup> Վնենտիկի Մխիթարյան Մատենադարանի ձեռ. Ռ 304, էջ 60բ—63բ:

<sup>41</sup> Ծփոթում՝ t-c, a-e, n-v.

<sup>42</sup> Ուխտանէսի եռամսանյա պատմության Գ մասը կորած է. իսկ Ա և Բ մասերը հրատարակված են միասին. «Ուխտանէս եպիսկոպոս: Հատուած առաջին. Պատմութիւն Հայոց: Հատուած երկրորդ. Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց», Վաղարշապատ, 1871:

<sup>43</sup> «Մատթէոս Ուոհայեցի. Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898:

<sup>44</sup> Տես՝ «Կանոնագիրք Հայոց» (հրատ. Վազգեն Հակոբյանի), հտ. Ա, Երևան, 1964, էջ 18—66:

<sup>45</sup> Տես՝ անդ, էջ 67—100:

<sup>46</sup> Հ. Հ. Տաշյան, «Վարդապետութիւն առաքելոց անվանեալան մատեանը, 1896:

Հայոց պատրիկ Աշոտ Մասկերի իշխանության օրով, 812 թվականին, երբ նրա արքունիքում քաղկեդոնական գաղափարների քարոզությանը էր զբաղվում եղևուսցի Թեոդորոս Աբու-Կուռա (Եպիկուրոս) եպիսկոպոսը, Նանա Ասորին գալով այնտեղ՝ սարսնել էր նրա հետ և, հաղթելով, նրան հալածել էր սովել այնտեղից<sup>54</sup>:

Այլեի ուշ՝ հայոց պատրիկ Բագարատ Բագրատունու օրով, 835 թվականին, նորից է հիշատակվում Նանա Ասորին, որի մասին Չամչյանի մոտ կարդում ենք.

«Եւ էր ի նմին ժամանակի սարկաագապետ ոմն ասորի՝ Նանա անուն, այր բանիքուն և փիլիսոփայ. խնդրեաց ի սմանէ Բագարատ՝ յօրինել զմեկնություն Յովհաննու Աւետարանին. և նորա առանձնացեալ անս երիս ի կողմանս Միջագետաց՝ յօրինեաց զայն ասորերէն՝ քաղեալ ի մեկնութենէ Յովհաննու Ոսկեքերանի. և այսա թարգմանեաց ինքն ի լեզու Հագարացոց և ընծայեաց Բարսղատայ, որովհետև քաջ գիտէր նա զայս լեզու: Եւ զայս գիրք լետոյ են թարգմանել ի հայս Սմբատ Բագրատունի»<sup>55</sup>:

Նանայի այս «Մեկնություն Յովհաննու Աւետարանին»<sup>56</sup> երկն է, որ նկատի ունի ցուցակը:

14. Liber Ignadius. Իզնատիոս-գիրք.— Ասվում է, որ Ղուկասու Ավետարանի մեկնությունն է:

Նկատի ունի ԺԲ դարի հեղինակ՝ Սև լեռան Ծափիթին անապատի վանականներից Իզնատիոս վարդապետի<sup>57</sup> գրած մեկնությունը<sup>58</sup>, որում, ինչպես Չամչյանն էասում, կային «բազում ինչ խորոյ և անկարգ» (իմա՝ լատիներեի համար անընդունելի գաղափարներ ու արտահայտություններ), որոնք իր՝ Չամչյանի կարծիքով անհավատարիմ գրիչների կողմից էին մուծված այդ երկի մեջ<sup>59</sup>:

15. Liber Ganazan, Guanazan, Guanzam<sup>60</sup>. Տրված է ավան լատիներեն թարգ-

մանությունը՝ «Liber virgarum», այսինքն՝ **Գիրք գառազանաց** կամ **Գառազանագիրք**: **Գառազան** նշանակում է «իշխանություն», «կարգ և աղիասկ նահապետաց, թագաորաց, իշխանաց, հայրապետաց և այլն»<sup>61</sup>:

Հայ միջնադարյան գրականության մեջ կան թագավորների, կաթողիկոսների և այլ իշխանավորների մի շարք գավազանագրքեր. քայց այնպիսին, որը կարող էր սուսրկա լինել քաղկեդոնականների ատելությանն ու թշնամական վերաբերմունքին, էր հռոմեական ու բյուզանդական կայսրերի այն ժամանակագրական պատմությունը կամ գավազանագիրքը, որը բանասիրության մեջ հայտնի է **Կաչերաց գիրք** անունով և, անստարակույս, այդ անանուն երկի մասին է խոսքը մեր սույն ցուցակում:

Կաչերաց գիրքը (բնագրի խորագրով՝ «Կաչերք Հոռուպեցոց և գործք ևոցա» կամ «Կաչերք Հոռուոց») կցված է է դարի երկրորդ կեսում Անանիա Ծիրակացու ձեռքով խմբագրված ժամանակագրությանը, որ ստացին անգամ, 1904 թ., հրատարակեց Հ. Բ. Սարգիսյանը<sup>62</sup> և հետո, 1943 թ., Ա. Գ. Աբրահամյանը<sup>63</sup>: Կաչերաց գիրքը ձեռագրերում հաճախ է պատահում անհնձին<sup>64</sup> և հիմքեր չկան պնդելու, թե Ծիրակացին ինքն է այն կցել իր խմբագրած ժամանակագրությանը:

Կաչերաց գրքի աղբյուրները թեև լրիվ չեն ուսումնասիրված տակավին, քայց Սար-

հայերենի արտասանությանը, qavazan, և սույս դարձել է quavazan, այն բանի հետևանքով, որ լատիներենը q տառի գործածությունը չգիտի առանց u-ի: Այս հաշվով՝ հայերեն **գա** վանկն այստեղ արտահայտված է զա կամ quա ձևով, ինչպես **գի** վանկն արտահայտված էր qui ձևով (հմտ. վերեվում ծան. 47). իսկ զա կամ quա վանկը շփոթմամբ դարձել է ga և gua: Qavazan-ի երկրորդ և երրորդ վանկերում տեղի են ունեցել նաև v-n և n-m շփոթումներ:

<sup>61</sup> «Նոր բառգիրք հայկազեան լեզուի, երկասիրություն երից վարդապետաց յաշակեթոտութենէ մեծին Մխիթարայ արքայաօր՝ Հ. Գարրիելի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիւրմելեան, Հ. Մկրտչի Անգերեան», հտ. Ա, Վեներտիկ, 1836, էջ 532:

<sup>62</sup> «Անանուն ժամանակագրություն խմբագիր յօրինեալ լ'է: դարու ի հնագոյն ժամանակագրաց և հրատարակեալ ներածութեամբ և քաղղատութեամբ», Վեներտիկ, 1904, էջ 35—80:

<sup>63</sup> «Անանիայի Ծիրակացոյ համարողի մատնագրությունը: Տեքստը մշակեց և հրատարակության համար պատրաստեց պրոֆ. դ-ր Ա. Գ. Աբրահամյան», Երևան, 1943, էջ 378—399:

<sup>64</sup> Երևանի Մաշտոցյան Մատ. ձեռ. № 7993 (էջ 193ա—206ա), Վեներտիկի Մխիթարյան Մատ. ձեռ. № 261 (էջ 85ա—97բ) և ուրիշներ:

<sup>54</sup> «Հասարմն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսարանագ», էջ 78:

<sup>55</sup> Չամչյան, հտ. Բ, էջ 441:

<sup>56</sup> «Նանայի Ասորոց վարդապետի Մեկնություն Յովհաննու Աւետարանին», Վեներտիկ, 1920: Հրատարակվել է Հ. Բ. Չրաքյանի աշխատասիրութեամբ:

<sup>57</sup> Չարրիանայան, էջ 642—643:

<sup>58</sup> «Մեկնություն սրբոյ Աւետարանին, որ ըստ Ղուկասու, արարեալ սուրբ վարդապետին Իզնատիոսի, ի խնդրոյ տեսնո Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի», Կ. Պոլիս, 1824:

<sup>59</sup> Չամչյան, հտ. գ, էջ 57:

<sup>60</sup> Այս անունն, իհարկե, գրված է եղել, միջին

գիսյանի ուշադրությունից չէր վրիպել, որ նրանում Թեոդոս Գորքի թաավորությանը հաջորդող շրջանի համար, հատկապես եկեղեցական պատմության Վարքերյալ, տեղեկությունները պետք է մեծ մասամբ հավաքված լինեն Զ դարում և է-ի ռաջին կետում գրված ասորական և հայկական այնպիսի հիշատակարաններից, ունք միաբնակների կուսակցական ոգով են և գործված<sup>65</sup>: Եվ իրոք, սկսելով խոսել Մար կհանոսի թագավորության (450—457 թթ.) մասին, Կայերաց գրքի հայ խմբագիրը բննադատաբար ասում է, որ նա, Մարկիանոսը, «քինախնդիր եղեալ լուծմանն Նեստորի... զի էր ինքն նորին աղանդոյ առաւել ևս վարժեալ», նրան (Նեստորին) արդարացնելու համար գումարեց Քաղկեդոնի ժողովը՝ Հոմի Լևոն Ա պապի հետ գործակցաբար. և ապա, վերջինիս ևս անվանելով «աղանդակից Նեստորի խոստովանութեանցն», «նախնական հայհոյիչ» և «ըսկրքբնաւոր ժողովոյն Քաղկեդոնի և արիմադրաւոր երկուց բնութեանց», շարունակ դատաւիտում է Քաղկեդոնը՝ որպէս «կործանական ժողով», «հայհոյիչ ժողով» և այլն, և նրա որոշումները՝ «Ղևովնի հայհոյութիւնը», «գիր հայհոյութեանցն Ղևովնի», «հայհոյութիւնը և անարէն սահմանադրութիւն», «պիղծ սահմանադրութիւն» և այլն, և այս ձևով հասցնում մինչև Կոստանդ Պոզոնասոս կայսեր հրաւերով 681 թ. Կ. Պոլսում գումարված ժողովը, որ քաղկեդոնականներն անվանում են վեցերորդ տիեզերական, և որի մասին այստեղ ասվում է, թէ «հիմնադրեալ զհայհոյութիւն պղծոյն Ղևոնի, շինեցին ի վերայ զաւելարեալ ուրացութիւնն Մարտինոսի և Մաքսիմոսի՝ երկու բնութիւնս, և երկու կերպարանս, և երկու ներգործութիւնս, և երկու կամս ի վերայ Բրիստոսի աւելով»<sup>66</sup>:

16. **Pataraquin Mehging, Pataraquin Mehging, Neginus Pataraquin, Naguig Pataracum**<sup>67</sup>. Ասվում է, թէ Պատարագի մեկնությունն է, ուստի՝ **Մեկնիչ պատարագին**:

Հայտնի չէ, թե ո՞ր գրքի մասին է խոսքը: Նման գործեր ունեցող հեղինակներ են՝

<sup>65</sup> Տես «Անանուն ժամանակագրութիւն...», Ներածութիւն, էջ ԺԲ:  
<sup>66</sup> Տես անդ, էջ 63—79:  
<sup>67</sup> Այստեղ պատարագին բառի վերջին վանկը գրված է quin ձևով (գի-qui համեմատության մասին տես վերևում ծան. 47), որն, այլալիլով, դարձել է նաև cum: Իսկ մեկնիչ բառի առաջին վանկը գրված է եղել meq, որը դարձել է mehg, mebg, neg և nag. երկրորդ վանկը գրված է եղել nig, որը դարձել է uig, ing և inus.

Խոսքով Անձևացի<sup>68</sup>, Ներսես Լամբրոնացի<sup>69</sup>, Հովհաննես Արճիշեցի<sup>70</sup>, Մովսես Երզնկացի<sup>71</sup>, Հովհաննես Պլուզ<sup>72</sup>:

17. **Textorquire. Teytorgunt**<sup>73</sup>. Տրված է անվան թարգմանությունը՝ «Liber epistolarum», ուրեմն՝ **Թղթոց գիրք**:

Նկատի ունի պատմական ու դավանաբանական վավերագրերի այն հայտնի ժողովածուն, որ «Գիրք թղթոց» անունով ունենք մեր ձեռքում<sup>74</sup> և որի վերջնական խըմբագրումը այսօրվա կազմով, ավարտվել էր 298 թվականին<sup>75</sup>: Այս ժողովածուի նպաստը եղել է փաստագրական նյութեր հայրակալ քաղկեդոնականության ու նեստորիության դեմ տարվող գաղափարախոսքի համար:

18. **Aysyjano anorc, Aismanore, Aismavort, թունը՝ «ՄՏրված է անվան թարգմանությունն), ուրեմն՝ «rologium» (Վկայաբանության վավերագրեր, որոնք վարկ կոչվում այն մատյանում վկայաբանություն**

<sup>68</sup> «Խոսքովս Անձևացես.  
<sup>69</sup> «Սրբոյն Ներսեսի Լամբրոնացի, 1869:  
 պիսկոպոսի խորհրդածութիւնը ի՞նչ Տարսնի եւոյ և մեկնութիւն խորհրդոյ Պատարագ եկեղեցւոյ, 1847:  
<sup>70</sup> «Մեկնութիւն անաոր խորհրդոյ սրբոյ, րագին, արտահանեալ ի մեկնութեանց Խոստան Անձևացեաց եպիսկոպոսի և Ներսեսի Լամբրոնացւոյ՝ վերատեսչին Տարսնի, կարճելով և պարզաբանելով Յովհաննէս Արճիշեցւոյ, Կալկաթա, 1830:  
<sup>71</sup> Հմմտ. Ալիշան, «Հաղպատում», մասն Բ, էջ 507, ծան. 2: Հ. Բյուրոյան, «Երիզա և Եկեղեցաց գաւառ», Վեհախիկ, 1953, էջ 260—261: Եզնիկ արք. Պետրոսյան, «Մովսէս Երզնկացոյ Վատարումն համատում...՝ աշխատութիւնը», Էջմիածին, 1973, № 9, էջ 14—20. № 11, էջ 43—48:  
<sup>72</sup> Հմմտ. Բյուրոյան, էջ 211:  
<sup>73</sup> Թղթոց գիրք անունը, ըստ երևույթին, գրված է եղել Tectos quire, որը տառերի շփոթմամբ դարձել է Textorquire: Արդեն խոսեցինք գի-qui համեմատության մասին (տես վերևում ծան. 47). quire (գիրք) բառի վերջում տեղի է ունեցել e և e տառերի շփոթում: Իսկ Teytorgunt-ի մեջ quire բառի աղավաղումը եղել է պապես. qu-gu և ire-nt:  
<sup>74</sup> Տես հրատարակությունը՝ «Գիրք թղթոց. Մատենագրութիւն նախնաց», Թիֆլիս, 1901:  
<sup>75</sup> Ալիևյան, «Կիրիլոն կաթողիկոս Վրաց», էջ 37—44:  
<sup>76</sup> Առաջին երեք տարբերակներն ակներևորեն մոտիկ են հայերեն Յայսմատոյր բառին: Ամենայն հավանականությամբ գրված է եղել Aismavurc, որն աղավաղվել է v և n, a և o, u և o, c և e կամ է տառերի շփոթումով. իսկ չորրորդ տարբերակն անցել է աղավաղման ամեն սահման:

ներ էին բովանդակում հայ եկեղեցում ընդունված տոների կարգով և արարողությունների ընթացքում ընթերցվում էին համապատասխան օրերին:

Հայամալորքը սկզբնապես ասորական և հայկական արքյորների հիման վրա կազմվել էր Թ դարում՝ Ս. Ատոմի ուխտի վանահայր Գագիկի ձեռքով և այդ պատճառով անվանվել էր Ատոմադիր. իսկ հետագայում նորանոր խմբագրությունների էր ենթարկվել ու ընդլայնվել՝ հունական, ասորական և հայկական արքյորներից առնված այլ նյութերով<sup>77</sup>: ԺԳ դարում ստեղծվել էր այդպիսի ժողովածուների մի կայուն խմբագրություն, որը պաշտոնական գործածությանը էր և ծանոթ էր Տեր Իսրայել Կեղեցուն<sup>78</sup>: ցու (մտ. 1249 թ.) Հայամալորքը լորական Անշուշա սա է, որ նկատի ունի խորքի հագրքերի ցուցակը և որը, որպես խորքի համարվող նյութերի հավաքարձ, արհամարհանելի նյութերի հավաքարձ համար: Տեր հեղի էր լատին գործիչներ Իսրայելի Հայամալորքի քիչ հետո հրատարակված նոր Հայամալորքները, որ պարակ էկած նոր Հայամալորք էին Կիրակոս նրա հիման վրա կազմվել էին Կիրակոս Անալարզեցին<sup>80</sup>, ար-

<sup>77</sup> Չամչյան, Բ, 197, 198, 199, 200, 201, 202, 203, 204, 205, 206, 207, 208, 209, 210, 211, 212, 213, 214, 215, 216, 217, 218, 219, 220, 221, 222, 223, 224, 225, 226, 227, 228, 229, 230, 231, 232, 233, 234, 235, 236, 237, 238, 239, 240, 241, 242, 243, 244, 245, 246, 247, 248, 249, 250, 251, 252, 253, 254, 255, 256, 257, 258, 259, 260, 261, 262, 263, 264, 265, 266, 267, 268, 269, 270, 271, 272, 273, 274, 275, 276, 277, 278, 279, 280, 281, 282, 283, 284, 285, 286, 287, 288, 289, 290, 291, 292, 293, 294, 295, 296, 297, 298, 299, 300, 301, 302, 303, 304, 305, 306, 307, 308, 309, 310, 311, 312, 313, 314, 315, 316, 317, 318, 319, 320, 321, 322, 323, 324, 325, 326, 327, 328, 329, 330, 331, 332, 333, 334, 335, 336, 337, 338, 339, 340, 341, 342, 343, 344, 345, 346, 347, 348, 349, 350, 351, 352, 353, 354, 355, 356, 357, 358, 359, 360, 361, 362, 363, 364, 365, 366, 367, 368, 369, 370, 371, 372, 373, 374, 375, 376, 377, 378, 379, 380, 381, 382, 383, 384, 385, 386, 387, 388, 389, 390, 391, 392, 393, 394, 395, 396, 397, 398, 399, 400, 401, 402, 403, 404, 405, 406, 407, 408, 409, 410, 411, 412, 413, 414, 415, 416, 417, 418, 419, 420, 421, 422, 423, 424, 425, 426, 427, 428, 429, 430, 431, 432, 433, 434, 435, 436, 437, 438, 439, 440, 441, 442, 443, 444, 445, 446, 447, 448, 449, 450, 451, 452, 453, 454, 455, 456, 457, 458, 459, 460, 461, 462, 463, 464, 465, 466, 467, 468, 469, 470, 471, 472, 473, 474, 475, 476, 477, 478, 479, 480, 481, 482, 483, 484, 485, 486, 487, 488, 489, 490, 491, 492, 493, 494, 495, 496, 497, 498, 499, 500, 501, 502, 503, 504, 505, 506, 507, 508, 509, 510, 511, 512, 513, 514, 515, 516, 517, 518, 519, 520, 521, 522, 523, 524, 525, 526, 527, 528, 529, 530, 531, 532, 533, 534, 535, 536, 537, 538, 539, 540, 541, 542, 543, 544, 545, 546, 547, 548, 549, 550, 551, 552, 553, 554, 555, 556, 557, 558, 559, 560, 561, 562, 563, 564, 565, 566, 567, 568, 569, 570, 571, 572, 573, 574, 575, 576, 577, 578, 579, 580, 581, 582, 583, 584, 585, 586, 587, 588, 589, 590, 591, 592, 593, 594, 595, 596, 597, 598, 599, 600, 601, 602, 603, 604, 605, 606, 607, 608, 609, 610, 611, 612, 613, 614, 615, 616, 617, 618, 619, 620, 621, 622, 623, 624, 625, 626, 627, 628, 629, 630, 631, 632, 633, 634, 635, 636, 637, 638, 639, 640, 641, 642, 643, 644, 645, 646, 647, 648, 649, 650, 651, 652, 653, 654, 655, 656, 657, 658, 659, 660, 661, 662, 663, 664, 665, 666, 667, 668, 669, 670, 671, 672, 673, 674, 675, 676, 677, 678, 679, 680, 681, 682, 683, 684, 685, 686, 687, 688, 689, 690, 691, 692, 693, 694, 695, 696, 697, 698, 699, 700, 701, 702, 703, 704, 705, 706, 707, 708, 709, 710, 711, 712, 713, 714, 715, 716, 717, 718, 719, 720, 721, 722, 723, 724, 725, 726, 727, 728, 729, 730, 731, 732, 733, 734, 735, 736, 737, 738, 739, 740, 741, 742, 743, 744, 745, 746, 747, 748, 749, 750, 751, 752, 753, 754, 755, 756, 757, 758, 759, 760, 761, 762, 763, 764, 765, 766, 767, 768, 769, 770, 771, 772, 773, 774, 775, 776, 777, 778, 779, 780, 781, 782, 783, 784, 785, 786, 787, 788, 789, 790, 791, 792, 793, 794, 795, 796, 797, 798, 799, 800, 801, 802, 803, 804, 805, 806, 807, 808, 809, 810, 811, 812, 813, 814, 815, 816, 817, 818, 819, 820, 821, 822, 823, 824, 825, 826, 827, 828, 829, 830, 831, 832, 833, 834, 835, 836, 837, 838, 839, 840, 841, 842, 843, 844, 845, 846, 847, 848, 849, 850, 851, 852, 853, 854, 855, 856, 857, 858, 859, 860, 861, 862, 863, 864, 865, 866, 867, 868, 869, 870, 871, 872, 873, 874, 875, 876, 877, 878, 879, 880, 881, 882, 883, 884, 885, 886, 887, 888, 889, 890, 891, 892, 893, 894, 895, 896, 897, 898, 899, 900, 901, 902, 903, 904, 905, 906, 907, 908, 909, 910, 911, 912, 913, 914, 915, 916, 917, 918, 919, 920, 921, 922, 923, 924, 925, 926, 927, 928, 929, 930, 931, 932, 933, 934, 935, 936, 937, 938, 939, 940, 941, 942, 943, 944, 945, 946, 947, 948, 949, 950, 951, 952, 953, 954, 955, 956, 957, 958, 959, 960, 961, 962, 963, 964, 965, 966, 967, 968, 969, 970, 971, 972, 973, 974, 975, 976, 977, 978, 979, 980, 981, 982, 983, 984, 985, 986, 987, 988, 989, 990, 991, 992, 993, 994, 995, 996, 997, 998, 999, 1000

<sup>78</sup> Հայամալորքի ձեռագիր օրհանկներ շատ կան նրանից հետո Մատենադարանում և այլուր, երևանի կրանց մեջ ո՛րն է Տեր-Իսրայելի Հայարացիի հարագատ օրհանկը՝ դեռ լուծելի հարց է: Մանկանց դեպ Տեր Իսրայելի անունով 1834 թ. հրատարակված և հետո 1910—1980 թթ. Փարիզում հրատարակված Հայամալորքները Տեր Իսրայելի օրհանկը չեն ներկայացնում: Այս հարցի մասին տես P. Peeters-ի հոդվածը, «Pour l'histoire du synaxaire arménien», *Analecta Bollandiana*, Bruxelles, t. XXX, 1911, p. 5—26. Այստեղ նշենք, որ մեր «Հայկական մատենագիտության» հատորներում, վկայաբանական ու վարքագրական նյութեր նկարագրելիս, Տեր Իսրայելի խմբագրություն ենք անվանել միշտ այն բնագրերը, որոնք սուկա են Հայամալորքի հիշյալ երկու հրատարակություններում. պետք է ի նկատի ունենալ, որ այդ անվանումը պայմանական է:

Ըստ Հ. Ն. Ալիևյանի՝ Տեր Իսրայելի Հայամալորքի հիմքում ընկած էր 991/92 թթ. Հովսեփ Կ. Պոլսեցու կողմից թարգմանաբար խմբագրված հունական Տոնացոյց-Հայամալորքը, որի մեջ նա, Տեր Իսրայելը, Վանական վարդապետի հանձնարարությամբ, ավելացրել էր հայկական նյութեր. տես՝ *Հանդես Ամսօրեայ*, 1957, էջ 1—12:

<sup>79</sup> Կիրակոս Արևելցու Հայամալորքը կազմվել է 1252 թ.: Նրա մի ընտիր օրհանկն է՝ Երևանի Մաշտոցյան Մատենադարանի № 7433 ձեռագիրը:

<sup>80</sup> Գրիգոր Անալարզեցու Հայամալորքի մասին, որը կազմվել էր ԺԳ դարի վերջերին, տես Ալիշան, «Սիսուան», էջ 241:

դեն լատինական տոնացույցի ազդեցությանը էին ենթարկված:  
Մոլորական գրքերի ցուցակը փակվում է այն հայտարարությամբ, թե «հայերն ունեն ուրիշ շար գրքեր, որոնք պարունակում են բազմաթիվ մոլորություններ»:

Ինչպես տեսնում ենք՝ «մոլորական» գրքերի ցուցակը, որ 18 կետերից է բաղկացում, փաստորեն կարող էր պարունակել և պարունակում է ոչ թե 18 միավոր գիրք, այլ՝ ալեկի, որովհետև երեք որոշ կետեր ներկայացնում էին մեկական գիրք («Տունապատան», «Հատույ արմատ» և այլն), ուրիշներ ներկայացնում էին հեղինակների անուններ, որոնց յուրաքանչյուրի տակ բնույթից կարող էին հասկացվել մեկից ալեկի գրքեր («Յովհաննես Մանրակունի», «Յովհաննես Օձնեցի» և այլն): Եվ այդ գրքերը «մոլորական» համարվելու համար ունեին մի ընդհանուր հատկանիշ. անկախ այն հանգամանքից, թե դրանք զուտ դավանաբանական գրվածքներ էին կամ պատմական, իրենց ոգով ու էությունով բոլորն անխտիր կանգնած էին միաբնյա դավանության դիրքերի վրա: Քաղկեդոնականների համար սա էր այդ գրքերի հիմնական ու մեծագույն արատը:

Սակայն նկատելի է, որ մոլորական համարվող գրքերի և նրանց հեղինակների բնութագրումները բացակայում են լատինական ցուցակում. չի առված, թե ինչ ո՛ւմն էր կալանում նրանցից յուրաքանչյուրի մոլորականությունը: Այս առումով, և հարցի առաջին լուսաբանման համար, նպատակահարմար կլինեք դիմել Պալիեցի նախորդներից հատկապես Կեղծ-Դամասկացուն, որին հիշատակեցինք վերևում, որովհետև նրա «Պատասխանիք առ Հայս» գրվածքում հատուկ բնութագրմամբ հիշատակվում են գրքեր ու հեղինակների անուններ, որոնցից մի քանիսը նույնն են Պալիեցի լատիններեն վերոհիշյալ ցուցակում եղածների հետ:

Այս Կեղծ-Դամասկացին, հայերին 26 մեղադրական կետեր վերագրելուց հետո, բուն կերպով հարձակվում է նրանց վրա՝ երկարորեն կանգ առնելով զանազան հարցերի վրա. իսկ հայոց գրքերի կապակցությամբ գրում է.

«Եւ արդ՝ ասացէք, Սուրբն Գրիգորիոս ունէ՞ր գիրս, ունէ՞ր և կարգս եկեղեցոյ, ունէ՞ր պատարագի ալօթս, ունէ՞ր և եկեղեցի օրհանելոյ կարգս, ունէ՞ր եպիսկոպոսաց օրհնութիւնս և քահանայից և սարկաւազաց և դպրաց և կրօնաւորաց, ունէ՞ր և թաղման կարգս քահանայից և կրօնաւորաց: Այդ՝ ունէր ստոյգ և այնու կային զամս չորեք-հարիւր: Արդ՝ ո՞րք են այնոքիկ գրեալքն:

Եթե ոչ էին ընդունելիք, աստուածարեալքն և իմաստունքն այնք հույիք և վարդապետք և վկայք՝ ընդէ՛ր ընկալեալք այնի վարեցան .եթէ ընդունելիք էին, և նոքա ընկալան, և ո՛վ լա քան զնոսա էր, և զնոցայն առնէր: Եթե այն ընդունելի էր, զի՞նչ խորհեցա Յոհան Մանդակունի, զայս ամենայն նորս առնելով. զի՞նչ և Մաշտոց ձեր նոր կարգ, զի՞նչ Յոհան Մայրագոմեցի, զի՞նչ Եպիփան Կուզն, զի՞նչ Անանէ Ժիրակացունց գրեալն, զի՞նչ Անաստաս կաթողիկոսն, զի՞նչ Ուխտանէս, զի՞նչ Տօնապատճառն ձեր. ո՛չ այս ամենայն նոր և հակառակ անարեւոյցն դրուակի և նոցա եկեղեցեացն և ասանդից նոցա և Սրբոյն Գրիգորի և իւրոցն հետևողացն, և մինչև ցայսօր ամենայն քրիստոնեայք հակառակք են»<sup>81</sup>:

Կեղծ-Դամասկացին այլ հարցերի առթիվ նորից է հիշատակում «զԱնանէին մի բնակութեան արուեստս, կամ զՈւխտանէսի հայհոյութիւն Վրաց, կամ զՄաթիոսիկն պատմող, կամ զՏօնապատճառն»<sup>82</sup>: Իսկ հետո, նաև, անգիտաբար իրար խառնելով դեպքերն ու ժամանակները, գրում է, որ Եզրի կաթողիկոսութեան (630—641 թթ.) օրերին կերպած միությունից 160 տարի հետո (?) հայերը «ժողով արարեալ անդր ընդ Ասորեսաց ոմանց, ընկալան դարձեալ զմի բնութիւն և զԽաչեցարն ի Սուրբ Աստուածն ասել, և ընկեցեալ զբնան խորհրդական աղօթս և զկարգս՝ նորս արարին, գրեալս ձեռամբ Յովհաննու Մանդակունէի և Մաշտոցի. և յայնմ ժողովոյ, յետս ընկեցեալ զոսն Աւետեացն և զմարմնոյ Ծնունդն Տեանն, միայն Սկրտութիւնն տօնելով. և բազում պատճառս գրեցին այսորիկ և անընման յիւրեանց Տօնապատճառի» և այլն<sup>83</sup>:

Ինչպէս տեսնում ենք՝ Կեղծ-Դամասկացու գրությունը բավարար մանրամասնություններով է խոսում հայոց «մոլորական» գրքերի և «մոլորյալ» հեղինակների մասին<sup>84</sup>, և կարելի է առանց վարանելու ասել, թե լատինական ցուցակի բարկացուցիչ տարրերի մի որոշ մասը ժառանգություն էր Կեղծ-Դամասկացուն նմանվող բյուզանդական աղբյուրներից:

Տվյալ դեպքում՝ Կեղծ-Դամասկացու միջոցով նախ մենք լրացուցիչ տեղեկություններ ենք ստանում լատինական ցուցակում նշանակված անուններից Յովհաննէս Մանդակունու և Տօնապատճառի «մոլորականության» բնույթի վերաբերյալ. և երկրորդ՝ հաստատվում է, որ լատինական ցուցակի § 8 գրքի անունը, իրոք, ըստ մեր կուսման, Ուխտանէս-ն է, որը ձեռագրով գրված կլինէր Uctanensis, բայց ընդօրինակությունների և տպագրությունների ընթացքում աղավաղվել է. իսկ § 9 գիրքը, որը Մատթեոս-գիրք է կոչվում, իրոք պատմագիր Մատթեոս Ուոհայեցին է՝ «Մաթիոսիկն պատմող»: Բացի դրանից՝ Կեղծ-Դամասկացու գրությունը մեզ նաև թելադրում է մտածել, որ լատինական ցուցակի § 12 գիրքը, որը հեղինակի անունն է կրում և նըշված է Marucha կամ Marocha աղավաղ ձևով, կարող է լինել Մայրագոմեցի-ն (կամ Մայրագոմեցի), թեև նրա անունով Ավետարանների մեկնություն մեզ հայտնի չէ:

Սակայն՝ այստեղ ինքնաբերաբար, լատինական ցուցակի անողորակի թելադրանքով, սուսչ է գալիս «Յովհաննէս Մայրագոմեցի» և «Ավետարանների մեկնություն» զուգորդությունից բխող մի խնդիր: Կապվելով Մայրագոմեցի անվան հետ՝ ստիպված ենք մտածել, թե լատինական ցուցակի հիշատակած «Ավետարանների մեկնություն»-ն արդյոք այնպիսի մի գիրք չէ՞ր, որում, ի միջի այլոց, պարզաբանված էր Դուկասի Ավետարանի ԻԲ գլխի 43—44 համարներին<sup>85</sup> վերաբերող այն քննադատական կարծիքը, որ պաշտպանում էին մայրագոմեցի կոչված աղանդավորները: Է դարի վերջերին Թեոդորոս Բոթենավորի մի առաջի տեղեկանում ենք, որ մայրագոմեցի աղանդավորներն առարկելով, թե Բրիստոս «ոչ տկարութեամբ, այլ կարողութեամբ յաղթեաց մարտի թշնամույն», մերժում էին ընդունել վավերականությունը Ավետարանի հիշյալ տների, որոնք «յաղօթակացութեանն զահաքրտնութիւնն պատմեն ամենակարողի Բանին Աստուծոյ»<sup>86</sup>. իսկ Բոթենավորի աշակերտ Հովհաննէս Օձնեցին ասում էր, որ նրանք, Ավետարանում Բրիստոսի

<sup>81</sup> Լոյս, 1906, էջ 356—357:

<sup>82</sup> Անդ, էջ 475:

<sup>83</sup> Անդ, էջ 960:

<sup>84</sup> Մենք այստեղ աննկատ ենք թողնում լատինական ցուցակին չվերաբերող անունների կրկին ու կրկին հիշատակումները Կեղծ-Դամասկացու մոտ, ինչպէս՝ Մաշտոց, Եպիփան և Անանէ (անդ, էջ 475), Անաստաս կաթողիկոս և Անանիա Ժիրակացի, որոնք «Աստեալ ի տան միայն, գրեցին նոր տոմարս» (անդ, էջ 1124), դարձյալ Եպիփան (անդ, էջ 1125):

<sup>85</sup> Դուկ. ԻԲ 43—44 գրված է Հիսուսի մասին. «Եւ երևեցա մնա հրեշտակ յերկնից և զօրացուցանէր զնա. և էր ի տագնապի, և մտադիրութեամբ ևս կայր յաղօթս: Եւ հոսէին ի նմանէ քրտունք իրեն զկալյակս արեան ոլոռն ոլոռն հեղեալ յերկիր»:

<sup>86</sup> Տես Հովհաննէս Օձնեցու ճառերի վերջում, հետևյալ հրատ. մեջ. «Յովհաննու իմաստասիրի Աւճնեցոյ մատենագրութիւնք», Վեներիկ, 1833, էջ 148:

մարդկային որևէ հասկացման մասին խոսք տեսնելիս, հանդգնում էին «աներկիտաբար ի գրեցելոց անտի՝ որ զայնն քարոզէ՝ ի բաց ջնջել զբանն», ասելով, թե «որոմնացան մշակացն է զայդ սերմանեալ»<sup>87</sup>:

Ոչ այն նպատակով, որ պնդենք, թե մայրագոմեցի աշակերտների այս գաղափարների աղբյուրն անպայման Հովհաննես Մայրագոմեցու գրվածքներն էին, մենք կարող ենք առ այժմ մատուցուց անել այն փաստը, թե հոյեմատիոսի և Օձնեցու կողմից քննադատվող գաղափարներին հակադրված ենք նաև Յովհաննես Մայրագոմեցու **անունը կրող** ճառակն այն հատվածներում, որոնք մեզ հայտնի են «Կնիք հասատոյ» կոչված ժողովածուի միջոցով<sup>88</sup>:

Օրինակ՝ հենց այդ մասին են «Երանելուն Յովհաննես Մայրագոմեցոյ՝ ի հասատոյ բանն» խորագրված հատվածի հետևյալ տողերը.

«Բայց զայն ինչ, որ ո՛չ աստուածութեանն պատշաճի և ո՛չ մարդկութեանն և որին, զայն ո՛ւմ առարեացոյք\*, զո՞ւ արասցոյք պարտ. քանզի արեմաքիրտն լինել արտաքոյ է ամենայն բնութեանց, ո՞ւ մարթի հասատայ. քանզի Աստուած և մարդ և եր՞ զիտենք զՔրիստոս, և այլ ոչինչ, և այս ո՛չ յԱստուած յարի և ո՛չ ի մարդութիւն»<sup>89</sup>:

Բայց տվյալ դեպքում մենք դրանից անելի ուշադրություն կհրավիրենք մի տեղեկության վրա, որին պատահում ենք բյուզանդական «Narratio de rebus Armeniae»-ում՝ հայկական ծագում ունեցող քաղկեդոնական այդ անանուն գրվածքում, նկատի ունենալով, որ դա Հովհաննես Մայրագոմեցու մասին քաղկեդոնական աշխարհում թշնամական կարծիքներ տարածող աղբյուրներից մեկն է: «Narratio»-ում ասվում է, որ Հովհաննես Մայրագոմեցին հերետիկոսների ձեռքով կատարված մոծումներից էր համարում Ղուկասի Ավետարանի վերոհիշյալ երկու համարները<sup>90</sup>:

Մենք չենք խոսում այն մասին, թե ո՛րքան կարող է ստույգ լինել այս գաղափարների վավերականությունը՝ որպես Հովհաննես Մայրագոմեցու սեփականություն, ինչպես և այն մասին, թե այստեղ խնամիական կապեր են նկատվում «Կնիք հասատոյ»-ի

և «Narratio»-ի միջև: Այդ հարցերին հանգամանորեն կանոնադասունանք ուրիշ առիթով: Միայն ասենք, որ, խնամիական այդ կապը հաշվի առնելուց հետո, հարկ կլինի ընդունելի համարել հետևյալը: Եթե «Կնիք հասատոյ»-ում գտնվող և Մայրագոմեցու **անունը կրող** հատվածներից մեկը նրա է տվել «Narratio»-ին՝ Մայրագոմեցու մասին «հերետիկոսական» մեղադրանք արձանագրելու համար, ապա և պարզ է, որ քաղկեդոնական աշխարհին ծանոթ կլինելու ևս այդ նույն հատվածների ամբողջ բովանդակությունը: Եվ եթե մենք փորձենք այստեղ որոնել լատինական ցուցակի § 12-ում հիշատակված «Ավետարանների մեկնության» հետքերը՝ ձեռնունայն չենք մնա: Մայրագոմեցու անունը կրող այդ հատվածներում Ավետարանների ոգու, նրանց վկայություններից թխող վարդապետական տեսությունների և Քրիստոսի մարմնավոր կյանքի երկվայությունի վերաբերյալ յուրովի մեկնաբանություններ կան. այնպես որ լատինական ցուցակում երևացող Maruchia կամ Marochia անունը, մեր կարծիքով, ներկայացնում է **Մայրագոմեցի (Մայրագոմեցի)** անունը: Եվ արդեն զարմանալի կլինել, եթե լատինական ցուցակի հեղինակին ծանոթ եղած չլինել իր հակաքաղկեդոնական գործունեությանը քաղկեդոնական աշխարհում այնքան հայտնի Մայրագոմեցին, որի մասին առելու լուրջ տեղ են խոսում ոչ միայն վերոհիշյալ «Narratio de rebus Armeniae»-ն (Ը դարի սկիզբ), այլև Փոտ պատրիարքի (Թ դ.)<sup>91</sup> ու Արսեն Սափարացին (Թ դ.)<sup>92</sup>: Մենք արդեն տեսանք, թե Մայրագոմեցու մասին ինչպիսի՞ ատելությամբ է խոսում նաև Կեղծ-Դամասկացին, որի ժամանակը, մեր կարծիքով, չի կարող լինել ավելի վաղ, քան ԺԲ դարի երկրորդ կեսը, քանի որ այնտեղ հիշատակվում է **Մաթիոսիկն պատմող**՝ Մատթեոս Ուոհայեցին:

Ահա այն նպատակը, որ Կեղծ-Դամասկացու «Պատասխանիք ստ Հայս» գրվածքը բերում է լատինական ցուցակի քննությանը ոչ միայն § 12 կետում **Մայրագոմեցի (Մայրագոմեցի)** անվան հայտնաբերմամբ և մի քանի այլ անունների ստուգմամբ, այլև որոշ լույս սփռելով ցուցակի ամբողջ պարունակության վրա՝ ըստ էության և ըստ բնույթի: Ներսես Պալիեցը Կեղծ-Դամասկացուց

<sup>87</sup> Անդ, էջ 66:

<sup>88</sup> Հովհաննես Մայրագոմեցու անունով հատվածները տես՝ «Կնիք հասատոյ», էջ 52, 142—146, 253, 281, 288, 327—330 և 363—364:

\* Տգրված է **ալարեացոյք**, որը հավանաբար գրաշարական վրիպակ է:

<sup>89</sup> «Կնիք հասատոյ», էջ 328:

<sup>90</sup> Հմմտ. G. Gaiette «La Narratio de rebus Armeniae», p. 45, 327—328.

<sup>91</sup> «Թուղթ Փոտայ պատրիարքի ստ Հարսիս կաթողիկոս Հացոց Մեծաց» (հրատ. Հ. Ն. Ակիմյանի), Հանդես Ամսօրեայ, 1968, էջ 65—100 և 129—156:

<sup>92</sup> Տես Լ. Մկիթսի-Բեկ, «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հտ. Ա, Երևան, 1934, էջ 38—47:

և իր մյուս նախորդներից ոչնչով չէր տարբերվում իր գաղափարական կերպարով և հալ եկեղեցու դավանական դիրքերի ու ավանդությունների, ուստի և՛ Կիլիկյան Հայաստանում զարգացող ու ամրապնդվող ազգային շարժման, հանդեպ որդեգրած իր դիրքավորումով: Եվ որպեսզի ակնհայտ դառնան նրա ունեցած դիրքավորման գաղափարախոսական հենարանները, պետք էր ճշգրտել ու պարզել նրա ցուցակում թվարկված անունները՝ ըստ ձևի և ըստ իս-

կության: Այդ է, որ մենք փորձեցինք անել ներկա հոդվածում:

Պալիենցի կազմած այս ցուցակի ուսումնասիրությունը և նրանում եղած անունների ճշտումը կծառայի բացահայտելու, թե ժԲ դարի վերջերից սկսած, և ժԳ ու ժԴ դարերում, գաղափարախոսական գրականության ինչպիսի՞ նյութերից էր օգտվում Կիլիկյան Հայաստանի ազգային շարժումը՝ լատինական Արևմուտքի ազդեցության դեմ պայքարելիս:



ԺԶ—ԺԷ ԴԴ. ՄՈՌԱՑՎԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԳՐԻԳՈՐ  
ՎԱՆԵՑԻՆ ԵՎ ՆՐԱ ԱՆՏԻՊ ՏԱՂԵՐԸ

Մաշտոցի անվան Մատենադարանի № 5623 ձեռագրում, ի շարք բազմաթիվ տաղերի, պահպանվում են ևս երկու տաղեր, որոնք անտիպ են, և որոնց հեղինակն իրեն կոչում է Գրիգոր Վանեցի: Ահա այդ տաղերի ամփոփ նկարագրությունը.

ա) Տէր Գրիգոր Վանեցոյ ասացեալ խրատ հոգևոր և առակաւոր վասն սայլի

Յոյժ տարակուսեալ էի,  
Դեզերեալ յիմում մտի...  
Գերի Գրիգոր Վանեցի... (թերթ 140բ—  
147բ):

բ) Նորին Գրիգորիսի իմաստուն քահանայի ասացեալ

Է իմ արարիչ Աստուած,  
Զմարդ պահէ, որ չի դալատի...  
Գերի Գրիգոր Վանեցի... (թերթ 147բ  
—150ա):

Այս տաղերի այլ ընդօրինակություն մեզ հայտնի չէ: Ինչպես տեսնում ենք տաղերի խորագրերից և տողերում առկա տվյալներից, հեղինակն իրեն կոչել է Գրիգոր Վանեցի (անվանվել է նաև Գրիգորիս): Ուշագրավ է գրչի գնահատականը՝ «իմաստուն քահանայ»: տաղերի խոհա-խրատական բնույթը, իրոք, կարող էր հիմք տալ նման գնահատականի:

Չեռագիրը, որի մեջ պահպանված են նշված տաղերը, ընդօրինակված է 1649—1653 թվականներին: Քանի որ դա հեղինակային ինքնագիր չէ, ուստի հեղինակը պիտի ապրած լինի այդ թվականներից առաջ: Տաղերում առկա գրչական սխալներն ու շփոթությունները (տե՛ս տպագրվող բնագրերի տողատակերում) ենթադրել են

տալիս, որ նախագաղափարը կարող էր ունենալ առնվազն 50—100 տարվա հնություն: Ուստի Գրիգոր Վանեցու ապրած ժամանակը կարելի է որոնել ժԶ կամ ժԶ—ԺԷ դարերում:

Չեռագրերում, ձեռագրացուցակներում և տպագիր աղբյուրներում հանդիպող համանուն վանեցիների (նաև վարազեցիների) թիվը մեծ է, բայց մեկը առաջին դժվարանում ենք մեր հեղինակին նույնացնել նրանցից որևէ մեկի հետ: Այսպես, օրինակ, Երուսաղեմում պահվող № 1456 ձեռագրում հիշված է Գրիգոր Վանեցի անունով մի բանաստեղծ, որի հետ մեր հեղինակը չի կարող նույնացվել, որովհետև առաջինի տողերից երկուսը գրված են 1691 թվականին: Լեհահայության հոգևոր առաջնորդ Գրիգոր Վանեցու-Վարազեցու հետ (մեռած 1574 թ.) էլ առաջին դժվար է նրան նույնացնել, որովհետև հավաստի փաստեր չունենք: Նույնը կարելի է ասել նաև մյուս Գրիգորների մասին:

Գրիգոր Վանեցին իր երկու տաղի մեջ էլ շարադրում է հոգևոր խրատներ՝ ելակետ ունենալով հոգու և մարմնի հարաբերության հարցը: Այս առումով նրա տաղերն առանձին նորություն չեն բերում: Ուշագրավ է, սակայն, որ հեղինակը երկու տաղի մեջ էլ մեծապես օգտվել է հայրենիների հարրստությունից՝ տալով նրանց ժողովրդական մտածողության ու աշխարհըմբռնման երանգներ: Ստեղծագործությունները շահել են հատկապես ժամանակի խոսակցական լեզվից և երկրպային ու առօրյա իրողություններից օգտվելու շնորհիվ: Այս առու-

<sup>1</sup> Ն. եպ. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց արքոյ Յակոբեանց, Ե, ձեռ. № 1456, թերթ 241ա—247ա, 248ա, 251ա—252ա:

մով բացառիկ արժեք ունի առաջին տաղը, մանավանդ որ այստեղ հեղինակը Գրիգոր Նարեկացուց հետո, առաջին և վերջին անգամ մեր միջնադարյան պոեզիայում, տալիս է սայլի գույք-նկարագրություն: Նրա ողորակի նպատակը, սակայն, դա չէ, այլ այն, որ այդ եղանակով կարողանա ավելի տեսանելի, շոշափելի, նպատակապես դարձնել հոգու և մարմնի փոխհարաբերության վերացական թեման: Բանաստեղծության սկզբի մասում հեղինակը խոսում է հոգու կրած հալածանքների մասին, լսում նրա տրտունջը և սասում.

Ի յայտ խորհրդեանդ յերակ  
Միշտ վիճեր հոգիս ընդ մարմնի.  
Յատր միում շոջէի,  
Լսեցի զձայն մի սայլի:

Սալն էլ իր հերթին է ճոնչալով տրտընշում.

Երկինք էինք մեք յերկրի,  
Ասանիկ անկեալ ի գետնի.  
Յերեկն ի միմիանց տանջեալ,  
Մաշելով փայտերն մի ըզմի...

Սալը պատմում է, թե ինչպես ինքն առաջ ջրեզերքին տնկված մի դալար ծառ էր, որին երգով ու պարով այցելում էին թռչուններն ու գեփյունները, իսկ սուվերում, ծաղկավետ դալարի վրա, հնչում էր երիտասարդների երգն ու նվագը: Լինելով այդպես փարթամ ու վեհ, նա իրեն թագավոր է կարծել՝ արհամարհելով կտրվող և գետին տապալվող ծառերին: Ել ահա հենց այդ հպարտանալու պատճառով նա պատրվում է, ցեցոտվում, տերևազրկվում և մի օր էլ, կտրվելով, օգտագործվում սայլի (ու նավի) համար: Այնուհետև սալը նկարագրում է իր ծանր վիճակը և խոսում այն մպսին, թե ինչպես շուտով մի կողմ է նետվելու որպես անպետք փայտ՝ մատնվելով հրկիզման ու մոխրացման:

Պետք է բարձր գնահատել բանաստեղծի շնորհքը՝ այս ամբողջ գրույցն այնքան կենդանի ու անմիջական վերարտադրելու առումով: Հիրավի, դա մի գողորիկ տաղ է՝ ծառի ու սայլի այնքան վշտալի մենախոսությամբ և հեղինակի համապատասխան խոհերով ու դատողություններով: Հիշենք մի բանի տող, ուր ծառը նկարագրում է տապալարավորի գալը և իր վիճակը՝ կտրվելու պահին.

Իսկ մի ոմն ի օնցանէ  
Որ ունէր տապար ի ձեռին,  
Հատեալ յի ստեղնէ իմմէ  
Եւ արար բազով տապարին.

Եհար բարկութեամբ յարմատս,  
Եւ ճըղերս ամէն դողային.  
Տերևս իմ ի լաց եղեալ,  
Հաւասար աղաղակէին:  
Ասին, թէ՛ Մի՛ հատանէր,  
Այլի տամք զպտող ի ժամին՝  
Կըրկնաշահ և բազմաբեր,  
Գերագուն քան ըզյատաջին...

Այս տաղն իր գեղարվեստական մշակման եղանակով մեզ հիշեցնում է մի կողմից Ֆրիկի կատարած մշակումը՝ «Հովհաստի և հարաղամ» պոեմի դրվագներից, իսկ մյուս կողմից՝ Մաղաղա Պոռեցուն և Ֆրիկին վերագրված «Բանք երկու եղբորն...» մեծարժեք ստեղծագործությունը: Գրական նման անակնկալները յուրովի էին բացում գրականության դոկերը՝ առակավոր խոսքի, ժողովրդական առօրյայի և կենցաղի առջև<sup>2</sup>: Որքան էլ որ գործ ունենք այլաբանության հետ, դարձյալ չենք կարող չնկատել, որ նշված ստեղծագործությունների մեջ շոշափված իրերն ու ատարկաները, էսկներն ու տեսարանները գուտ բնական, աշխարհային հսկասություններ են: Վերհիշենք «Բանք երկու եղբորն...» բանաստեղծության մեջ անձնավորված կոմիկոսի օրինակը, որին բանաստեղծը խոսեցնում է մարդկային լեզվով և այդ եղանակով վերարտադրում նրա ստեղծման, օգտագործման ու քայքայման պատմությունը: Այստեղ կոմիկոսը, ինչպես նաև նրա համար օգտագործված կալը գուտ բնական, իրական, ատարկաշավան հասկացություններ են: Նույնը պիտի ասել նաև Գրիգոր Վանեցու նկարագրած և անձնավորած ծառի ու սայլի մասին: Նա ևս նկատի ունի բնական ծառը, նրան շրջապատող իրական բնությունը, իրական սայլը և նրա իսկական ճոնչոցը: Այլ բան է, երբ բանաստեղծն այդ բոլորի օգնությամբ փորձում է խոսել հոգու և մարմնի վերացական վիճաբանության մասին՝ ըստ իր կրոնական պատկերացումների: Անկախ դրանից, այս և առհասարակ նման ստեղծագործությունները մեծապես նպաստում էին պոեզիայի աշխարհականացման ընթացքին:

Ասացինք, որ Գրիգոր Վանեցու բնկվող տաղը Գրիգոր Նարեկացու «Սալըն իջա-

<sup>2</sup> Նման ստեղծագործության ուշագրավ նմուշ է նաև Վրթանես Կաֆացու հայտնի տաղը՝ նվիրված ձեռագիր ժողովածուի օգտագործմանը. իսկ Վրթանեսը եղև է լեհահայության առաջնորդ Գրիգոր Վանեցու-Վարազեցու մտերիմը: Դա էլ իր հերթին է մտածել տալիս մեր հեղինակի և Գրիգոր Վանեցու նույնացման հնարավորության մասին:

նեին» տալից հետո առաջին և վերջին նմուշն է սայլի թեմայով: Ուստի անհարկի չէր լինի այդ կապակցությամբ սակ ներու- չար: Որոշ մասնագետներ, անդրադառնա- լով Գրիգոր Նարեկացու տալին, գտնում են, որ այնտեղ գովերգված է երկրային, իրական սայլ՝ երկրային խոտաբույսերի խրձերով, երկրային եզներով և անգամ երկրային մարդկանցով: Դա ճիշտ չէ:

Եթե Գրիգոր Վանեցին իր նկարագրած սայլին հանդիպում է փողոցում և նկարա- գրում նրա ծառային ծագումն ու փայտե- ղեն կառուցվածքը, ապա Գրիգոր Նարե- կացին խոսում է վերացական սայլի մա- սին, որը իջնում է Մասի գագաթից, ունի գեթրնական եզներ, շարժվում է կախար- դական խոտաբույսերի խրձերով և կրում է Աստու Որդու ու հրեշտակապետների: Մայրապսակն էլ ոչ այլ ոք է, քան Հովհան- նես Մկրտիչը: Մասնագետներին ցարդ չի հաջողվել պարզել այն նախահիմքը, որ հրաշակերտվել է Գրիգոր Նարեկացու գրչի տակ: Որոհումները ցույց են տալիս, որ այստեղ գործ ունենք աստվածաշնչային և աստապելական սայլի գաղափարի հետ: Մեզ այս հարցում օգնում է ինքը բանաս- տեղծը՝ սակով:

Սայլն-ի Սինեայ՝  
Երկրորդ օրենքն է Մովսեսի...

Այսինքն, Սինայից (փոխաբերաբար՝ Մասից) իջնող սայլը Մովսեսի Երկրորդ օրենքն է: Հիրավի, Աստվածաշնչում առ- կա է նման հիմք: Ցայտուն է, օրինակ, Մովսեսի Հնգամատյանի վերջին գրքի՝ Երկրորդ օրենքի այն վկայությունը, որի համաձայն Աստված Սինա լեռան վրա Մով- սես Մարգարեին պատվիրում է անփոտ փայտից պատրաստել տապանակ, գետեղել այնտեղ իր պարզևած օրենք-պատգամնե- րը և այն տեղափոխել Սինայից Երուսաղեմ: Ահա այդ տապանակն է, որ հատուկ սայլի վրա դրված տեղափոխվում է Երուսաղեմ: Նրա նկարագրությունն ու պատմությունն սկսվում է Կարիաթարիմ քաղաքից. «Եւ ժողովեաց միս անգամ Դաիթ զամենայն երիտասարդս յԻսրայելէ իբրև եօթանա- սուն հազարս և յարեսս զնաց... ի զտի- վերն որ ելա տապանակն Աստուծոյ, յո- րոց վերայ կոչեցաւ անուն Տեսուն Աստու- ծոյ զօրութեանց, որ նստի ի քրովբէս ի վերայ նորա: Եւ եհան եղ զտապանակն ի վերայ սայլի նորոյ, և առ նա ի տանէ Ամի- նոդարայ Բլրացոյ, և Ոգս և եղբայրք նորս վարէին զսայլն հանդերձ տապա- նան... Եւ որդիքն Իսրաէլի խաղային ստա- ջի Տեսուն տաղօք և նուագարանօք, զո- րութեամբ և երգօլք և բնարօք և սրնգօք և

թմբկօք և ճնծղախք և փողովք» (Թագա- տրք Բ, Զ 1—17):

Ինչպես տեսնում ենք, այստեղ տրված է ոչ միայն սայլի, այլև նրա վրա գտնվող Աստուծո զորության, բերովբեների, սուղե- վից պարով և նկագրաններով ընթացող իսրայելացի երիտասարդների («նսն- կանց») նկարագրությունը, ճիշտ այնպես, ինչպես Գրիգոր Նարեկացու տալում:

Չմտնելով մանրամասնությունների մեջ, ասենք միայն, որ ցարդ այս հիմքի նկատ- ված շլիկերու պատճառով մասնագետները տարբեր կարծիքներ են հայտնել՝ բոլորն էլ վերանայելի<sup>3</sup>:

Այսպիսով համոզվում ենք, որ Գրիգոր Նարեկացու նկատի առած սայլը ոչ թե իրական, երկրային սայլ է, այլ գեթրնա- կան, աստվածաշնչային՝ բարձրված Երկրորդ օրենքի վերացական սրբություններով: Ու- տի, անդրադառնալով Գրիգոր Վանեցու նկարագրած սայլին, կարող ենք ասել, որ նրա նկատի ունեցած սայլը, իրոք, երկրա- յին սայլ է և իր բնույթով նոր ու թարմ թե- մա մեր միջնադարյան պոեզիայում:

Ըստ էության այդ երկու ստեղծագոր- ծությունների միջև կան նաև այլ տարբերու- թյուններ՝ պայմանավորված նրանց հեղի- նակների հետապնդած նպատակներով: Օրինակ, Գրիգոր Նարեկացու մոտ իշխում է տոնական հանդիսավորությունը, ցնծու- թյունը և սայլի հաղթական երթի գովքը, մինչդեռ Գրիգոր Վանեցու տալը ոչ այլ ինչ է, քան ողբ նախ հոգո բերանից, ապա սայլի: Այնուհետև առաջինը ներքողական է, իսկ երկրորդը՝ խոհա-խրատական, հար- ցեր, որոնք կարևոր նշանակություն ունեն գիտական առումով:

Ստորև գետեղում ենք Գրիգոր Վանեցու վերոհիշյալ տալերը՝ նույնությամբ. միայն առանձին դեպքերում կատարել ենք մաս- նակի շտկումներ՝ համապատասխան նշում- ներով: Տողատումը և կետադրությունը մերն է: Միօրինակության նպատակով «աւ»-երը փոխարինում ենք «օ»-ով:

<sup>3</sup> Հարկ ենք համարում նշել, որ Գրիգոր Նարե- կացու տալի բնական բնագիրը կազմվելու և թարգ- մանությունը կատարվելու մեկը ելակետ ենք ընդո- նել վերևում շարադրված մեր մեկնաբանությունը, բաց ստի չենք ունեցել համապատասխան մա- թամասնություններին անդրադառնալ տպագիր խո- քով: Հավանաբար նաև այդ է պատճառը, որ բա- նասիրական գիտությունների դոկտոր Գ. Արզա- յանը ճիշտ չի վարվել՝ այդ հարցում մեզ սխալ հա- մարելու ու խնդրի մեջ «ճշգրտում» մտցնելու փո- ձով (Տե՛ս «Էջմիածին», 1974, Ա և Բ համարներում գետեղված նրա հոդվածաշարը): Ցավիք այդտեղ սակա են ուրիշ վիճակներ ևս:

1. ՏԷՐ ԳՐԻԳՈՐ ՎԱՆԵՑՈՅ ԱՍՍՅԵԱԼ ԽՐԱՏ ՀՈԳԵՒՈՐ ԵՒ ԱՌԱՎԱԻՈՐ ՎԱՍՆ ՍՍՅԼԻ

Յոյժ տարեկոսեալ էի,  
 Դեզերեալ ի յիմում սրտի,  
 Զի միշտ ի ներքուստ հոգիս  
 Բողոքէր ի դրոմնս մտի:  
 Որպէս որ Փրկիչն աւագ  
 Զառակս ի պէտս խըրատի,  
 Զայրի կիւնըն բաղաքին,  
 Զի ընդ ոսոխն ի դաս մտակի՛:  
 Այրին յոսոխէն գրկեալ՝  
 Կողկողէ նայ յոյժ լարագին.  
 Դաստատրն այն անհրաւ  
 Դաս արդար չսունէ ընդ ոսոխին:  
 Նոյնպէս յիմում բաղաքիս  
 Դեզերեալ իմ այրի հոգիս,  
 Յոսոխէ մարմնոյ գրկեալ,  
 Կենդանոյն մեռեալ գոյ ի յիս:  
 Հոգիս իմ առ իս ասէր,  
 Թ՛ Այլ չկայ բան ըզիս գերի,  
 Ի բարձր փառաց զըրկած,  
 Կորուսած՝ զինչ որ ունէի:  
 Կարծեմ՝ թ՛ան թոչունոյն նմանիմ.  
 Որ նստի ի յեզեր ջրի,  
 Տրտում կայ, չիշխէ ըմպել,  
 Կու վախի, թէ ջուրն պակասի:  
 Կամ թէ մեծամեծ ձկանց,  
 Որ լինի մէջ անբաւ ջրրի,  
 Ի ձեռն որսորդի գործեն,  
 Ի ջրէն արտաքս՝ ընկեացի:  
 Ի յայտ խորհրդեանդ յերակ  
 Միշտ վիճէր հոգիս ընդ մարմնի.  
 Յատր միում շրջէի,  
 Լսեցի զձայն մի սայլի:  
 Անին ճրտող ճրջէր,  
 Ողբերգեր ջամբն ընդ ստեղին.  
 «Երկինք էինք մեք յերկրի,  
 Ասանիկ անկեալ ի գետնի:  
 Յերեկն ի միմեանց տանջեալ,  
 Մաշելով փայտերն մի ըզմի,  
 Գիշերն անպիտան անկած  
 Ի յեզեր մի ճանապարհի»:  
 Ասեմ ես առ իմ հոգին,  
 Թէ՛ Գըտար ըզքո նմանին.  
 Մերձ կացիր, հարցիր ըզնայ,  
 Օգտեցես դու դեղ քո վիրին:  
 Ասեմ. Այ սայլ, է՛ր գոչես  
 Ողբաձայն ընդ մարգարէին՝  
 Երեմիայի մեծին՝  
 Ողբերգող ի տան Իսրայելին:  
 Դարձաւ, պատասխան ետոր,  
 Թէ՛ Կացիր, Ադամայ որդի,  
 Զառաջին փառս իմ պատմեմ,

Տե՛ս թ՛ որպէս եմ ողորմելի:  
 Ես ծառ գեղեցիկ էի,  
 Զիս տընկած յեզերն ի ջրրի,  
 Բազում ժամանակ գողով,  
 Հաստատեալ զարմատս ի գետնի:  
 Զորք մանուայծառայ ակօք  
 Ընդ աջմէ իմ անցանէին,  
 Նոսոֆար բուսեալ ի նմայ,  
 Եւ ելեալ յերեսքս ջրրին:  
 Երդերս խտորն տերևով  
 Հով ստեալ իմոյս այտակի,  
 Տերևս ի հողմոյ շարժեալ  
 Գեղեցիկ ձայնս արձակէին:  
 Թոչունք գեղեցիկ փետրով  
 Ելեալ իմ յատրս հանգչէին,  
 Ի յառատոտու պահուն  
 Գեղեցիկ ձայնս արձակէին:  
 Մանկունք գեղեցիկ՝ ելեալ,  
 Ընդ հովով իմով նստէին,  
 Ոստէին և ըմպէին,  
 Օրհնէին զարքայն երկնային՝:  
 Թըմբուկ և քընար ստեալ  
 Երգէին ընդ երգէհոնին,  
 Վաղորդնէ՞ մինչ յերկոյ  
 Յայնպիսի փառքս ցնծային:  
 Յաջմէ՛ ւ անեկէ տնկած  
 Բուրաստան, և վարդն ի միջին,  
 Համասիիտ և բրաքիոն  
 Ի այլ ծաղկունք ընդ մանուշակին:  
 Ի յառատոտու պահուն  
 Յօղն իջեալ ի բուրաստանին,  
 Ծաղկանցն ամէն զարդ ստեալ  
 Եւ զանոջ հոտըն բուրէին:  
 Արմատնի, խնձորի  
 Ի այլ ծառերըն պտղով ի լի  
 Ծորջանակի պար ստեալ,  
 Ի ես՝ թագուր ի մէջ ամենի:  
 Զայլ ծառսըն հատեալ տեսի  
 Եւ նոքայ ինձ ծաղր թրէին.  
 Մի ոմն ի հատեալ ծառոցն  
 Մատուցեալ ինձ բան մի՞ գուծի:  
 Թէ հազար տարի կենաս,  
 Չես հասներ ի յօդսըն վերին,  
 Աւորքս<sup>10</sup> մի տի բարձրանաս.  
 Յերբ-- որ է՛ տ՛ ընգնիս ի գետնի:  
 Ի յիմ փառս հրպարտացայ,  
 Զի շընչեաց յիս հողմըն<sup>11</sup> չարին.  
 Ասեմ ես յիմում մըտիցն,  
 Թէ պարծանք եմ ես ամենի:  
 Խըրատ մի քեզ տալ կամիմ,

<sup>4</sup> Ձեռագրում՝ մտանէ. ողորմ ենք ըստ հանգա-  
 վորման:  
<sup>5</sup> Ձեռագրում՝ Կորուսած:  
<sup>6</sup> Ձեռագրում՝ արտակա:

<sup>7</sup> Ձեռագրում՝ երկնային:  
<sup>8</sup> Ձեռագրում՝ Վաղորդնէ:  
<sup>9</sup> Ձեռագրում՝ «բան մի» դարձվածքը կրկնված է:  
<sup>10</sup> Ձեռագրում՝ Աւորքս:  
<sup>11</sup> Ձեռագրում՝ հողըն:

Թէ լքես, ոյ դմ հողածին.  
 Մի՛ սիրեր զհպարտութիւն,  
 Զի նայ թիւնք է մահաբերին:  
 Հպարտութիւն օրինակ—  
 Նմանակ է այն չար օձին,  
 Զինչ կենդանի խայծանէ՝  
 Նայ թըմբբեայ անուշ կոմ քընի:  
 Զպահիկ մի ի բուն լինել  
 Յայն ժամուն փութով մտանին.  
 Մի սիրեր զհպարտութիւն,  
 Թէ կամիս զկենքըր բո անձին:  
 Տե՛ս, թ՛ ինչ արար հպարտութիւն,  
 Որ զիս ծարր արար ամենին.  
 Ըզցեցն ի լանձնու եհան,  
 Զիս սուակ արար հազարին:  
 Ի գարնանային ժմին,  
 Որ ամէն ծանր ծաղկէին,  
 Կանաչին վայելու՞ զունով,  
 Ես ծաղկեայ ի մէջ<sup>12</sup> ամենի:  
 Յարմատոյս ինձ որո՞ ծընա,  
 Յեց եղև նայ ինոյս անձին.  
 Ծաղիկն ի թափել էստ,  
 Եւ տերևըս թառամէին:  
 Յաւոր մի՛ վեր արք եկին  
 Ի ի ճղերս ի վեր նայէին,  
 Ասեն, թէ՛ Պստոյ չունի,  
 Կարելոյ է անհրճարին:  
 Իսկ մի ոմն ի անցանէ,  
 Որ ունէր տապար ի ձեռին,  
 Հատեայ յի ստեղնէ իմմէ  
 Եւ արար բազով տապարին:  
 Եհար բարկութեամբ յարմատս<sup>14</sup>,  
 Եւ ճղերս ամէն դողային.  
 Տերև իմ ի լաց եղեայ,  
 Հաւատար սղաղակէին:  
 Ասեն, թէ՛ Մի՛ հատաներ,  
 Այլի տամբ զպտուղ ի ժամին՝  
 Կրկնաշահ և բազմաբեր,  
 Գերագուն քան ըզյառաջին:  
 Ետես պատասխան չետոր,  
 Զի հրաման էր յոյժ սաստկայգին,  
 Լացին շատ զհրեանց արևն,  
 Վայ տոին հաւատար ամենին:  
 Մինչ հիմայ<sup>15</sup> թագաոր էար  
 Եւ բազմեայ ի բարձրագահին<sup>16</sup>,  
 Ահա հըրաման եհաս՝  
 Յարթոու իջնույ ի գետին:  
 Եհատ և ընկեց յերկիր  
 Ըստ հրամանի Փրկչին Յիսուսի,  
 Թ՛ որ պտուղ բարի չառնէ,  
 Զնայ հատեայ ի հուրն ընկեացի:  
 Զճղերս իմ մի-մի հատեայ

հազմայնստ իբրև զԱկովկին,  
 Հատեայ զգլխոյ ճիղն յինէն,  
 Նմանեայ մեծի Մկրտոչին:  
 Գնացեայ և վարպետ բերին,  
 Խիզրեցին որպէս զԵսային.  
 Հանեայ զմորթին յինէն,  
 Նմանեայ հարդողիմէին:  
 Ի յերկուս բաժանեցին,  
 Զիս կուպտեայ անիս ձեցին,  
 Եւ գայն, որ յինէն հատին՝  
 Ողնափայտ ստեն զնայ նաին:  
 Եկեայ զնայ ի բարշ տարան  
 Նմանեայ ի դէսն աղանին<sup>17</sup>,  
 Տարեայ, նա ողորեցին,  
 Ընկեցին ի մէջն ի ծովին:  
 Իսկ նայ, ի ծովու յալեացն,  
 Երերայ միշտ անդիւրեղին,  
 Յաւոր մի վիմի հարեայ  
 Եւ տախտակըն մէկմէկաացին<sup>18</sup>:  
 Ես սատ ցամաքով տանջեայ  
 Հոյովմամբ<sup>19</sup> միշտ անդիւրեղի,  
 Օր մի ընկըղմի ի գուրն  
 Ընդ բանին իմաստասերի:  
 Եւ յետ խորտակման մերոյ՝  
 Զմեզ ճարակ սունեն կրակին.  
 Այրեն և փոշի սունեն,  
 Յետոյ տան զփոշին ի քամին:  
 Լա մտօք ընկեայ ըզիս  
 Եւ արայ թաղիք քեզ, գերի.  
 Կենցաղոս մի՛ հաւատար,  
 Ծատ խաբեր, կրկին տի՞<sup>20</sup> խաբի:  
 Ասեմ, թէ՛ Հերիք արայ,  
 Բաւական է այս լսողին,  
 Դո նման նախաստեղծին,  
 Որ կորոյս զփառս ստաջին:  
 Հատեայ խաբանօք օձին  
 Եւ անկան իր ճիղքն ի գետին.  
 Ի ճընճեղնէ հոյովեայ,  
 Մինչև եհաս գուք գերեզմանին:  
 Այլ ես եմ ի նա նման՝  
 Ծրփալով ի մեղաց ծովին.  
 Վաղորդնէ մինչ յերկրուն  
 Հետեայ եմ կամաց չարին:  
 Հողմով կենցաղոյս վարեայ,  
 Մօտացեր եմ ես եզերին.  
 Ի վեմըն մահոմ հարեայ  
 Եւ զօղոսածս իմ մէկմէկաացին:  
 Ամէն արարածք, լացէք  
 Զեղկեղի ծառայս Արարչին.  
 Զիս արեամբ զընեաց Փրկիչն,  
 Իմ կամա գերեցայ<sup>21</sup> չարին:

<sup>12</sup> Զեռագրում՝ վայելչ:

<sup>13</sup> Զեռագրում՝ մէջ:

<sup>14</sup> Զեռագրում՝ յարմատս:

<sup>15</sup> Զեռագրում՝ իմայ:

<sup>16</sup> Զեռագրում՝ բարձրագահի:

<sup>17</sup> Հալանարար աղափաղված են վերջին երկու բառերը: Կարելի է կարդալ նաև «ի դեսն աղուանին»:

<sup>18</sup> Զեռագրում՝ մէկկաացի:

<sup>19</sup> Զեռագրում՝ հոյովմանք:

<sup>20</sup> Զեռագրում՝ չի:

<sup>21</sup> Զեռագրում՝ գերցայ:

Զիս այգի ցանկով պատեաց  
 Չողաքարձ և պողով ի լի,  
 Զցանկըն քակեաց թշնամին,  
 Եւ եղէ կոխան ամենի:  
 Զիս քաղաք ամոր շինեաց,  
 Պարբսպեաց վիմօք հրաշալին,  
 Թշնամին քակեաց ըզորմն<sup>22</sup>  
 Եւ գերեաց զիս այրի հոգին:  
 Գերի Գրիգոր Վանեցի,  
 Դու գետին կացիր ամենի.  
 Զերեստ ճանապարհ արայ,  
 Որ ամէն մարդ ըզնայ կոխի:  
 Գոյացեալն ի չորս տարրէ  
 Ի հողոյ՝ ի ի ջրոյ կու յագէ,

Իսկ հողն ընդ խոնարհ գոլով  
 Եւ եղեալ կոխան ամենի:  
 Եթէ գշորն ի վեր ուղղես,  
 Նայ չերթայ իսկի բընաին.  
 Ի վերուստ ի վայր հոսեալ  
 Եւ խոնարհ տեղիս դադարին:  
 Այդ քեզ օրինակ ատեալ  
 Եւ կողկող խըրատըն սայլին.  
 Ամենեցուն հող կացիր,  
 Փասս երգեաց միշտ Երկնատրին:  
 Փա՛ռք քեզ, արարիչ Աստուած,  
 Որ ստեղծիչ ես ամէն գոյի,  
 Յերակ խըրատես ըզմեզ  
 Եւ գըթաս որպէս հայր՝ որդի:

2. ՆՈՐԻՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԻՄԱՍՏՈՒՆ ՔԱՀԱՆԱՅԻ ԱՍԱՅԵ[Ա]Լ

Է իմ արարիչ Աստուած,  
 Զմարդ պահէ, որ չի դալատի.  
 Լուսով զնայ պարայծածկեալ,  
 Որ խաւար տեղ չի մոլորի:  
 Մարմնով զնա անաղտ պահեալ,  
 Որ մեղօք չի ապականի.  
 Զերկուող քո ի միտն ձգեալ,  
 Որ յետնումբն չի շիարի:  
 Խըրատ՝ սայ քրիստոնէից,  
 Որ ծընունդ է աւագանի.  
 Ի ջրոյ ՚ի ի հողոյ ծընեալ  
 Եւ որդի լուսոյ անուանի:  
 Զփրկական խորհուրդն առեալ  
 Եւ եղեալ տաճար տէրունի.  
 Մարմնատր հրեշտակ է նայ  
 Եւ տեղի Բանին կենդանի:  
 Զիր մարմին լըստակ պահէ  
 Ի յաղտոյ յայսմ կենցաղի.  
 Հոգովըն մաքուր կենայ,  
 Քրիստոսի հետոյն հետևի:  
 Խորհրդեամբ յերակ մաշէ  
 Եւ յիշէ զօր հոգէվարի.  
 Թէ որպէս յերէկ էանց,  
 Մինչ ի մահ այնպէս անցանի:  
 Որպէս հրամայէ Փրկիչն՝  
 Մարդ յերակ պատրաստ կու  
 պիտի.  
 Ժամանակն անցնի, գընայ,  
 Մարդ մեղօք անհոգ կու բընի:  
 Թէ զինչ մարդ որ միտք ունի<sup>23</sup>  
 Երկիրի նա միշտ զարհուրի.  
 Բննեայ և դու միտ արայ  
 Թէ քո կեանքդ յինչ կու նմանի:  
 Բո հոգիս ի քո մարմինդ  
 Տուրուատ ջընչով կայկայի.  
 Մտնու և չեղանէ,  
 Զով քերես, որ ըզնա հանէ:  
 Թէ եղեալ ոչ մըտանէ,  
 Հեռացեալ ի յօրըն ցընդի.

Բայց յԱստուծոյ ո՛վ կարէ,  
 Թէ ի տեղն իր անդրադարձէ:  
 Կրկին հրամայէ Փրկիչն,  
 Թ՛օր մահուն ի գող նմանի.  
 Մէջ գիշերի կենցաղոյս  
 Նայ յանկարծ ի տան երևի:  
 Տե՛ս, զի անցաոր ես դու,  
 Մոռագրօսով քո կեանքդ ի յերերէ.  
 Զունիս կենալոյ ճարակ,  
 Կամ մնալ ի յայսմ աշխարհի:  
 Մահըն զօրատր կու գայ,  
 Զքո ամէն թաղքիր կու քակի.  
 Թէ ծեր ես կամ թէ տրդայ,  
 Թէ իշխան բընա աշխարհի:  
 Զարշխարհս ամէն մուք ունիս  
 Եւ թագուր լինիս ամենի,  
 Յիշեայ դատաստան կայ քեզ  
 Եւ կոչել՝ ըզքեզ յատենի:  
 Ահեղ և սաստիկ հրաման  
 Եւ տագնապ յոյժ սարսափելի,  
 Դատատրն արդարադատ  
 Անաչառ ընդդէմ ամենի:  
 Ի միտ ամ՝ ի յիշէ ըզփասու  
 Արդարոցն յայնմ յախտենի.  
 Եւ տանջանս մեղաւորացն,  
 Որ տանջեն ի տարտարոսի:  
 Այտ ամէն առաջի կայ,  
 Արտատուքդ ոնց կու ցամաքի.  
 Զարթիր դու ի քնոյ մեղաց  
 Եւ արայ թաղքիր քեզ, գերի:  
 Զաչերտ արտատուք դու լից,  
 Կաթնցոյ դէմ Երկնատրին.  
 Միթէ ողորմած լինի,  
 Զքո մեղաց մուրհակըն ջընջէ:  
 Գերի Գրիգոր Վանեցի,  
 Վայ սասայ միշտ անդրդուելի.  
 Տե՛ս, թէ քանի վերք ունիս  
 Ի հոգիս քո անթուելի:  
 Այլոց դու խըրատ կու տաս,  
 Քեզ անչափ խըրատ կու պիտի.  
 Այլոց կասես զշիղջոս հան,  
 Բո աչերտ գերան ունի:

<sup>22</sup> Զեռագրում՝ գոր ըզորմն:  
<sup>23</sup> Նախ՝ «թէ զինչ մարդ ու մարդ». վերջին բա-  
 ւորը ջնջված և լրացված՝ «որ միտք ունի»-ով:



ԱՌԱՔԵԼ ՊԱՏՐԻԿ

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ԽԱՀՔԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ԱՌՆՉԱԿԻՑ

Ուրախալի է նշել, որ վերջին 8—10 տարիների ընթացքում հայկական խաչքարերի և նրանց ինքնուրույն արվեստի մասին նոր և բեղմնավոր հետաքրքրություն է զարթոնում: Այդ կապակցությամբ հիշատակության արժանի են մեր խաչքարերին նվիրված երկու գեղատիպ պրոմները. մին հրատարակված 1969 թվականին Միլանոյում, իտալերեն և անգլերեն լեզուներով, իսկ երկրորդը՝ 1974 թ. ս. Էջմիածնա Մայր Աթոռի վերին հովանավորությամբ պատրաստված, Էլ ավելի ճոխ և գեղարվեստական տպագրությամբ:

Առաջին պրոմի հրատարակությունը պարտական ենք Միլանոյի ճարտարապետական ֆակուլտետի մի խումբ իտալացի հետազոտողների, որոնք հայագիտական հետևյալ ստաշտրանքն են ունեցել. «Առաջին առթիվ ներկայացնել հայկ. ճարտարապետական վավերագրերի մի շարք, հայթայթելով յուրաքանչյուր հուշարձանի լիակատար և չհրատարակված լուսանկարչական պատկերացումները, ինչպես նաև ամբողջական չափագրության շարքը, որի ընկերանալու է պատմա-քննադատական և նկարագրական բնույթի մեկ կամ ավելի ներածական, գրված՝ իտալերեն և անգլերեն: Բնագրերը

կպատրաստվեն ՀՍՍՀ գիտ. ակադեմիայի պրոֆեսորների և Իտալիայի ուսումնասիրողների կողմից, ստեղծելով այսպես երկու երկրների գիտնականների միջև մշակութային համագործակցության նոր և ոգևորիչ մի հնարավորություն»:

Այդ համագործակցությունը արդարև եղավ շատ արդյունավետ: 1968 թվականից ի վեր հաջորդաբար լույս տեսան հետևյալ գեղատիպ հատորների շարքը. 1—**Հաղթատ, 2—Խաչքարեր, 3—Սանահին, 4—Ս. Թադեի վանքը, 5—Ամբերդ, 6—Գեղարդ, 7—գոշավանք**, իսկ 1974 թ.՝ **Աղթամար**:


Ուրախալի է նաև այն պարագան, որ հայագիտական այդ հրատարակությունների հովանավորությունը հայրենասիրաբար ստանձնել են միլանոյցի երկու եղբայրներ՝ Հակոբիկ և Արմեն Մանուկյանները. կրտսերը մասնագիտությամբ ճարտարապետ և մասնակից՝ իտալացի հետազոտողների: Գլխավորապես նրա նախաձեռնության շնորհիվ է, որ 1969 թ. լույս ընծայվեց մեր խաչքարերին նվիրված պրոմը:

Նրա ներածականը վերնագրված է. «Խաչքարերի ձևաբանությունը, կազմավորումը և ճարտարապետական նշանակությունը»,

ուր նա հայտարարում է խաչքարերն իբր «հայկական ճարտարապետության անխզելիորեն առնչակից», նույնիսկ համարելով դրանք «երա ճշգրիտ ըմբռնողության միակ բանալիներ»:

Այսուհետև երկրորդ ներածականի հեղինակն է Գ.Ա. արվեստի ինստիտուտի կողմից արվեստարան Լ. Ազարյանը:

Մեր ներկա հոդվածով նպատակ չունենք անդրադառնալու այդ երկու ներածականներում հայտնված ինչ-ինչ տեսակետների մասին մեր տարակարծությունները: Սակայն վերոհիշյալ իտալացի հետազոտողների կողմից վերջերս հայտնաբերված հնագույն խաչքարերի մի քանի նմուշներ մեզ առիթ են տալիս մի անգամ ևս առարկելու այն կարծիքի դեմ, ըստ որի, մեր խաչքարերի կազմավորումը սկսվել է ոչ ավելի վաղ, քան 9—10-րդ դարերում...



Նկար 1

1970 թ. Իտալիայի Հետազոտությունների ազգային խորհուրդի կողմից հայկ. ճարտ. հուշարձաններն ուսումնասիրելու նպատակով վաճառ լճի հարավ-արևմտյան մարզերն է ուղարկվում հնագետ Փառլո Կունեոն: Նա այնտեղ մանրամասն չափազորել և լուսանկարել է ավերակ վիճակում գտնվող Թուխ, Խնձորկին, Պաշվասք և Հոգեաց վանք կոչված չորս բազիլիկ եկեղեցիները և 1973 թը վականին հրատարակել է իր ուսումնասիրությունը, իտալերեն և անգլերեն լեզուներով<sup>1</sup>:

Այդ հատորում մեզ հետաքրքրող հարցի առնչությամբ ուշագրավ են Խնձորկին եկեղեցու հարավ-արևելյան պատի վրա ամրացված երկու խաչքարերը (նկ. 1), որոնք, ըստ հեղինակի, պատկանում են Ե—Ջ դարերին: Չափից առաջին խաչքարի խաչանշանը հավասարակող տիպի է և ամրացված մի պատվանդանի վրա, որի երկու կողմերում քանդակված կան մեկական փոքր խաչեր, որոնց յուրաքանչյուրից դեպի խաչի թևերի տակն են բարձրանում ցորենի մեկական

հասկ, իսկ թևերի վրա առկախ՝ զույգ ողկուզաններ: Հետաքրքրականն այն է, որ դեռ այդ վաղ ժամանակներից սկսվալ ուրվագծված ենք գտնում Թ—Ժ դարերում վերջնական ձևավորում ստացած խաչքարերի երկու հիմնական խորհրդանիշները՝ խաչի բունը պատկան և պարուրող ցորենի հասկը, որը մենք համարել ենք «Խաչքուռ»:

Կողքի խաչքարը առանձնապես նորություն չունի:

Սակայն ամենից ավելի հետաքրքրականը նույն եկեղեցում գտնվող տապալված խաչքարն է (նկ. 2), որը, իտալացի հնագետի կարծիքով, պատկանում է Ե—Է դարերին: Այդ խաչքարի վրա լրիվ առկա են գլխավոր



Նկար 2


խորհրդանշանները՝ խաչի բունը պատկող հասկի հյուսքը՝ խաչքուռը, իսկ թևերի վրա առկախ՝ խաղողաձև քանդակը, որոնք հայ եկեղեցու կանոնական ինչ-որ տնօրինությամբ դարերով կրկնվել են խաչքարերի հորինվածքում՝ լայն ասպարեզ հանդիսանալով զարդաքանդակող մեր տաղանդավոր վարպետների համար մանվածո նորաճոր ստեղծագործություններով արտահայտելու այդ նվիրական խորհրդանշանները՝ առանց մեկը մյուսից ընդօրինակելու, մի պարագա, որ մեր խաչքարերի արվեստագիտական բարձր արժանիքն է հանդիսանում:

Նորագյուտ այդ խաչքարը օժտված է նաև մանվածո զույգ եզերագարդերով, այնպես որ արվեստի տեսակետից այն կարելի է ավելի գերազանց համարել, քան Թ—ԺԲ դարերին պատկանող մի քանի խաչքարեր

<sup>1</sup> Paolo Cuneo—Le Basiliche di Tux, Xneor-gin, Pašvack, Hogeacvank, Roma, 1973; Xncor-gin. ԿԳ. 55—56.

(ինչպես Ներքին Թալինի, Կեչառիսի, Եղեգնաձորի, Հավուցթառի վանքի խաչքարերը)<sup>2</sup>:

Շատ ավելի վաղ ժամանակի խաչքարանդակի մի նմուշ է նաև Ավանի ս. Աստվածածին եկեղեցու արքայի որմնապատի խոյակի վրա քանդակված խաչանշանը (նկ. 3), որը մենք պատճենահանել ենք իտալացի մի ուրիշ հնագետի՝ Ֆրանչեսկո Կանտոլֆոյի հրատարակած հատորից<sup>3</sup>, և ըստ հետիմա-



Նկար 3

լի, պատկանում է Դ—Ե դարերին: Այդ, ըստ երևույթին, անշուք խաչանշանը պարուրված է մի երիզով, որի երկու ծայրերը իբր զանգվածեղ ծուլեր, զարդականորեն դեպի վերև են դարձված: Իտալացի գիտնականն այդ զարդը նմանեցնում է Սասանյան արքաների թագակապ ծուլավեհին, նույնպես ծուլավոր և օղածուխ...

Իտալացի գիտնականը, որ մեր ճարտարապետական հուշարձաններն ուսումնասիրելիս այնքան բարեխղճորեն վկայակոչում է տվյալ ժամանակաշրջանի մեր պատմիչներից, այդ խաչքարանդակի պարագային անշուշտ պիտի զգուշանար այդպիսի օտարոտի նմանություն վերագրելուց, եթե ծանոթ լիներ նաև հայկական խաչքարերին հատուկ այն մի քանի կանոնական խորհրդանշաններին, որոնք դարերով կրկնվել են՝

<sup>2</sup> Հայկ. խաչքարեր, Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1973 թ., նկ. 10, 15, 16, 62:

<sup>3</sup> Francesco Gandolfo Chiese e Capelle armene a navata semplice IV—VII secolo, Roma, 1973 թ., նկ. 87:

անցնելով կատարելագործման երկար ճանապարհ: Ուստի, մեր կարծիքով այդ պատահականորեն հորինված մի զարդ չէ, այլ պարզապես խաչքարի ամենամասնականն ձևը՝ ցորենի մի հասկը:

Մինչև այժմ շատերն են գրել մեր խաչքարերի մասին, սակայն գրեթե ոչ ոք լրջորեն չի զբաղվել դարերով կրկնված այդ, ըստ երևույթին, կանոնական խորհրդանշանների մեկնաբանությամբ: Թորոս Թորամանյանը բավականացել է գրելով. «Խաչքարերի վրա քանդակված խաչերի ներքև ստանց բացառության քանդակված են ինչոր խորհրդավոր թևեր, դեպի վեր դարձած խաչի երկու կողմը. այս շրջանում (Մանուշյորրոր վերածնության) կարծեք կորցրած իր նախկին խորհրդավոր նշանակությունը, փոխված է բարդ քանդակագործության հազիվ իր նախկին ձևը հիշեցնող մի շրջագծով»<sup>4</sup>:

Իսկ դրանց նշանակության և մեկնաբանման շատ կարևոր հարցով գրեթե ոչ ոք լրջորեն չի զբաղվել: Սակայն, թող ներվի մեզ հիշատակելու անհամեստությունը մեր կատարած մի փորձի մասին «Էջմիածին» ամսագրի 1972 թ. Ը համարում, որը սակայն չարժանացավ ոչ մի արձագանքի, թեք կամ դեմ, որով ոչ ծխուլված կարելի է համարել, անշուշտ հեղնված պատմա-կրոնա-գիտական լուրջ փաստարկների վրա, և ոչ էլ քննուկված, գուցե հողվածագրի ոչ տիտղոսավոր, համեստ անձնավորությունը նկատի ունենալով...

Մեր պանծալի խաչքարերի արվեստի մասին հաճախ հիացումով է խոսվում՝ նկատի ունենալով միայն նրանց նրբակերտ մանվածո զարդաքանդակները, ինչ որ շատ մակերեսային և միակողմանի մտնեցում է: Որովհետև արվեստի որևէ գործ գնահատվում է ձևի և բովանդակության ներդաշնակ միասնությունը նկատի ունենալով: Իսկ մեր խաչքարերը հարուստ են ոչ միայն ձևի, այլ նաև բովանդակության տեսակետից:

Այս առթիվ մենք պարտք ենք համարում մեր խորին շնորհակալությունը հաշտելու իտալացի մեծարգո գիտնականներին, որոնք այնքան նվիրումով հետազոտում են անցյալի մեր մշակույթի արժեքավոր նշխարները և իրենց երկվեզվյան հրատարակություններով ծանոթացնում գիտական աշխարհին:

<sup>4</sup> Թ. Թորամանյան, Հայկ. ճարտ., Ա. հատոր, էջ 100:



ԵՋՆԻԿ ԱՔԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՆԵԼԻ ՍՐՔԵՐԸ\*

### Վ ա Ր Պ ա ն ա ն ք

Այս անունով են ճանաչվում բոլոր այն նահատակները, որոնք իրենց արյունը թափեցին Ավարայրի ճակատամարտում 451 թ.<sup>1</sup> հաճուն հայրենիքի, հայ եկեղեցու և քրիստոնեական գաղափարի:

Ավարայրից առաջ և հետո հայ ժողովուրդը բազմաթիվ անգամ է մարտնչել, կանգնել անդունդի եզրին, մահվան դեմ առ դեմ, իր հոգևոր մշակութային արժեքները ձեռքին, ոտաբոքիկ և լքված բոլորի կողմից, և հետո իր ներքին հոգեկան ուժով փյունիկի պես հարություն առել:

Իբրև խորհուրդը այս ամենի, իբրև հուշարձանը հայ ժողովրդի հայրենասիրության և իր հոգևոր արժեքների գնահատման, իբրև լուսե խորան, դեպի երկինք է ձգվում Ավարայրի հերոսամարտը:

Ավարայրի հաղթանակը հայ եկեղեցու և հայ քրիստոնեության հաղթանակն էր, հաղթանակ, որ հավիտենականություն է պարգևել մեր եկեղեցուն:

\* Ծարրունակված «Էջմիածին» ամսագրի 1975 թ. նո. Թ-ից:

Ավարայրի ճակատամարտը, կամ Վարդանանց պատերազմը, ունեցել է իր տրևտեսական ու քաղաքական շարժառիթները, որոնք բավականին մանրամասն շարադրված են Եղիշեի և Փարպեցու Պատմությունների մեջ:

Ղազար Փարպեցու պատմության մեջ պահվում է Պարսկաստանում ռազմատենչ ազնվականության ներկայացուցիչ Միրներսեսի հազարապետի խոսքը՝ ողորկած պարսից շահնշահ Հազկերտ Բ-ին.

«Արդ, քանի՞ երկրներ կան, որոնց վրա դուք աստվածաբար իշխում եք, որոնց կարող եք սպանել կամ ապրեցնել: Նախ և առաջ Մեծ Հայոց երկիրը, որ շատ պիտանի ու օգտակար է և նրան կից Վրաց և Աղվանից երկրները... Դուք ինքներդ և բոլոր արիները գիտեն, թե ինչպես մեծ ու պիտանի երկիր է Հայոց աշխարհը, բայց մտո է ու սահմանակից կայսեր իշխանությանը և միևնույն օրերնքն ու պաշտամունքի ձևերն ունի, որի համար կայսրը նրանց վրա ազդեցություն ունի: Եվ եթե մեր կրոնին դարձնենք նրանց... ողիղ ճանապարհի կզան և այնուհետև կսիրեն մեզ և Արյաց աշխարհը և կայսրից, նրա կրոնից ու

երկրից կհեռանան: Եվ եթե հայերը սրբ-տանց մերը լինեն, վրացիներն ու աղվան-ները մերն են ու մերը»:

Միհրներսեսի ծրագիրը իրականությունն դառնալու համար Հայաստանը ծանր հար-կահանությունների հետևանքով ենթարկ-վում է կեղեքումների: Պարսից կառավա-րությունը երկպառակություն է պահում հայ նախարարների միջև և նրանց բաժանում երկու հոսանքների՝ պարսկամուլների և ազգասերների: Հայ նախարարների և հո-գեվորականության ձեռքից խլում է նրանց ավանդական պաշտոններն ու իրավունք-ները և դրանք հանձնում պարսիկ դրածո-ների:

Չայրացած Հազկերտը արքունիք է կան-չում հայ, վրացի և աղվան նախարարնե-րին, ուր նրանց սպասում էր խիստ հար-ցաքննություն, հարստանք և մահապատիժ կամ ուրացում և, ավելի ճիշտ՝ կեղծ ուրա-ցություն:

Քրիստոնյա նախարարները, վերադառ-նալով իրենց հայրենի երկրները, բացա-հայտում են իրենց իսկական դեմքը և պարզում ապստամբության դրոշմը: Ահա այս վճռական պահին, անմիտ քաղաքա-կանությամբ, շատ տխուր դեր է կատա-րում պարսկամուլ կուսակցությունը՝ վա-սակ Սյունեցու գլխավորությամբ: Նրանց հաջողվում է հայ ապստամբներից անջա-



Նկար 5. Ավարայրի դյուցազնամարտի նախօրյակին

Եվ ահա, այս ամենից հետո, պարսից կառավարությունը 449 թ. Հայաստան է ուղարկում կրոնապիտության առաջարկ-հրովարտակը: Հայ ժողովրդի համար այս այլևս ընդունելի չէր, և նույն թվականին Աջտիշատում գումարված հայ նախարար-ների և հոգևորականների միացյալ ժողովը մերժում է կրոնապիտության մասին պար-սից կառավարության առաջարկը:

տել վրացիներին, աղվաններին, հույներին ու հունահայերին և հաջոց զորքերի սպա-րապետ Վարդան Մամիկոնյանին 66.000 զորքով թողնել Խուսպատիկ անգամ թվով մեծ և սպառազինված պարսից բանակի դեմ: Փաստորեն նրանք դախանանեցին հայկական դատին և պատճառ դարձան հայերի ֆիզիկական պարտությանը: Ավա-րայրը մեծ նշանակություն ունեցավ Հայ-

յատանի համար, և այն շատ մեծ հարված եղավ պարսկական կառավարությանը, որի համար մեծապես ցավեց Հազկերտ Բ շահնշահը:

Ավարայրին հաջորդեց պարտիզանական կռիվները, մինչև Վահանյանց պատերազմը:

Ավարայրին հաջորդեց հայ քրիստոնեության հաղթանակը:

Հայոց պատմության մեջ առաջին անգամ ժողովրդի բոլոր դասերը՝ հոգևորականներ, նախարարներ, շինականներ, միսսիոս և միական, գնում են գիտակից մահվանն ընդառաջ, դեպի հերոսացում:

Հաճախ կարծվում է, թե քրիստոնեությունը ստրկության, լոկ հնազանդության ուսմունք է: Մինչդեռ տասնյակ դարեր առաջ Ավարայրը ապացուցեց, որ քրիստոնեությունը ոչ թե ստրկության, կույր հնազանդության, այլ սխրանքի, հավերժության ուսմունք է:

Ավարայրը քրիստոնյա աշխարհի թերևս առաջին ու միակ ռազմական բախումն էր, ուր լույսի և խավարի, կյանքի և մահվան, հավատի և հավատորացության, հայրենիքի ու ստրկացման իրարամերժ գաղափարներն էին բախվում, ուր ճշտվում էր մեկ անգամ ևս Հիսուսի՝ մեռնելով ապրելու պատգամը:

Հայ եկեղեցին երախտագիտությամբ սրբացրել է Ավարայրի 1036 նահատակներին՝ Վարդան գորավարի գլխավորությամբ:

Ցավոք սրտի, պատմությունը չի պահել նրանց անունը: Հայտնի են միայն 9 գորականներ.

1. Քաջ Վարդան Մամիկոնյան՝ 133 համահարզներով,
2. Կորովի Խորեն Խոռխոռունի՝ 19 ընկերներով,
3. Արի Արտակ Պալունի՝ 57 ընկերներով,
4. Չարմանալի Տաճատ Գնթունի՝ 19 ընկերներով,
5. Իմաստուն Հմայակ Դիմաբայան՝ 22 ընկերներով,
6. Հրաջակերտ Ներսես Քաջբերունի՝ 7 ընկերներով,
7. Մանուկ Վահան Գնունի՝ 3 ընկերներով,
8. Արդար Արսեն Ընծայունի՝ 7 ընկերներով,
9. Առաջադեմ Գարեգին Սրվանձությանց՝ 2 եղբայրներով և 18 ընկերներով:

Հայ եկեղեցին սուրբ Վարդանանց հիշատակը համազգային շուքով ամեն տարի տոնում է Բուն Բարեկենդանի կիրակիի նախընթաց հինգշաբթի օրը՝ «Արթոցն

Վարդանանց զօրավարացն մերոց հազար երեսուն և վեց վկայիցն»:

**Վկայաբանությունը.**—Յայսմատորք, Կ. Պոլիս, 1834 թ., Բ 59—62:

Արշակունիների հայոց թագավորության վերացումից և ս. Սահակ Հայրապետի մահից հետո պարսիկները տիրում են Հայոց աշխարհին: Այն ժամանակ հայոց զորա-



Նկար 6. Մանկահասակ իշխանը Հազկերտի առջև

վարն էր Մեծն Սահակ Հայրապետի թոռ Վարդանը՝ Մամիկոնյան տնից, որը երկու եղբայրներ ուներ՝ Հմայակ և Համազասպ:

Պարսից Հազկերտ արքան ստիպում է քրիստոնյաներին ուրանալ Քրիստոսին և պաշտել արեգակը և հուրը՝ այսպանելով նրանց Փրկչին՝ խաչված, մահացած և թաղված անվանելով: Եվ մի փոքրահասակ հայ իշխան ասում է թագավորին. «Արքա քաջ, դու որտեղի՞ց գիտես այդ»: Եվ թագավորը պատասխանում է. «Իմ առջև ընթերցեցին ձեր մոլորության գիրը»: Իսկ Քրիստոսի զինվորը նորից է հարցնում. «Իսկ ինչո՞ւ չես հիշում նաև Քրիստոսի հարությունը, համբարձումը և երկրորդ գալուստը»: «Այդ բոլորը առասպել են», պատասխանում է թագավորը և հրամայում տանջամահ անել նրան:

Այդ ժամանակ անօրեն թագավորը մոգերի խորհրդով մի հրովարտակ է գրում

իր տերության մեջ եղող բոլոր քրիստոնյա ազգերին, որ բոլոր գալստների իշխանները իրենց գործերով շտապ իր մոտ գան: Եվ բոլորը շտապ գալիս են թագավորի մոտ՝ իրենց երեցներով և սարկավազներով, ինչպես որ սովորություն էր սուսջ:

Իսկ անօրենն իր առջև է կանչում բոլոր իշխաններին և նրանց խոստանում նվերներ և պատիվ, եթե թողնեն քրիստոնեությունը և մոզերի օրենքներով սկսեն ապրել: Իսկ նրանք Քրիստոսին խոստովանում են իբրև ճշմարիտ Աստված և հանձն առնում մահանալ, քան թե ուրանալ Քրիստոսին: Եվ ավելի շատ հայ իշխաններն էին ամուր մնում Քրիստոսի սիրո մեջ և հորդորում բոլորին շուրանալ Քրիստոսին:

Իսկ անօրենն թագավորը, բարկանալով, հրամայում է շարժարանքների ենթարկել նրանց և ոմանց էլ՝ սպանել: Այնուհետև կենդանի մնացածներին ողարկում է հեռավոր աշխարհները՝ պատերազմով զբաղվելու, որպեսզի մոռանան իրենց երկիրը և այլևս չվերադառնան: Այնուհետև մտածում է մեծ գործ ողարկել Հայոց աշխարհ և ավերել ողջ երկիրն ու եկեղեցիները և բոլորին գերելարել, եթե չուրանան քրիստոնեությունը:

Իսկ քրիստոնյա իշխանները թեև ուրախ էին ներքնապես Քրիստոսի սիրո համար խոշտանգվելով, սակայն միշտ մտատանջվում էին անտեր ու անպաշտպան մնացած հայրենի երկրի համար: Եվ պարսից արքայի խորհրդատուներից մեկը, որ գաղտնաբար հավատում էր Քրիստոսին, խորհուրդ է տալիս նրանց խաբել արքային և առժամանակ կատարել նրա ցանկությունը, մինչև որ հասնեն իրենց երկիրը: Իշխանները լսում են նրա խորհուրդը և իրենց կեղծ համաձայնությունը տալիս արքային:

Ուրախանում է Հագկերտը և, արձակելով նրանց կապանքներից, կանչում իր մոտ, խոսում քաղցրությամբ, նվերներ տալիս ավաններ, գյուղեր, ագարակներ, ոսկի, արծաթ, պատիվ, ավագություն և յոթ հարյուր մոզ՝ իբրև ուսուցիչ Հայոց աշխարհի, ու մեծաբանակ գործ:

Լսելով այս մասին Հայոց աշխարհում և ճշմարտությունը չիմանալով, Հայաստանում մնացած իշխանները, եպիսկոպոսները, քահանաները, ազատները, շինականները և ուրիշներ, Հովսեփ կաթողիկոսի գլխավորությամբ, հավաքվում են մի վայրում և միասին ուխտում կովել նրանց դեմ և սպանել բոլոր ուրացողներին՝ եղբայրը՝ եղբորը, հայրը՝ որդուն, ծառան՝ տիրոջը, կինը՝ ամուսնուն:

Երբ կեղծ ուրացողների խումբը մոզերով և պարսիկ զորքով հասնում է Անգղ գյու-

ղաբաղաբ, մոզաբաղ ցանկանում է քանդել տեղի եկեղեցին, ուր աղոթում էին Ղևոնդ Երեցը և բազմամբոխ հավատացյալներ, որոնք, տեսնելով մոզաբաղի և իմանալով նրա մտադրությունը, ջարդում են նրա գլուխը և բոլոր մոզերի հետ ծեծելով վնդում եկեղեցուց:

Իսկ սուրբ Վարդան ապարապետը և բոլոր մյուս միաբան իշխանները ընկնում են եպիսկոպոսների ոտքերը, համբուրում սուրբ Ավետարանը և խոստովանում ողջ իրականությունը, վերստին ստանալով առաքինությունը, և պատրաստվում գիշերով հարձակվել պարսիկ զորքի և մոզերի վրա, որոնց և կոտորում են անխնայ:

Իսկ Հագկերտ թագավորը, լսելով այս ամենը, մի մեծ քանակ է ողարկում Հայոց երկրի վրա Միհրներսեսի գլխավորությամբ, որը գալիս և կանգ է առնում Փայտակարանում: Ապա Միհրներսեսը իր գործը հանձնում է Մուշյան Իսապալուրտ գործակարհին, նրան ողարկելու Հեր և Զարավանդ գալստները, իսկ ինքը խորհրդակցում է ուրացող Վառակ մարզպանի և այլ ուրացող իշխանների հետ՝ ավերելու համար Հայոց աշխարհը և վերացնելու քրիստոնեությունը այնտեղից:

Իսկ Հայոց գորավար Վարդանը հավաքում է իր զորքը մեծամեծ իշխաններով, որոնք հետևյալներն էին. Մերշապուհ Արծրունի, Խորեն Խոռխոռունի, Վահան Ամատունի, Արտակ Պալունի, Գունդն Վահևունի, Թաթուլ Դիմաբայան, Ատոմ Գունդնի, Խուրով Գաբելայան, Արշավիր Արշարունի, Ծմալուն Անձևացի, Տանատ Գևորունի, Հնալակ Դիմաբայան, Կարեն Սահաունի, Գագրիկ Դիմաբայան, Ներսես Բաջբերունի, Փարսման Մանդակունի, Արսեն Ընծաունի, Այրուկ Ալյունի, Վրեն Տաշրացի, Ապրսամ Արծրունի և ուրիշ մեծամեծներ, բազմաթիվ զինվորական գեղեր՝ շուրջ վաթսուհի հազար հեծյալ և հետևակ: Վարդան Մամիկոնյանին են միանում նաև Մեծն Հովսեփը և Ղևոնդը՝ ողջ հոգևորականությամբ, և բազում շինականներ, ազատներ:

Եվ Մեծն Վարդանը քաջալերում է զորքին և ասում. «Մի վախեցեք մահկանացուի արից, մեռնենք քաջությամբ, որպեսզի անուն և ոգի ժառանգենք»: Եվ ում որ հարկավոր էր, նա երիվարներ և զենք է բաժանում: Իսկ երախանները մկրտվում էին և բոլորն էլ հաղորդվում Տիրոջ մարմնով և արյունով:

Եվ լսելով, որ պարսից զորքը հասել է Արտագի դաշտ, հայոց զորքը ընդատաջ է գնում նրանց և, չորս մասի բաժանվելով, գազանաբար անցնում Տղմուտ գետը և

մխրճվում պարսից գործի մեջ ու մեծ կոտորած աճում:

Քաջ Վարդանը տեսնելով, որ պարսիկները նեղում են հայերի ձախ թևին, մեծ ուժով հարձակվում է պարսիկների աջ թևի վրա և կոտորում բոլորին, փղեքով հանդերձ, ու քանդում Մատյան գունդը: Եվ այնտեղ, մեծ հերոսություններ գործելով, քաջ զորավարը արժանանում է նահատակության պսակին և երկնի արքայությանը: Եվ ճակատամարտը երկարելով մինչև երեկո, ողջ դաշտը ծածկվում է արյունով, և երկու կողմերն էլ հաղթանակի չեն հասնում, բայց քանի որ հայոց զորավարը սպանվել էր, հայոց զորքերը ցրվում են և ամրանում երկրի ամրություններում:

Այդ ճակատամարտում հայերից նահատակվում են 1036 հոգի, իսկ ուրացողների և պարսիկների կողմից սպանվում են 3544, որոնցից իննիստ ճանաչում էր պարսից թագավորը անձամբ:

Եվ սրբերի տոնը կատարվում է հրոտի 30-ին (օգոստոսի 5-ին):

Հատված շարականից

**Արիացեալք առ հակառակսն.  
Քաջութեամբ առնուլ զվրէժ խաբէութեան.  
Հանճարեղք ի հատուցումն դաւանացն.  
Ջամբարշտացն արդարադատ չափմամբ.  
Զօրականք յաղթօղբ պսակեալք ի**  
**Քրիստոսէ:**

Ղ Ա Ն Ո Ղ Յ Ա Ն Զ

Այս անվան տակ ճանաչվում են այն հոգևորականները, որոնք Վարդանանց ապստամբությունից հետո արքորվեցին Վրկանաց աշխարհի, Պարսկաստանի խորքերը՝ Ատրորմիզդ մարզպանի և Հազկերտ Բ արքայի հրամանով:

Աքարում այս հոգևորականները կանչվեցին դատական ատյան՝ պատասխանատրվության: Նրանց առաջարկվեց ընդունել մազդեականությունը՝ իրենց կյանքը փրկելու համար: Սակայն կորովի և գաղափարապաշտ հայ հոգևորականների վրա ոչ մի ազդեցություն չթողեց պարսիկների սպառնալիքներն ու չարչարանքները: Նրանք արիաքար նահատակվեցին 454 թ.:

Պատմությունը հիշում է այդ հոգևորականների անունները, որոնք իրենցից մեկի՝ քաջ և նախանձախնդիր Ղևոնդ երեցի անունով կոչվեցին Ղևոնդյանք: Դրանք են.

1. Հովսեփ կաթողիկոս Հողոցմեցի, Վալոց ձոր գյուղից: Սահակ-Մեսրոպյան սուս-

ջին սերնդից էր: Իր ուսուցիչների մահից հետո Մեսրոպ Մաշտոցի հրամանով հաջորդել է հայրապետական գահին:

2. Սահակ եպիսկոպոս Ռշտունի: Պարսկագետ լինելով, ինքն է, որ կատարել է իրենց դատավարության հարցաքննության թարգմանությունը:

3. Ղևոնդ երեց, Վանանդի Իջավանք գյուղից: Ամենատարեցը և ամենավատառողջը, որ սակայն իր հոգեկան արիությանը խմբի շունչն ու հոգին էր դարձել:

4. Մուշե քահանա Աղբակեցի, Արծրունյաց նախարարության տաներեցն էր:

5. Արշեն երեց, Բագրևանդի Եղեգիկ գյուղից, անուս և անգրագետ մի հոգևորական էր, որ սակայն մեծ հարգանք էր վայելում ժողովրդի կողմից իր հզոր հավատքի համար:

6. Քաջաջ արկալազ, Ռշտունյաց գավառից: Սահակ եպիսկոպոսի փոքրավորն էր:

Այս վեցը նահատակվել են միասին վերոհիշյալ դատավարության ընթացքում:

Բացի սրանցից, կային նաև երկու այլ երեցներ՝ Աքրահամ և Խորեն անուններով, որոնք թեև ցանկանում էին նրանց հետ նահատակվել, սակայն նրանց ազատ արձակեցին՝ միայն ականջները կտրելով:

Խորենը մահացավ Ատրեստանում՝ չդիմանալով տոթակեզ կլիմային:

Իսկ Աքրահամը վերադարձավ Հայաստան և կարգվեց Բզունցյաց եպիսկոպոս: Նրան է ընծայվում «Վկայք Արևելից»-ի հայերեն թարգմանությունը:

Ղևոնդյանց սրբերից է համարվում նաև մի պարսիկ դեմպետ, որ նրանց քանուպետն էր և, տեսնելով սրբերի անկուր տանջանքները և դրանց տոկալը, քրիստոնյա է դարձել և նահատակվել նրանց հետ միասին:

Հայ եկեղեցին սուրբ Ղևոնդյանց հիշատակը համագգային շուքով տոնում է Բուն Բարեկենդանի կիրակիի նախընթաց երկուշաբթի օրը՝ «Սրբոցն Ղևոնդեանց քահանայից»: Աքրահամի և Խորենի հիշատակները տոնվում է նաև ստանձին:

**Վկայաբանությունը.**—Յալամատուրք, Կ. Պոլիս, 1834 թ., Բ 53—56:

Հայոց սուրբ Հայրապետ Մեծն Սահակի մահվանից հետո սուրբ Գրիգորի Աթոռի տեղապահ է լինում Մեսրոպ վարդապետը, որը և նույն տարին մահանալով, կաթողիկոսության իշխանությունը թողնում է Մեծն Հովսեփին, որը Վալոց ձորի Հողոցմյանց գյուղից էր, գիտուն և աստվածային հանճարով և իմաստությանը լցված մի մարդ: Եվ մինչ ցանկանում էին ձեռնադրել նրան, պարսից Հազկերտ արքան ստիպեց

հայոց իշխաններին ուրանալ Քրիստոսին: Իսկ սուրբ Հովսեփը հավաքում է բոլոր եպիսկոպոսներին, քահանաներին և մնացած իշխաններին, որոնք միասին ուխտ են անում միշտ մնալ Քրիստոսի հավատքին, նրա համար սիրով մահանալ և նահատակի անուն ծառանգել, կույել պարսից զորքի դեմ, անխնա կոտորել ուրացողներին, չխնայել ո՛չ որդուն, ո՛չ եղբորը, ո՛չ ամուսնուն և ո՛չ էլ որևէ ազգակիսն:

Իսկ հայոց իշխանները, որոնց գլխավորն էր սուրբ Սահակ հայրապետի թոռ Վարդանը՝ Մամիկոնյան տնից, խաբում են պարսից թագավորին և, իրենց հետ վերցնելով երեք հազար մոզ և մեծաքանակ պարսիկ զորք, գալիս են Հայոց աշխարհ, միաբանում եկեղեցու ուխտին և կոտորում պարսիկ մոզերին ու զինվորներին:

Հազվեքուք, լսելով այս ամենը, շատ է տխրում և մեծ զորք գումարում ու տալիս Միհրներսեսի հազարապետին, որը և գալիս է Փայտակարան քաղաք: Անջատվելով հայոց միաբանությունից, նրա մոտ է գնում Սյունյաց իշխան Վասակ ուրացողը՝ այլ ուրացող իշխանների հետ: Եվ Միհրներսեսին իր ողջ զորքը հանձնում է Մուշկան Իսապոլորս գորավարին և նրան ուղարկում սուրբ Վարդանի և հայոց զորքի վրա:

Սուրբ Վարդանը ելնում է նրանց դեմ վաթսուն հազար զորքով: Նրանց հետ էին նաև Մեծն Հովսեփը, Ղևոնդ Երեցը և այլ շատ եպիսկոպոսներ ու քահանաներ: Հայ ռազմիկները, քաջաբար կույելով պարսիկների դեմ, շատերին կոտորում են՝ իրենք էլ նահատակվելով Արտազի դաշտում: Եվ քանի որ սուրբ Վարդանը պատերազմում սպանվում է փղերի մեջ, մնացածները ցրվում են լեռները և ամրությունները: Իսկ պարսից զորքը, ուրացող Վասակի հետ միասին հետապնդելով նրանց, երդումներով իջեցնում էին նրանց ամրություններից և, կեղծելով իրենց երդումը, սպանում:

Այսպես գերի են ընկնում նաև սուրբ Հովսեփը, Ղևոնդ Երեցը և ուրիշներ, որոնք և բողոքում են արքունի դուռը այս մասին, և նրանց պարսիկները չեն հանդգնում սպանել:

Սուրբ Հովսեփի և Ղևոնդ Երեցի հետ միասին պարսիկները Պարսկաստան են գերեվարում նաև այլ հոգևորականների, որոնց թվում հիշվում են Ռշտունյաց եպիսկոպոս սուրբ Սահակը, Սամվել և Աբրահամ քահանաները՝ Արտաշատից, Քաջաջ սարկավազը, Արշեն, Խորեն, Աբրահամ և Մուշե քահանաները և ուրիշներ:

Շահապարհին սուրբ Ղևոնդյանը հանդիպում են ուրացող Վասակին, որը խո-

նարհությունը ողջուն է տալիս նրանց: Ղևոնդ Երեցը հարցնում է նրան. «Ինչու չես Տեր, ո՛ր ես գնում»: «Գնում եմ իմ յայ Տեր, ո՛ր ես գնում»: «Գնում եմ իմ յայ Տեր, ո՛ր ես գնում», պատասխանում է ուրացողը: Եվ Ղևոնդ Երեցը ապեղացնում է. «Եթե դու կենդանի վերադառնաս Հայոց աշխարհ, ուրեմն Աստված երբեք չի նկատել մեր հավատքը»: Եվ ուրացողը տրբտուրջամբ շարունակում է իր ճանապարհը:

Սրբերը երկու ամիս և քսան օր կուպանքների մեջ ճանապարհորդելով հասնում են արքունիք: Բերում են նաև հայոց նախարարներին, որոնց ուղարկել էր Ատրոքսիդոս մարզպանը: Եվ թագավորը հրամայում է Միհրներսեսի հազարապետին՝ քննել, թե ո՞ւմ պատճառով եղավ Հայոց երկրի ավերումը:

Եվ ողջ մեղքը բարդվում է Վասակի գրխին:

Թագավորը հրամայում է պատվազուրկ անել նրան և ծեծել ու ծաղրածանակի ենթարկել մեծ հրապարակում, սպա նետել բանտ, ուր և որդևոտելով մահանում է ահալոր տանջանքների մեջ:

Իսկ սուրբ քահանաներին և նախարարներին տանում են Նյուշապուն քաղաք և հանձնում քաղաքի մոզպետին, որը և նրանց բանտարկում է և նեղում քաղցով ու ծարավով և ստիպում ուրանալ Քրիստոսին՝ ազատվելու համար կապանքներից: Իսկ նրանք, հատուտուն մնալով Քրիստոսի հավատքի մեջ, ուրախությամբ էին տանում չարաքանքները:

Չարմացած մոզպետը մի օր գիշերով գնում է բանտ՝ տեսնելու, թե ի՞նչ են անում նրանք, և դուռն ճեղքից տեսնում է նրանց քնած պայծառ լույսի մեջ. և սրբերը արթնանալով արդթում են: Մոզպետը հաջորդ օրը նորից է գալիս բանտ և նույնպես տեսնում սրբերին լուսավորված, բացում է բանտի դռները, ընկնում նրանց ոտքերը և, հավատալով Քրիստոսին, պատմում նրանց իր տեսիլքը և սովորում նրանցից ճշմարիտ հավատքը ու փրկության խոսքերը: Ապա մոզպետը տանում է նրանց իր տուն, ինչպես նաև նախարարներին, որոնք նույնպես նույն քաղաքում էին բանտարկված, մկրտվում է իր ողջ ընտանիքով և փառավորում սրբերին ու իշխաններին զանազան պատիվներով:

Հազկերտն իր թագավորության 16-րդ տարում պատերազմում է բուշանների դեմ և պարտվում: Խորապես խոցվելով այդ անհաջողությունից, չգիտեր, թե ո՞ր թափեր իր դառնության թույլը: Եվ մոզերը ասում են նրան. «Քաջ արքա, հայոց մեծերը, որ բանտում են, ամեն օր անիծում են քեզ, և աստվածները բարկանալով, որ

մինչև այսօր կենդանի եւ պահել իրենց անարգողներին, չօգնեցին քեզ»:

Եվ թագավորը հրամայում է Դենշապուհի իշխանին՝ գնալ Նյուշապուհի քաղաք, չարչարել սուրբ քահանաներին և, եթե չերկրպագեն աստվածներին, սրով սպանել նրանց: Դենշապուհը, գալով Նյուշապուհի քաղաք, տեսնում է նրանց հետ մոգպետին և զարմանալով հարցնում է, թե արդյո՞ք քրիստոնյա է դարձել նա: Եվ, իմանալով, գայրանում է և նախ սպանել տալիս Սամվել և Արրահամ քահանաներին՝ ցանկանալով այդպիսով ահաբեկել մոգպետին և մյուս քրիստոնյաներին:

Այնուհետև Դենշապուհը գիշերով առնում է սուրբ Հովսեփին իր ընկերներով, և հեռացնելով քաղաքից ու յուրաքանչյուրին հարցաքննելով և տեսնելով, որ հաստատուն են իրենց հավատքի մեջ, հրամայում է դահիճներին՝ կապել նրանց ոտքերը և ձեռքերը ու քարշ տալ ապաստած վայրերում, մինչև որ արյունաքամ և ուժասպառ են լինում: Եվ դարձյալ քերում են Դենշապուհի մոտ ու հարցնում, թե նորի՞ց չեն ցանկանում կատարել թագավորի կամքը՝ երկրպագել արեգակին: Սրբերը պատասխանում են. «Մենք մեր Աստծուն չենք ուրանա և երկրի տարերքներին չենք երկրպագի ու ոչ էլ կլսենք ձեր հոգով կույր և միակնի թագավորին»:

Երբ լսում է այս խոսքերը Դենշապուհը, գայրանում է իբրև սուրբ և հանելով իր սուրբ, հարձակվում նրանց վրա ու հարվածում սուրբ եպիսկոպոսի աջ ուսին՝ այն անջատելով մարմնից: Իսկ սուրբը, քաջալերելով իր ընկերներին, ասում է. «Ահա տեսնում եմ, որ հրեշտակների գունդը գալիս է մեզ մոտ և հրեշտակապետի ձեռքին վեց պսակ կա»:

Եվ այս լսելով սուրբ Ղևոնդը ասում է սուրբ Հովսեփին. «Մոտեցիր սրին. որովհետև դու աստիճանով ավելի մեծ ես, քան մենք բոլորս»: Եվ այսպես գլխատում են վեց երանելիներին, որոնք են. Մեծն Հովսեփ, Սահակ եպիսկոպոս, Ղևոնդ Երեց Վանանդեցի, Մուշե երեց Բագրևանդացի, Քաջաջ սարկավազ Ռշտունցի և Նյուշապուհի քաղաքի մոգպետը:

Իսկ Սամվել քահանան Արարատի Արած գյուղից և նույն գյուղից Արրահամ սարկավազն ու Թաթիկ եպիսկոպոսը նահատակվում են:

Եվ սուրբ Ղևոնդյանց նահատակության օրը հրոտի 27-ն է (օգոստոսի 2):

Եվ մի խումբիկ քրիստոնյա գաղտնաբար վերցնում է սրբերի մարմինները ու տանելով բաժանում քրիստոնյաներին:

Սրանց աղաչանքներով Քրիստոս Աստ-

ված թող հաստատուն պահի Հայաստանյայց եկեղեցին. ամեն:

Հատված շարականից

Առանել պարծիմք ձեօք. սուրբ հօտապետք Քրիստոսի.

Յօրինեալք և յարդարեալք. տանարք սուրբ մաքրեալք.

Օթեվանք տէրութեան երկնատր թագաւորին.

Ով սուրբ Ղևոնդեանք:

Ծ ո շ ա ն ի կ

Վարդան Մամիկոնյան զորավարի ավագ դուստրն էր, իր իսկական անունը՝ Վարդենի: Իսկ Շուշանիկը իր փառաքչական անունն էր, որով և ճանաչվել է երկար դարեր հայ պատմության և վարքաբանության մեջ:

Ամուսնացել է վրաց Աշուշա բոլեշիսի որդի Վազգենի հետ և որոշ ժամանակ սպրել հանգիստ ամուսնական կյանքով՝ ունենալով երեք տղա և մի աղջիկ: Սակայն Աշուշա բոլեշիս մահից հետո, երբ իր ամուսինը վրաց բոլեշիս է դառնում և կրոնափոխ լինում պարսկական իշխանության դրոյմով ու կրկին անգամ ամուսնանում Պերոզ արքայի զորանշի հետ, Շուշանիկը քաշվում է մի փոքրիկ եկեղեցու ստրկներ տնակը և այնտեղ ապրում աղոթքով ու արցունքներով՝ արհամարհելով իր ամուսնու քազմաթիվ առաջարկներն ու սպառնալիքները՝ հավատափոխ դառնալու համար: Այդ ժամանակ է, որ խեղդվում է իր զավակներից մեկը Քուր գետում: Շուշանիկը ուրախանում է իր զավակի մահվան համար, որովհետև նա ազատվում էր այդպիսով ուրացման վտանգից:

Շուշանիկը 7 տարի անյուր տանջանքների է ենթարկվում իր ամուսնու ձեռքով սպալիներով միայն իր պապից՝ ս. Սահակ հայրապետից իրեն կտակված Ավետարանի ընթերցանությամբ:

Ս. Շուշանիկը, այսպես տանջվելով քանտում, մարտիրոսական մահով իր հոգին է ավանդում Աստծուն 470 թ.:

Ոխտանես պատմիչը նրա գերեզմանը ցույց է տալիս Յուրտավում:

Հիշվում է հետևյալ տողերը, որ ս. Շուշանիկը գրել էր իր Ավետարանի մեջ. «Մրտիս տանարը պահեցի անաղարտ: Պապիս՝ ս. Սահակի, և ծնողներիս՝ Վարդանի ու Դստրիկի միջոցով այն նվիրում եմ իմ Աստծուն: Թող իմ մահն էլ խառնվի իմ սուրբ հայրերի հետ...»:

Հայ եկեղեցին այս սրբուհու հիշատակը տոնում է Վարազա ս. Խաչի պահքի երեք-շաբթի օրը:

**Վկայաբանությունը.**—Յայնմայրք, Կ. Պոլիս, 1834 թ., Բ 315:

Սա սուրբ Վարդանի դուստրն էր և Մեծ Հայքի հայրապետ սուրբ Սահակի թոռը, որ վրաց Վազգեն բղեշխի կինը եղավ, որը թագավորում էր Մցխեթում:



Նկար 7. Ա. Ծուշանիկ

Եվ սուրբ Վարդանանց նահատակությունից հետո Ծուշանիկի ամուսին Վազգենը, պարսից թագավորին հաճոյանալու համար, ուրանում է Քրիստոսին և ստիպում սրբուհի Ծուշանիկին, որ նա էլ որանա:

Եվ չկարողանալով հավատափոխ անել, բանտարկում է: Բանտում քաղցածությունից ու տանջանքներից սրբուհու մարմինը պատվում է ցավերով ու վերքերով, բայց և ավելի մեծ ժողովարությանը ու ճգնությունը էր նա տանում այս ամենը Քրիստոսի սիրո համար:

Եվ մի օր Վազգենը սաստիկ բարկանալով նրա հավատարմության վրա, լախտով հարվածում է նրան ու նահատակում: Վկայուհին թաղվում է Վրաց աշխարհում:

Հատված շարականից

**Քրիստոսի պատկողին զաղօթանուէր զմաղթանս.**  
**Զերանեայ նահատակին մատուցուք ի յնծայումն.**  
**Զի հաճութեամբ խոնարհեայ ընկալցի վասն մեր.**  
**Թողութիւն շնորհեցէ մեր բազում յանցանացն:**

Ա տ ո մ յ ա ն ք

Այս անվամբ ճանաչվում են երկու խումբ սրբեր.

ա.— Ատոմյանք, որոնց նահատակությունը տեղի է ունեցել Ե դարի կեսերին, Վարդանանց պատերազմից երկու տարի առաջ:

բ.— Ատոմյանք, որոնք նահատակվել են 853 թ. Դվինում, Բողա ոստիկանի հրամանով:

Առաջին Ատոմյանց նահատակությունը կապված է Վարդանանց նախաշարժման հետ: Սասանյան Պարսկաստանը, ցանկաւազով իրականացնել իր բոլոր քրիստոնյա հպատակ ժողովուրդների կրոնափոխության ծրագիրը, նախ աշխատում է նրանց զինորական ուժերը դուրս հանել երկրից և պատերազմի ողբարկել իր թշնամիների դեմ: Ատոմ Գնունին և Մանաճիհր Ռշտունին, այլ նախարարների նման, իրենց զնդերով թողնում են իրենց հայրենիքը և ողորկում Պարսկաստան: Սակայն շուտով ետ են կանգնում իրենց ճակատագրից և վերադառնում հայրենիք: Պարսկական պատմիչ բանակը հարձակվում է Ատոմ Գնունու և ապա Մանաճիհր Ռշտունու գնդերի վրա և ստիպում նրանց կրոնափոխ դառնալ: Բոլոր հայ զինորակները և իշխանազունները գերադասում են նահատակվել, քայք չուրանալ Քրիստոսին:

Ատոմ Գնունու հետ նահատակվածներից հականե-անվանե հիշվում են Վարս Գնունին, Վարս Աստանիկը, Ներսես Երվանդունին և Վարձավոր Արծրունին:

Երկրորդ Ատոմյանները, ինչպես արդեն նշեցինք, նահատակվել են Թ դարի կեսերին Դվինում, Բողա ոստիկանի հրամանով, որը Հայաստանի զանազան կողմերից հավաքել էր 150 գեղեցկատես և հաստաբազուկ երիտասարդների՝ հավատափոխ անելուց հետո ամիրապետին ընծայելու համար:

Սակայն Բողա ոստիկանին չի հաջողվում նրանցից որևէ մեկին հավատափոխ անել և բարկությունից հաջորդաբար բռնորին էլ նահատակում է զանազան տանջանքներով: Այդ նահատակներից հիշվում

են միան մի քանի անուններ. Ատոմ Անձեացի, Մլեհ Վարաժնունի, Գևորգ Բողկացի և Վասակ Ակեացի:

Հատկանշական է, որ սուսջին Ատոմյանների մասին ոչ մի տեղեկություն չկա մեր պատմիչների մոտ. նրանց պատմությունը ծանոթ է մեզ միայն վկայաբանությունից և ճառընտիրներից, իսկ երկրորդ Ատոմյանների մասին լայնորեն հիշատակում են Հովհաննես Դրասխանակերտցին, Թովմա Արծրունին և Ասողիկը:

Հայամալորքում կա միայն սուսջին Ատոմյանների վկայաբանությունը:

Դեռ հին ժամանակներից հայ եկեղեցին սրբացրել է այս երկու խումբ նահատակներից և նրանց հիշատակը միասին տոնել ամեն տարի Բուն Բարեկենդանից երկու շաբաթ առաջ ընկնող երկուշաբթի օրը՝ «Արքոց Ատոմեանց զօրավարացն»:

**Վկայաբանությունը.**— Յայամալորք, Կ. Պոլիս, 1834 թ., Բ 87—88:

Սուրբ Ատոմը հայերի մեծ իշխաններից էր և գտնվում էր պարսիկների զորքում: Հազկերտ կրակապաշտ պարսից արքան ստիպում է իր բանակում եղած քրիստոնյաներին կրոնափոխ լինել: Ատոմը չհամաձայնվելով, ստնում է իր զորքը և գնում Հայոց աշխարհ:

Եվ Հազկերտը մեծ զորք ուղարկեց նրանց ետևից, որպեսզի, ուր որ հասնեն, կա՛մ իրենց կրոնքին դարձնեն, կա՛մ կոտորեն սրով: Սրբերը հասնում են հայոց սահմանը և հաստատվում մի միայնակյացի մոտ: Նա մարգարեանալով ասում է, թե դուք պիտի նահատակվեք Քրիստոսի համար: Եվ Քրիստոս գիշերով երևալով Ատոմին, բաշխում է նրանց կարմիր վարդե պակներ:

Առավոտյան պարսից սևագուն զորքը հասնում է նրանց: Ատոմյանները նստելով իրենց ձիերը ցանկանում են կռվել, սակայն գիշերվա տեսիլքը երևում է բոլորին և, իջնելով ձիերից, իրենց պարանոցները հոծարակամ դնում են պարսիկների սրերի սուսջ:

Եվ նահատակվածների մեջ էին սուրբ Ատոմը և իր որդին՝ Գևունիների ազգից, Վարսը՝ Ոստան տնից, Ներսես Երվանդունին, Վարձավորը և ուրիշներ:

Իսկ Ռշտունյաց մեծ իշխան Մանանինը, նույնպես փախնելով պարսից զորքից, իր գնդով նահատակվում է իր երկրի սահմանի վրա, այն տեղում, որը Ռշխարաց վանք է կոչվում:

Եվ արանք նահատակվեցին նախասարդի 9-ին (օգոստոսի 19-ին)՝ Քրիստոսի փառքի համար:

Հատված շարականից

**Աղաչեմք զքեզ Տէր բարեխօսութեամբ  
սրբոց Ատովմեանց,  
Որք նահատակեցան ի ճակատամարտ  
պատերազմի.**

**Յաղթօղ գտան ընդդէմ թշնամուն.  
Բարեխօսութեամբ սոցա Քրիստոս  
խնայեա ի մեզ:**

**Թ ա թ ո լ ի , Վ ա ր ո ս , Թ ո մ ս ս**

Թաթուլը և Վարոսը եղել են ս. Սահակի և ս. Մեսրոպի աշակերտները: Մասնակցել են Վարդանանց հերոսամարտին և ապա ճգնել Գաբեղենից երկրում՝ առանձին-առանձին:

Թաթուլի համբավը տարածվում է ողջ երկրում: Բազմաթիվ աշակերտներ են հավաքվում նրա շուրջը: Թաթուլը մի վանք է կառուցում և միաբանություն հիմնում: Այդ վանքը նրա անունով կոչվում է Թաթուլի վանք: Լինելով միայնակյաց, առանձնասեր, Թաթուլը վանքի վերակացությունը հանձնում է իր աշակերտներից Թոմասին, իսկ ինքը առանձնանում մի մենարանում, ուր և ճգնելով կնքում է իր մահկանացուն: Նրա մարմինը ամփոփում են իր հիմնած վանքում: Այդտեղ է մահանում և թաղվում նաև Թոմասը:

Իսկ Վարոսը իր ողջ կյանքը անցկացնում է ճգնությամբ և սրբությամբ ու մահանում մարդկանցից անհայտ: Նրա մարմինը պատահմամբ գտնվում է մի օր: Այդ պատճառով էլ նրա անունը կոչվում է նաև Գյուտ:

Այս սրբերի մասին Հայամալորքում կա միայն հետևյալ տողը. «Ի ամին ասոր (դեկտեմբերի ա և տրեի իդ) ի Հայս յիշատակ սորք ճգնատրացն Թաթոյլ և Վարոսի, Գյուտի և Թոմասու» (Էջ 269):

Հայ եկեղեցին այս սրբերի հիշատակը տոնում է Գրիգորիս Աղվանից կաթողիկոսի նշխարների գյուտի, Անտոնի և Կրոնիդեսի ու 7 խոտանարակների հիշատակների հետ միասին, Խաչվերացի հիկեզերոյ կիրակիին հաջորդող երկուշաբթի օրը:

Հատված շարականից

**Այսօր յիշատակ սրբոց  
Եւ փայլին նշխարք սոցա ի մէջ եկեղեցոյ.  
Աղաչեցոյք զՏէր սրբօք խնայեա ի մեզ:  
Տաճար են սորք հոգոյն  
Կենդանի ոսկերք սոցա հիանդոց բծիշկ.  
Աղաչեցոյք զՏէր սրբօք խնայեա ի մեզ:**

**Յոթ խոտանարակներ**

Իննականյան վանքի յոթ ճգնավորներ էին Գալլ Վահանի իշխանության և Թաղիկ վանահոր առաջնորդության օրով, Չ դարի վերջերին:

Նրանց անուններն էին Պողիկարսոս, Թեոսևաս, Սիմեոն, Հովհաննես, Եպիփան, Գիմատիոս, Նարկեսոս:

Երբ պարսկական բանակը թալանի նպատակով արշավում է Տարոնի վրա, վանքի միաբանները հավաքում են զանազանք և ապաստանում հեռու թաքստոցներում՝ վանքի պահպանությունը թողնելով յոթ խոտանարակներին:

Երբ պարսիկները հարձակվում են վանքի վրա և այն դատարկ տեսնում, հուսախաբությունից կատաղած, գլխատում են ճգնավորներին, 604 թ.: Երեք օր հեռու հեռացած միաբաններից ոմանք զալիս և թաղում են նրանց մարմինները Անտոնի և Կրոնիդեսի գերեզմանների մոտ:

Հայ եկեղեցին այս սրբերի հիշատակը տոնում է Գրիգորիս Աղվանից կաթողիկոսի ճշարտների գլուտի, Անտոնի և Կրոնիդեսի ու Թաղուլի, Վարոսի, Թումասի հիշատակների հետ, ս. Խաչի հինգերորդ կիրակիին հաջորդող երկուշաբթի օրը:

**Հատված շարականից**

**Երբ աստեղեան երկնից կամարք  
աստուածութեանն կամարարք.  
Ճգնող մարմնով խոտանարակք մաքուր  
հոգով լուսոյ տանարք.  
Եկեղեցոյ բարձր աշտարակք տանս հայոց  
ամուր պատուարք.  
Չձեզ աղաչեմք ճգնող սուրբ հարք լինել  
անձանց մեր բարերարք:**

**Գրիգոր-Մանաճիհր Ռաժիկ Բա**

Գրիգոր-Մանաճիհր Ռաժիկը զրադաշտականությունից քրիստոնեության դարձած և քրիստոնեական կրոնին հավատարիմ մնալու համար նահատակված պարսիկ վկա է:

Բավականին միճելի հարցեր կան կապված նրա անձնավորության և նահատակության վայրի վերաբերյալ:

Բազմաթիվ հավաստի աղբյուրներից հայտնի է մեզ, որ 547—548 թթ. Գրիգոր-Մանաճիհր Ռաժիկի անունով Դվինում կառուցվել է մի եկեղեցի, որը և կործանվել է Ներսես Բ կաթողիկոսի հրամանով 554 թ. նստորակմանների բույն լինելու պատճառով:

Գրիգոր-Մանաճիհր Ռաժիկի մասին մի

վկայաբանություն կա Հայաստանում, ըստ որի նա, գալով Պարսկաստանից, բնակվել է Դվինում, մկրտվել քրիստոնյա, կրոնավոր դարձել և նահատակվել Դեմշապուն մարզպանի հրամանով:

Գրիգոր-Մանաճիհր Ռաժիկի մասին մի այլ վկայաբանություն է հրատարակել Գալուստ Տեր-Մկրտչյանը «Արարատ» ամսագրում (1901 թ., էջ 468—474) և ապա տունձին գրքովով: Ըստ այս վկայաբանության, Գրիգորը նահատակվել է 545—546 թթ.: Նա ոչ թե վանական էր Դվինում, այլ զինվորական՝ Վրաստանում: Այդ ժամանակ Պարսից արքունիքից հրաման է եղել, որը մահվան է դատապարտել զրադաշտականությունը որպացողներին: Գրիգոր-Մանաճիհր Ռաժիկը նախ չարչարանքների է ենթարկվել Վրաստանի Երվանդ-Վճնառայ մարզպանի կողմից և ապա տարվել «դոուն արքունի... ի բանակն», որ և նահատակվել է:

Գրիգոր Ռաժիկի նահատակության վայրի մասին արժեքավոր մի վկայություն է հաղորդում իր ժամանակակից Ներսես Ռաժիկը Հիգիստրուպիտ Մախոժի վկայաբանության մեջ (Վարք և Վկայաբանությունը սրբոց, Վեներտիկ, 1874 թ., էջ 124—130):

«Սա (Մախոժը—Ե. Ա. Պ.) ի դիպուածոյ ի մեքէ ի բանակս թագաորին հասանէր և պատահէր չարչարանաց սուրբ վկայի ուրումն՝ որում անուն էր Գրիգորիոս: Հրաշացեալ ընդ համարձակութիւն նահատակին ... յայնմհետէ զոջմամբ ունէր գնդաթիւնն: Գայր անտի յաշխարհն Սիրենաց, պարսպելով յունկնդրութիւն սրբոց, և լեալ անդ սակաւ ամիսս՝ հասանէ ի Հայս. և եկեալ յԱրարատ զաւստ՝ բնակէր յատանի Հայոց ի Դուին»: Աշտեղից կարելի է եզրակացնել, որ Գրիգոր-Մանաճիհր Ռաժիկի նահատակության վայրը «արքունի բանակն է», որը համընկնում է նաև Գալուստ Տեր-Մկրտչյանի հրատարակած վկայաբանության հետ՝ «դոուն արքունի ... ի բանակն», որտեղից և նա անցնում է Սյունիք և ապա «ի Հայս»՝ Արարատյան նահանգ՝ Դվին: Դժվար է ճշտել «արքունի բանակի» վայրը, սակայն կարելի է ենթադրել, որ այն կա՛մ Հայաստանում պետք է եղած լինի, կա՛մ էլ Հայաստանի սահմանների մոտ:

Այս ամենից կարելի է եզրակացնել միայն այն, որ Մանաճիհր Ռաժիկը, ազգությամբ պարսիկ, զրադաշտականությունից քրիստոնյա է դարձել՝ վերանվանվելով Գրիգոր, և ապա նահատակվել պարսիկների ձեռքով (Հայաստանում կամ նրա շրջակայքում)՝ դեմակորույս, հավա-

տորաց լինելու պատճառով, 545—546 թթ.:  
Նրա անունով մի վանք է եղել Դվինում  
2 դարի կեսերին:

Հայ եկեղեցին այս սրբի հիշատակը տո-  
նում է շարժական տոնով՝ ամռանը կամ  
ձմռանը:

**Վկայաբանությունները.—**

ա.—Յայսմատորք, Կ. Պոլիս, 1834 թ.,  
Ա. 6:

Սա Ռաժիկ ցեղից էր, Կալատի որդի  
Պարսից Խոսրով արքայի ժամանակ, ծըն-  
ված անհավատ ծնողներից և եկած-բնակ-  
ված Հայաստանի Դվին քաղաքում: Դվին-  
նում քրիստոնյա է դառնում, ընդունելով  
մկրտության սուրբ խորհուրդը, և վանք  
մտնելով կրոնավոր լինում:

Դենշապուհի պարսիկ մարզպանը գալով  
Հայաստան, լսում է նրա մասին, թե քրիս-  
տոնյա է դարձել, կանչում է իր մոտ և  
ստիպում, որ նորից պարսից կրոնին դառ-  
նա: Իսկ նա հաստատուն է մնում իր նոր  
հավատքին և Քրիստոսին Աստված խոս-  
տովանում ու բռնավորի հրամանով վկա-  
յական մահ ընդունում հունվարի 2-ին:

բ.—Սուրբ Գրիգոր Պարսիկի Վկայու-  
թյունը: Գալուստ Տեր-Մկրտչյան, «Գրի-  
գոր-Մանանդիս Ռաժիկ միսրան տոհմից»,  
Վաղարշապատ, 1902 թ., էջ 22—25:

Որսիզդի որդի պարսից Խոսրով արքայի  
թագավորության 15-րդ տարում թագավո-  
րից հրաման է ելնում՝ իր իշխանության  
բոլոր գավառներում պարսիկ ազգից քրիս-  
տոնյաներ դարձածներին բանտարկելու,  
տանջելու, որպեսզի ուրանան քրիստո-  
նեությունը և երկրպագեն արեգակին ու  
կրակը պաշտեն:

Եվ այս հրամանը լսելով գավառների  
դատավորները, գործադրում են այն՝ մեծ  
ներություն և սրտմոլություն պատճառելով  
եկեղեցուն: Բռնելով նորահավատներին՝  
պարսկական կրոնից քրիստոնեության  
դարձածներին, սաստիկ և դառն տան-  
ջանքների են ենթարկում: Իսկ աստվածա-  
լին օգնակությունը ամրապնդում էր  
նրանց սրտերը՝ համբերելու համար սրի  
և հրի, խեղդվելու և փայտի տանջանքնե-  
րին ու նահատակվելու հավատքով, սիրով  
և քաջությամբ:

Այդ ժամանակ Վրաց աշխարհում գիև-  
վորական ծառայության մեջ Մանանդիս  
անունով մի պարսիկ կար, Ռաժիկ աշ-  
խարհից և Միսրան տոհմից, որը քրիս-  
տոնյա էր դարձել վերանվանվելով Գրի-  
գորիս: Վրաց Երվանդ Վշնասպ մարզպա-  
նը բազում տանջանքների է ենթարկում  
նրան, գլխիվայր կախելով և քրածեծ անե-  
լով: Եվ անորենը այսպես չարչարելով

սրբին, չի կարողանում խախտել նրա հա-  
վատքը:

Այս մտածելով, որ նա երևելի մարդ է,  
կապանքներով ուղարկում է արքունի դո-  
ռը: Մոզպետը իմանալով, թե սուրբը շատ  
չարչարանքներ է կրել և չի ուրացել քրիս-  
տոնեությունը, խորհրդակցում է թագավո-  
րի հետ, թե ինչպե՞ս պետք է սպանել  
նրան: Թագավորը պատասխանում է. «Մի  
մարդ սպանել ես տալիս և շատ քրիստոն-  
յաներ են դրանից լինելու, որովհետև նրա  
մահը տեսնելով շատերը կթողնեն մեր  
հավատքը և նրանց Աստծուն կերկրպա-  
գեն»: Իսկ մոզպետը թագավորին պա-  
տասխանում է. «Մեր օրենքները թույլ չեն  
տալիս ապրելու հավատակորոյս ավագ  
տոհմիկ մարդուն»:

Եվ արքան հրաման է տալիս սպանելու  
երանելուն: Բայց նախ առչան է կանչում  
սրբին, մեծ պարգևներ և պատիվներ խոս-  
տանում, եթե դարձյալ երկրպագի երկրի  
տարերթներին՝ արեգակին, լուսնին, ջրին  
և կրակին, ապա թե ոչ՝ սպառնում է անա-  
վոր տանջանքների և դժոխակ մահվան  
դատապարտել:

Իսկ սուրբ Գրիգորիսը ավելի համար-  
ձակ դառնալով, բարձրաձայն ուրանում է  
նրանց բազմաստվածությունը և խոստո-  
վանում ու դավանում բարձրյալ Աստուծո  
րդի Քրիստոսի հավատքը:

Այն ժամանակ մոզպետը հրամայում է  
հավատարիմ մոզերին՝ տանել Գրիգո-  
րին մի ստանձին տեղ և սրով նահատա-  
կել:

Եվ նրանք, տանելով սրբին նահատա-  
կության վայրը, գլխատում են նրան մինչ  
նա փառաբանում էր ամենասուրբ Երրոր-  
դությանը՝ Հորը, Որդուն և սուրբ Հոգուն,  
որին և երկրպագելով գոհություն ենք մա-  
տուցում մենք այժմ և միշտ. ամեն:

**Հատված շարականից**

**Գոչեմք առ քեզ սուրբ նահատակ,  
Հողանիթեայ մարմնով հրեշտակ,  
Մարտիրոս սուրբ և վկայ,  
Որ սրոյ մահուամբ կատարեցար,  
Յորդոյ տօնիս քո յիշատակ՝  
Արեան սրբոյդ հեղման վտակ,  
Առ Տէր լիցի սուրբ պատարագ  
Պահել գմեզ միշտ անվտանգ:**

**Ա ս տ վ ա ծ ա տ ո ռ ք - Մ ա խ ո ծ**

Աստվածատուր-Մախոժը նույնպես, Գրի-  
գոր-Մանանդիս Ռաժիկի նման և նրանից  
ազդվելով, գրադաշտականությունից քրիս-  
տոնեության դարձած և քրիստոնեական

կրոնին հավատարիմ մնալու անհար նահատակված պարսիկ վկա է:

Սա Պարսկաստանի հեշտայում գալվառից էր, մոգպետի գալվալ և ինքն էլ մոգ, որ եկել և բնակվում էր Դվինում:

Պարսկաստանից Դվին գալու մանապարհին հանդիպում է արքունի բանակին, որ նա ակախառես է լինում Գրիգոր-Մանասիհի Ռաժիկի նահատակությունը:

Մախոժ մոգի վրա մեծ ազդեցություն է գործում քրիստոնյա դարձած պարսիկ նահատակի հրաշխանման համարձակությունը, որ իր դավանած ճշմարիտ կրոնի արգասիքն էր:

Մախոժ մոգի կենսագիր Ներսես բանանան սգս առթիվ հաղորդում է, թե «Սա (Մախոժը—Ն. Ա. Պ.) ... յայնմհետև զըղջմամբ ունէր զմոգութիւնն: Գայր անտի յաշխարհն Սրինեսաց, պարսպպելով յունկնդրութիւն սրբոց, և լեալ անդ սակաւ ամիս՝ հասանէ ի Հայս. և եկեալ յԱրարատ գալվառ՝ բնակէր յուտանի Հայոց ի Դուինն»:

Այսպիսով երևում է, որ Գրիգոր-Մանասիհի Ռաժիկի նահատակությունը խախտել էր Մախոժ մոգի համոզումները իր դավանած կրոնի նկատմամբ ու մեծ հետաքրքրությունն ստաշացրել քրիստոնեության նկատմամբ:

Սակայն Դվինում էլ Մախոժը շարունակում է կատարել իր՝ մոգի պարտականությունները, մինչև որ ակախառես է լինում մի հրաշքի, թե ինչպես է ս. Խաչը հանգցրնում մագդեգական կրակից բռնկված հրդեհը հենց իրենց տաճարի մեջ:

Այս դեպքից հետո արդեն Մախոժը քրիստոնյա է դառնում, մկրտվում է և վերանվանվում Հիզիարուզիտ, որ թարգմանվում է Աստվածատուր:

Իմանալով այս մասին, Դենշապոմ մարգապանը նախ բանտարկում է և ապա, տեսնելով, որ չի կարող նրան վերադարձնել իր հին հավատքին, նահատակել է տալիս Դվինում, 553 թ., քանի որ պարսկական կրոնի օրենքները մահապատիժ էին սահմանել իրենց կրոնը ուրացողներին:

Հայ եկեղեցին սրբի հիշատակը տոնում է Աքրահամ և Խորեն բահանաների և այլ սրբերի հետ, շարժական տոնով:

Հատված շարականից

**Տօն ճգնառարացն այսօր.**  
**Եկաք հաւատացեալք օրհնեցէք զԱստուած յիշատակի սուրբ վկայիցն:**  
**Որք զմահս իրեանց կանգնեցին յեքկրի աշտարակ հօօր,**  
**Յոր ապսիներաքս ամենեքեան**

**Եկաք հաւատացեալք օրհնեցէք զԱստուած յիշատակի սուրբ վկայիցն:**

**Դ ա վ ի թ Դ վ ն ե ց ի**

Հայաստանում արարական բանակի մեջ ծառայող մի պարսիկ ազնվական էր, Սուրհան անունով:

665 թ. դառնում է քրիստոնյա և վաշելում հովանավորությունը և հոգատարությունը ժամանակի կաթողիկոս Անաստան Ա Ակոմեցու և Գրիգոր Մամիկոնյանի իշխանի: Անաստան Ա կաթողիկոսը հոգ է տանում նորադարձի հոգևոր կրթությանը, իսկ Գրիգոր իշխանը լինում է նրա կնքահայրը և իր հոր անունը կրեքում նրան՝ վերանվանելով Դավիթ:

Դավիթ պարսիկը ամուսնանալով հաստատվում է Դվինում, որ և ապրում է մինչև իր կյանքի վերջը:

Դավիթ Դվնեցին նահատակվում է Աքրուլլանի ուռչիկանի ժամանակ, Դվինում, 700-ական թթ., մահմեդականությունը ուրանալու, ինչպես նաև քրիստոնեական կրոնին հավատարիմ մնալու համար:

Սարգիս Անատոնյանց եպիսկոպոսը և Մուշեղ ու Արտավազդ Մամիկոնյան իշխանները փառավոր հողարկավորություն են կազմակերպում Դավիթ Դվնեցու թաղման առթիվ և նրա մարմինը ամփոփում Աստվածատուր-Մախոժի գերեզմանի կողքին:

Հայ եկեղեցին Դավիթ Դվնեցու հիշատակը տոնում է ամեն տարի Վարազա ս. Խաչի կիրակիին հաջորդող երկուշաբթի օրը:

**Վկայաբանությունը.**—Յայնատուրք, Կ. Պոլիս, 1834 թ., Ա. 142—143:

Սա պարսիկ հոր և քրիստոնյա մոր գալվալ էր: Խորասան աշխարհից գալով Հայաստանի Արարատ նահանգ և, տեսնելով տեղի հավատացյալների բարի և սրբաաներ վարքը, հավատում է Քրիստոսին և մկրտվում երանելի Անաստաս կաթողիկոսից, իսկ մեծ իշխան Գրիգորը առնում է նրան ավագանից և իր հոր անունը դնում նրան՝ Դավիթ կոչելով:

Դրանից հետո Արշահան անունով մի ամիրա է գալիս Դվին և, լսելով Դավթի մասին, թե առաջ մահմեդական էր և այժմ քրիստոնյա է դարձել, կանչում է նրան իր մոտ և ստիպում ուրանալ Քրիստոսին և կրկին իր նախկին հավատքին դառնալ խոստանալով նրան տալ պատիվ և իշխանություն: Եվ էրք տեսնում է, որ Դավիթը չի ցանկանում դարձի գալ, հրամայում է բանտարկել, չարչարել և բաղցի ու ծարալի ենթարկել, իսկ սուրբը ոչ միայն չի

արտնջում, այլև ուրախությամբ օրհնում է Քրիստոսին:

Ապա ամիրան հրամայում է խաչել նրան փայտի վրա և գեղարդով խոցել սիրտը: Այդպես նա ավանդում է իր հոգին Աստծուն արեգի 23-ին (մարտի 31-ին):

Եվ հայոց Անաստան կաթողիկոսը բազում եպիսկոպոսներով ու քահանաներով իջեցնում են նրա մարմինը խաչից և մեծ շուքով թաղում նշանավոր վայրում ու ամեն տարի մեծ տոն նշանակում այդ օրը: Իսկ խաչը տանում են Ջագ գյուղաքաղաք և հննգնեցնում եկեղեցում, որը և շատ հրաշքներ է կատարել Քրիստոսի գորությանը նրանց համար, ովքեր որ հավատով ապավինում են սուրբ Դավթի բարեխոսությանը:

**Հատված շարականից**

**Լցեալ աստուածային շնորհիւ երանելի սուրբ ճգնաւոր տէրդ Դաւիթ. եւ անուն քաջութեան քո ել յերկինս. Յուրախութիւն հրեշտակաց եւ ընդ աշխարհս ամենայն ցնծութիւն մարդկան:**

**Վ ա հ ա ն Գ ո ղ թ ն ա ց ի**

Վահանը որդին էր Գողթնի նախարար Խոսրով իշխանի: Ը դարի սկզբին մանուկ հասակում գերի տարվելով Դամասկոս, մեծանում և կրթվում է իսլամ կրոնի ազդեցության տակ և վերանվանվում Վահապ:

Երբ 719 թ. Հովհաննես կաթողիկոս Օձնեցին այցելեց Դամասկոսի ամիրայետին, վերջինս թույլատրեց գերադարձ հայերի համար: Վահանը ցանկացավ օգտվել այդ առիթից, սակայն Օմար ամիրայետը սիրում էր նրան և չցանկացավ բաժանվել նրանից և միայն թույլատրեց գնալ իր հայրենի երկիրը՝ շուտով վերադառնալու պայմանով:

Հազիվ էր Վահան Գողթնացին Հայաստան հասել, երբ 720 թ. փետրվարի 10-ին մահանում է Օմար ամիրայետը: Վահանը, օգտվելով առիթից, չի կատարում իր խոստումը և ամուսնանալով Սյունյաց հարգեն նախարարի դստեր հետ, հաստատվում է իր հայրենի երկրում, ուր և ապրում է շուրջ 10 տարի:

Օմարին հաջորդող Հեշմ ամիրայետը լսում է Վահանի քրիստոնյա դառնալու մասին և սկսում է փնտրել նրան՝ կրկին իսլամ դարձնելու համար:

Վահանը մի առ ժամանակ ապրում է ծայրված, թափառաշրջիկ, կրոնավոր է դառնում և շրջում Հայաստանի վանքե-

րում, բայց ի վերջո բռնվում է Մրվան ուսիկանի կողմից և նահատակվում 737 թ.:

Նահատակությունից 7 տարի հետո Արծկեի Երաշխավորաց վանքի վանահայր Արտավազը վարդապետը գրում է Վահան Գողթնացու վկայաբանությունը և «Կարգեալ նշանակեաց տօնախմբել գլիշատակ սրբոյն Վահանայ ի նոյն ատր կատարման իւրոյ»:

Նահատակ սրբին նվիրված մի գողտրիկ շարական է գրում նաև նրա քույրը՝ շարականագիր-երածիշտ Խոսրովադուխտը:

Հայ եկեղեցին Վահան Գողթնացու հիշատակը տոնում է ամեն տարի շարժական տոնով, ամուսնը կամ ծնունդը:

**Վկայաբանությունը.**—Յայսմատրք, Կ. Պոլիս, 1834 թ., Ա. 138—139:

Քրիստոսի սուրբ վկա Վահանը Գողթն գավառի Խոսրով իշխանի որդին էր: Երբ Արդյմելիքի հրամանով այլազգիները հայոց իշխաններին լցնում են Նախիջևանի փայտաշեն եկեղեցին և այրում բոլորին, երկիրը անտեր համարելով, ասպատակում են Հայոց աշխարհը և շատերին գերության տանում: Գերիների մեջ էր Վահան անունով մի մանուկ, որին տանելով Սամարա, ուման են տալիս: Մանուկը փայլուն կերպով սովորում է հազարացիների գիտությունը և դառնում արքունիքում դիվանդարի և դարապետ:

Երբ Օմարը դառնում է հազարացիների իշխանը, բարեմիտ է լինում արաբ արքունիքը քրիստոնյաների և մանավանդ հայերի նկատմամբ: Այդ ժամանակ գերիներից թույլատրվում է տուն վերադառնալ:

Տուն է վերադառնում նաև Վահանը, որին օտարները Վահապ էին անվանում, և, գալով Գողթն գավառ, ամուսնանում է Սյունյաց օրիորդներից մեկի հետ և համարձակ խոստովանում քրիստոնեությունը, որը մոռացել էր մանուկ ժամանակվանից ի վեր:

Ապա կրոնավոր է դառնում և, ապրելով մեծ ճգնությամբ, ցանկանում է մահանալ մարտիրոսությամբ:

Այդ օրերին մահանում է հազարացիների իշխան Օմարը և իշխան է դառնում Շաման: Վահանը գնում է արքունիք, համարձակությամբ կրոնափոխ և քրիստոնյա դառնալու, ներկայացնելով իշխանին իր խնդրագիրը:

Իշխանը խոստանում է նրան մեծ նվերներ և պատիվ, եթե հրաժարվի իր մտադրությունից, ապա, տեսնելով Վահանի անասանությունը քրիստոնյա կրոնի նկատմամբ, հրամայում է սրախողխող անել:

Եվ հանելով նրան բաղաբից դուրս, գլխատում են տրեզի 20-ին (մարտի 28-ին): Եվ նրա մարմնի վրա լույս է ծագում: Քրիստոնյաները, գաղտնի վերցնելով նրա մարմինը, պատվով թաղում են նշանավոր վայրում, և սրբի նշխարները շատ բժշկություններ են անում:

**Հատված շարականից**

**Հարմանայի է ինձ քան գերզս երածշտականաց ձայնս,**

**Ռդրոց քոց հնչմունք. Ով երանելի տէր Վահան ընտրեալ Սատուծոյ:**

**Հարհուրեցուցանէ քո նզնութիւնդ գմարմնոյս բնութիւնս,**

**Իսկ դու առաել գտար. Ով երանելի տէր Վահան սիրող Քրիստոսի:**

**Ս ա հ ա կ և Հ ա մ ա գ ա ս ս յ Ա թ թ ու ճ ի ն է ր**

785 թ. արար ամիրապետության գահին է բազմում Մուսան, որը Խազմ ոստիկանին ուղարկում է Հայաստան՝ պատվիրելով դաժանորեն հաշվեհարդար տեսնել 10 տարի առաջ արաբների դեմ կատարված սպառնաբանության մասնակիցների նկատմամբ:

Խազմ ոստիկանը առաջին հերթին ձերբակալում և մահվան է դատապարտում Գագիկ Արծրունու երեք որդիներին՝ Համագասայ, Սահակ և Մերուծան Արծրունիներին:

Մահապատժից առաջ նրանց առաջարկվում է ընդունել իսլամությունը, փրկվելու համար, մի բան, որ առաջարկվում էր սեներ մի քրիստոնյա դատապարտյալի:

Մերուծան Արծրունին ընդունում է առաջարկը և ազատ է արձակվում: Իսկ Համագասայ և Սահակ Արծրունիները Սատուծո նշմարտությունը չեն կարողանում փոխել ստության հետ և նահատակվում են Քրիստոսի սիրո համար, 786 թ.:

Հայ եկեղեցին նրանց հիշատակը սկսել է տոնել շատ հին ժամանակներից, Եսայի Ա կաթողիկոսի (Ը դար) հրամանով:

**Վկայաբանությունը.**—Յալամատրք, Կ. Պոլիս, 1834 թ., Ա. 155:

Սահակը և Համագասայը Արծրունյաց իշխանական մեծ տոհմից էին:

Իսրայելացիների իշխանը լսելով, թե նրանք ցանկանում են հույների հետ դաշինք կնքել, առաքում է Ապուսանի որդի Ափշինին, որպեսզի նենգությամբ բռնի նրանց: Իսկ նա, գալով Աղվանից աշխարհի Պարտավ քաղաք, իր մտը է կանչում

Համագասայ, Սահակ և Մերուծան Արծրունի եղբայրներին: Նրանք միամտաբար գնում են:

Ափշինը նախ սիրալիք ընդունում է նրանց և ապա կալանավորում և ստիպում ուրանալ Քրիստոսին, խոտուսնալով մեծ իշխանություն:

Մերուծանը, չկարողանալով տանել նեղությունը, ուրանում է և, նրանից մեծ իշխանություն առնելով, գալիս Հայաստան: Այս լսելով Գրիգոր Մամիկոնյան իշխանը դուրս է գալիս նրա առաջ և սպանում նրան:

Իսկ սուրբ Համագասայը և սուրբ Սահակը Քրիստոսի անվան համար բազում շարժարաններ կրելով՝ նահատակվում են սրով և արժանանում նահատակության պատկին անկի 1-ին (ապրիլի 8-ին), Քրիստոսի փառքի համար:

**Հատված շարականից**

**Որ օրհնես յանմարմնական զինությունեանց Վերագոչեմք առ քեզ Տէր.**

**Աղօթիք սրբոց մարտիրոսաց Խնայեա ի ժողովորդս քո միայն մարդասեր:**

**Ս ա հ ա կ և Հ ո վ ս ե փ Կ ա բ ն եց ի ն է ր**

Հագարացի մի իշխանագուն Կարինում ամուսնանում է մի քրիստոնյա կնոջ հետ՝ թույլատրելով նրան մնալ քրիստոնյա և երեխաներին էլ քրիստոնյա դարձնել: Ունենում են երեք տղա՝ Հովսեփ, Սահակ, իսկ երրորդի անունը չի հիշվել: Երկար ժամանակ արանք ապրում են խաղաղությամբ, մինչև որ Հովսեփը ամուսնանում է և ընտանիք կազմում: Այդ ժամանակ նրանց՝ իսլամ հոր զավակներ լինելը խոսակցությունների ստարկա է դառնում:

Փոքր որդին փախչում է հյուզանդիա: Հովսեփը և Սահակը հույնացե պատրաստվում են փախչել հույների երկիր, Բուրդ Մամիկոնյան իշխանի օգնությամբ, սակայն նրանց մտադրությունը իմացվում է, և ձերբակալվում են ու բռնադատվում իսլամությունը ընդունելու:

Երկուսն էլ նահատակվում են՝ քրիստոնեությանը հավատարիմ մնալու համար, 808 թ.-ին:

Մինչև վերջերս քրիստոնյա և իսլամ ժողովուրդները Կարինում ցույց էին տալիս և հարգանք մատուցում նրանց գերեզմաններին:

Հայ եկեղեցին այս սրբերի հիշատակը տոնում է Հոգեգալստյան Գ կիրակիին նախորդող երեքշաբթի օրը:

**Վկայաբանությունը.**—Յալամատրք, Կ. Պոլիս, 1834 թ., Ա. 40:

Կարենցի արաք հոր և հայ քրիստոնյա մոր երկու եղբայրներ էին: Մայրը նրանց սովորեցրեց քրիստոնեական կրոնով ապրել և սկսեցին: Եվ արաքների հզորանալով ու քրիստոնյաների թուլացումով մտածում են գնալ Կոստանդնուպոլիս, հունաց Լևոն կայսեր մոտ, ու բացարձակապես պաշտել քրիստոնեությունը:

Եվ այս իմանալով Կարինի քաղաքապետը, բռնում է նրանց և բանտարկում ու երկար օրեր խոշտանազումներով ստիպում ուրանալ Քրիստոսին և մահմեդական դառնալ, մեծ նվերներ և իշխանություն խոստանալով, սակայն չկարողացավ համոզել նրանց:

Նրանց հայրը գալիս է բանտ, խնդրում է, լալիս և աղաչում, որ համաձայնվեն, սակայն նրանք հաստատուն են մնում իրենց հավատքին:

Եվ սրով գլխատում են նրանց արաք 15-ին (հունվարի 22-ին): Սուրբ Աստուծաների մարմինների վրա լույս է ծագում, և իշխանը, սարսափելով, հրամայում է քրիստոնյաներին պատվով թաղել նրանց:

**Հատված շարականից**

Ով երանեալք սուրբ վկայք,  
 Որք արժանի եղէք  
 Մարմնով և արեամբ դասակից լինել  
 գուարթնոց երկնից:  
 Քաղաքավարեալք ի մարմնի  
 Եւ հետևողք Ռդոյն Աստուծոյ  
 Մարմնով և արեամբ դասակից լինել  
 գուարթնոց երկնից:

**Գ ո հ ա ր ի ն յ ա ն ք**

Մահմեդականության օրերը մահվան էր դատապարտում իսլամությունը ուրացողներին: Այս օրերին գոհ գնացին Գոհարինյան վկաները:

Նրանց հայրը, Սեբաստացի Դավիթ անունով հայ մի իշխանավոր, գերության ժամանակ իր անդրանիկ որդու՝ Արևի հետ ստիպված էր ընդունել իսլամությունը: Սակայն նրա կինը քրիստոնյա էր մնացել և այդ կրոնով էլ դաստիարակել իր մնացած չորս որդիներին՝ Գոհարինոսին, Ռատիկոսին, Ծամիդոսին և Տուքիկոսին, որոնք մեծանալով զինվորական ծառայության մտան Ալիքան իշխանի բանակում:

Անարգվելով իսլամ զինվորների կողմից, նրանք մի քանի անգամ ենթարկվեցին հարցաքննության և ապա նահատակվեցին իրենց կրոնին հավատարիմ մնալու համար: Գոհարինյանց կարգին է դասվում նաև

Գոհարինոսի որդի Թեոդորոսը, որ նույնպես նահատակվել է նույն շրջանին հանուն Քրիստոսի:

Հայ եկեղեցին Գոհարինյանց հիշատակը տոնում է ամսույա շրջանին, Ստեփանոս Ուլենցու հետ միասին:

**Վկայաբանությունը.**—Յալամատրք, Կ. Պոլիս, 1834 թ., Բ 47—49:

Այս ազնվական վկաները հայոց Սեբաստիայի երկրից էին: Իրենց հորը՝ Դավթին, և անդրանիկ որդուն գերեցին այլազգիները և իսլամ կրոնին դարձրեցին: Իսկ նրանց մայրը հաստատուն մնաց Քրիստոսի հավատքին ու բարեպաշտությամբ սնեց իր որդիներին:

Նրանք, քանի որ արիության տեր մարդիկ էին, զինվորներ դարձան այլազգի բրնձավոր Ալիքասանի մոտ, որը Դանշմնյաց ազգից էր և տիրում էր Սեբաստիայի և Պոնտոսի կողմերին: Նա զազանաբարո, արյունախում և քրիստոնյաների դեմ մոլեռանդ հակառակորդ մի մարդ էր:

Եվ ոմանք Գոհարինյանների մասին չարախոսեցին Ալիքասանի ստաջ՝ ասելով, թե նրանք այլազգիների որդիներ են և թողնելով մեր օրերը, քրիստոնյա են դարձել և զարշում են մեր կերակուրներից ու մեզ հետ չեն աղոթում: Եվ նա զինվորներ ողարկեց ու հրամայեց իր սոջև բերել ու հարցաքննել նրանց, թե արդյոք քրիստոնեությունն են ընդունում:

Հարցաքննության ժամանակ Գոհարինյանների ավագ եղբայրը չթողեց սրբերին, որ պատասխանեն, այլ ինքը, որ իսլամ էր, պատասխանեց՝ ասելով, թե իրենք նույն հավատքն են պաշտում, ինչ որ Ալիքասան զորավարը: Եվ իշխանը ազատ արձակեց նրանց, ու սրբերը տրտմությամբ տուն գնացին, որովհետև չէին խոստովանել Քրիստոսին ու այս քանի համար մեղադրում էին իրենց ավագ եղբորը:

Ռատիկոսը մտնում է վանք և կրոնավոր դառնում:

Օրեր հետո չարախոսները դարձյալ մատնում են նրանց բռնակորին՝ ասելով, թե դու նրանց ազատ արձակեցիր, սակայն այժմ ավելի են անարգում մեր օրերը և կրոնը: Ալիքասանը կրկին սրբերին իր մոտ է կանչում և հարցնում նրանց քրիստոնեության մասին: Սուրբ Ռատիկոսը համարձակությամբ պատասխանում է. «Քրիստոնյա էիք, եկք և կլինե՞ք», ու սկսում է անարգել իսլամների օրերը և կրոնը:

Բռնակորը հրամայում է հարվածներ տեղալ սրբի բերանին և լեզուն կտրել: Եվ սուրբը գոհ էր, որ հարվածում էին իրեն, սակայն լեզուն չկտրեցին: Եվ այնուհետև

բոլոր սրբերն էլ խոստովանեցին Քրիստոսին:

Բռնալորը հրամայում է Գոհարիների մինչև մեջքը թաղել գետնի մեջ և ապա նետերով խցել նրան:

Եվ, մինչ գետնին էին փորում, զինվորները բերում են սրբերի կանանց, երեխաներին ու իրենց ողջ հարստությունը: Իշխանը փորձում է համոզել սրբերին, որ ուրանան իրենց հավատքը և ազատ արձակվեն, սակայն նրանք համբուրելով միմյանց, քաջալերում էին իրար, հաստատա մնալու Քրիստոսի հավատքին:

Եվ տնօրենը բարկանալով հրամայում է Գոհարիներին գցել ջրի հեղհեղատի մեջ և իր մոտ կանչելով Տուկիտոսին և Ծամիդեսին, ասում է. «Այդ ողջ հարստությունը, որ տեսնում եք, և այլ շատ հարստություններ ես ձեզ կտամ, Գոհարիներին իշխանությանը կփաստալորեմ և Ռոտիկոսին կողմնեմ իր կտաբին, եթե միայն լսեք ինձ և մահմեդական դառնաք»:

«Թող այդ բոլորը քեզ լինեն,—ասում են սրբերը,—և մենք քեզ ծառայենք խոնարհությամբ, միայն թե թող որ մենք քրիստոնյաներ մնանք, ապա թե ոչ, մեզանից ուրիշ ոչինչ մի հարցրու: Քրիստոնյա ենք և ինչ որ ցանկանում ես, արա»:

Եվ իշխանը բարկանալով հրամայում է բաժանել նրանց հարստությունը, կանանց և երեխաներին իր զորապետներին ու սրբերին էլ սրախողխող անել:

Իսկ այնտեղ եղող հավատացյալները գաղտնաբար վերցնում են նրանց մարմինները և թաղում:

Եվ այս տեղի ունեցավ հայոց 524 թվականին (1075 թ.), հրոտի 24-ին (հուլիսի 30-ին):

Հատված շարականից

Չարիական մահ սրբոց քոց Քրիստոս  
Ընդ երկնային զօրսն այսօր երգակցեալ  
տօնեմք  
Որք հանդիսանան ընդդէմ բռնութեան  
թշնամուն:  
Անճարմինք ի մարմնի ցուցան  
Գեր ի վերոյ սրոյ և հրոյ տանջանաց  
Չպատուական մահս իրեանց ընծայեցին  
քեզ Քրիստոս բանաոր զենմունք:

Ինչպես արդեն նշել էինք մեր հոդվածի


ստաջարանում, մեր նպատակը չէր բանասիրական ուսումնասիրություն կատարել, այլ պարզապես հայ հավատացյալներին ներկայացնել մի փոքրիկ շարադրանք՝ հիմնականում օգտվելով վարքաբանական գրականությունից:

Հարմար մի ստիժով այնքի հաճախմանը են պիտի անդրադառնանք մահ մեր «եկեղեցու վարդապետների» վարքերին, ինչպես մահ այն սրբակրոն անձանց, որոնք դեռևս չեն դատվել հայ եկեղեցու տոնելի սրբերի կարգը:

Օգտագործված գրականության ցանկ

«Յայտնատրք», Կ. Պոլիս, 1834 թ.:  
Թորգոմ արք. Գուշակյան, «Սուրբք և տօնք Հայաստանեացք եկեղեցոյ», Երուսաղեմ, 1939 թ.:  
Մաղաքիա արքեպ. Օրմանյան, «Ազգապատմութիւն», Ա, Բեյրութ, 1959 թ.:  
Գարեգին եպ. Խաչատուրյան, «Աշխարհի լոյսն ի Հայս», Փարիզ, 1936 թ.:  
Հ. Մկրտիչ Ավգերյան, «Լիակատար վարք և վկայաբանութիւնք սրբոց», Վենետիկ, 1810—1815 թ.:  
«Վարք և վկայաբանութիւնք սրբոց», Բ, Վենետիկ, 1847 թ.:  
Տօնացոյց նախապէս կարգեալ և սահմանեալ սրբոյն Սահակայ Պարթևի հաշրապետին հայոց ըստ սահմոյթեան Հայաստանեաց սրբոյ եկեղեցոյ, և զկնի յոգնաջան կարգաւորութեամբ և աշխատասիրութեամբ Տեսուն Սիմէօնի Սրբազան կաթողիկոսին յերկուս հատորս բաժանեալ», Էջմիածին, 1887 թ.:  
«Լարոսքեալ դիւանագիր դարի Եղևիոյ թողթ Արգարոս», Վենետիկ, 1868 թ.:  
«Եւսեփոսի Վեսարացոյ պատմութիւն եկեղեցոյ, Վենետիկ, 1877 թ.:  
Մովսէս Խորենացի, «Հայոց պատմութիւն», Երևան, 1961 թ.:  
«Մշտնջենատր Պարգատմար յոր յարի և Տօնացոյց, աշխ. Հ. Վրթանէս վրդ. Ասկերեանի», Վենետիկ, 1782 թ.:  
«Ազգաբանագեղալ պատմութիւն», Թիֆլիս, 1882 թ.:  
Եղիշե, «Վարդանի և հայոց պատերազմի մասին», Երևան, 1971 թ.:  
Գալուստ Տեր-Մկրտչյան, «Գրիգոր-Մանգալի Ռաժիկ միհրան տոհմից», Վաղարշապատ, 1902 թ.:





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Իրաքի հայոց թեմի առաջնորդ տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանին արքայական պատիվ շնորհելու առթիվ . . . . .	3
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Կարապետ Սյուլահյանին ա. Գրիգոր Լուսավորչի շքանշանով պարգևատրելու առթիվ . . . . .	5
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Անդրանիկ Անդրեսայանին ա. Գրիգոր Լուսավորչի շքանշանով պարգևատրելու առթիվ . . . . .	7
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Երվանդ Տեմիրճյանին ա. Գրիգոր Լուսավորչի շքանշանով պարգևատրելու առթիվ . . . . .	9
ՄԱՅՐ ԱԹՈՒՌՈՒՄ—Եկեղեցական քեմ. լուրեր . . . . .	11
Ա. Հ.—Տիրամայր Սիրանուշ Պաղճյանի մահվան տարելիցը . . . . .	16
Գրախոսություն—Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան, «Ասագ շարաթ», 208 էջ, Բեյրութ, 1974, տպարան Տոնիկյան և որդիք . . . . .	18
ՆԵԿՏԱՐԻՈՍ ՊԱՏՐԻԱՐԻ Կ. ՊՈՒՍՈՑ—Յաղագս տառնի սրբուն Թեոդորոսի . . . . .	24
Հ. Ս. ԱՆԱՍՏԱՆ—Հայոց մոլորական համարված գրքերն ըստ լատինական մի հին ցուցակի . . . . .	27
Ա. Շ. Մնացականյան—ԺԶ—ԺԷ դդ. ստացված բանաստեղծ Գրիգոր Վանեցին և նրա անտիպ տաղերը . . . . .	40
ԱՌԱՔԵՆ, ՊԱՏՐԻԿ—Նոր նյութեր խաչքարերի պատմության առնչակից . . . . .	46
ԵԶՆԻԿ ԱԲԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ—Հայաստանյայց եկեղեցու տեղական տոնելի սրբերը . . . . .	49

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»  
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie. URSS

Հանձնված է արտատրության 20/X 1975 թ.: Ստորագրված է տպագրության 14/XI 1975 թ..  
Տպագրական 4 մամուլ + 1 ներդիր, թուղթ 80x84<sup>1</sup>/<sub>8</sub>, պատվեր 765

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1975 թ.